

Բացին

Գրքեր

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌՈՒԵՍՏ

1969, ՅՈՒՆԻՍԿՈՒՍԻ ԹԻԻ 1

Designed by A.R. G...

باكسين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارتين كارنيك قزائجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն
 ԱՍՍԱԳԻՐ
 ԿՐԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐԹԻՍՏԵՐ

ԱՍՏԻՉ ԽՄԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՄԱԳԻՐ
 Գ. ՄԱԳԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԳԱՄՆԵՐ
 Ե. ԳԵՂԱՐԳ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ
 Փ. ԱԹԱՐԵԱՆ

ՀԻՍՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ
 † ԵԳ. ՊՅԱԶԵԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Բ. ԿՌԱՆԵԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Ն. ՉԱՐԿՈՒՏԵԱՆ
- ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ
- Ա. ԱՐԾՐՈՒՆԻ
- Վ. ԹԷՔԵԱՆ
- Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ
- Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ
- Պ. ՄԱԳԵԱՆ
- Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ
- Գ. ԹԱԳՈՒՈՐԵԱՆ
- Լ. ՄԿՐՏԶԵԱՆ
- Փ. ՊՈՒԱՏԵՅՐ
- Ա. ՍԱՀԻՆԵԱՆ
- Բ. ՓԱՓԱԶԵԱՆ


.....
 ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

Խմբագրատեղամ հասցե

G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban

Հեռագրային թիւ 296898

digitised by 165-2022 A.R.A.



Բազմը

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Ը. ՕՍԿԻ, ԹԻԻ 1

ՅՈՒՆԱՅՈՒՆ 1969

ՊԵՐՏԻՐ

Բ. ԿՈՒՆԵԱՆ

ԴԱՐՁ ԴԷՊԻ ԱՐԵԻԸ

Կուզե՛ք շարժիլ, ելլել անկողնե՛ն: Ընդդիմադիր ուժ մը կը ֆաշէ զինք վար: Արեւը էութեամբ մէջ: Հողին բոյրը: Արեւը արմատին մէջ. տերեւնե՛րուն, նարինջներուն, շաքարեղէնին, հացին մէջ:

Իրեն թուեցաւ, որ դար մը ամբողջ ֆնացած է: Կեանքը շարունակած է ընթացքը. ունեւ մեռեր են, ուրիշներ ծներ: Եզանակները յաջորդեր են իրարու: Ինք ֆնացեր է դար մը ամբողջ:

Կը զգայ, որ երէ փոզոց իջնէ, պիտի չճանչնայ անցորդները: Նոր մարդիկ, անծանօթներ: Ամէն ինչ փոխուեր է: Միայն արեւը մնացեր է նայնք: Աչքերը կը բանայ նոր աշխարհի մը վրայ: Միայն արեւը նայն է: Դեղին ու խոշոր արեւը: Դեռ երէկ մտեր էր անկողին, խնճափէ մը դարձին եւ դար մը ֆնացեր է:

Աչքերը յառած են առաստաղին: Ճերմակ կուտութիւն, որ կը պարփակէ բոլոր գոյներու եւ կիւսարներու հրաշքը, եւ դեռ չճանաչած մեռելու տեսքը: Պիտի կրնայ լեզուի ծանօտեան գոյութեամբ կոչել բառերը, որ պիտի սենտեմ իր զգացումը: Իր ուրախութիւնը: Ուրախութիւնը լինելու,

Handwritten notes:
ՀԱՅԿ
ԳՐԱԿԱՆ

կեանքին իշխելու: Սեւեռել ինքզինքը, Ոչանագրեբու մամ, Նեղոսի օղ-
տին վարդագոյն, ճերմակ կամ սև կրանիթին վրայ: Փորագրել խորը,
որպէսզի բարբարոսներն ու ժամանակը չկարենան քանդել: Եւ նախանձը:

Պառկած անկողնին մէջ, աչքերը յառած առաստաղին: Սեւեռել:
Հեզնամքը կեանքին: Սեւեռել ինքզինքդ արուեստի երկերուն մէջ: Բայց
արուեստի երկը յաւետ կայուն է, շարժումէ գույլ: Այս յաւետ յառող աչ-
քերը չեն շնչեր: Մարմարը պազ է ու մահ կը թելադրէ: Հեզնամքը կեան-
քին: Ինք կը բազձայ, որ սրբիւղ, միշտ նորագունդ կեանքը բռնէ ու յա-
լիւեան պահէ ու շարունակէ: Պատրանքը անմահութեան:

Նեղոսի հովիտը: Կը յիշէ, երկա՛ր, երկա՛ր: Իր ժամանակին մէջ:
Որքան ապրած է հոն: Փախտեմական բան մը կայ հոն: Ազբիւր մը՝ որ ամ-
մահ է: Եւ այդ ազբիւրը յոյսի ազբիւրն է: Կարօտ մը խորերէն կը գա-
լարուի, կը պայթի արեան մէջ ու կը ցայտէ: Արեւը էութեան մէջ: Ու
խօրունկ ձայներ վարը: Կանաչ հովիտը, գետին գիծը: Հերմակ քիծը ա-
ռագաստին, արմաւենին հովին մէջ: Կեանքը: Կը զգայ մոլեգօրէն, մե-
շող տենդ մ'իմչպէս: Ապրիլ, վտանգաւոր կերպով, խիզախելով, հօր
գրկախառնումի մէջ ընկնելով: Բանտել գուցէ, մահացնել, եւ նոր կերպ
ու սէրեր կեանքի կռելի...



Նշածու, սեւ աչքերը Թուք Անխամոնի շիրմի սրմերուն: Գոյններու
մաքրութիւնը, գծերու զգայնութիւնը, կեանքի ծարուր: Արեւը, որ չի տես-
նրիք՝ բայց միշտ ներկայ է, կը ճանաչէ ամէն ինչի մէջ: Կը թրծէ, կը
բիւրեղացնէ, կը պայծառացնէ: Թափանցիկ եւ: Տիեզերքը կ'անցնի մէջէդ,
կը ծփաւ:

Մթին զանգուածը տաքարին, յոյսին մէջ ձուլուած: Խորհրդաւոր
խորշերը, որ կը քաշեն քեզ: Առնական օպտիկա՛ն՝ դէպի անհունը: Մեզուն՝
լուստի մէջ: Սեւ սյարեգօտ, սափարն ուսին, ազբիւրէ դարձիմ: Մէրը ցօ-
րենի արտին մէջ, երկու արմաւի փոխան: Կեանքը, կեանքը:

Ախենաթօն արքան արեւը խոսացուցած է սկաւառակի մը մէջ ու կը
պաշտէ գայն: Մեծ անապատէն կը քալէ դէպի անհունը, հոգիին մէջ ձայ-
ներ, կը քալէ դէպի ակը արեւին: Ու գիւնով է կեանքով, փիերուն կը զգայ
սէրը Նեֆերտիթի մարմնին: Ուրիշ ի՛նչ: Թռեբուն մէջ կրծոզ կրակ մը:
Դէպի անհուն...

Նեֆերտիթի թագուանին Նեղոսի ջրերէն կ'ելլէ, արեւը կը թրծէ ա-
նոր մարքը ու ալպաստորէ ամանի մը նման է հիմա: Կիտաթափանց: Աման
ծաղկի, բոյրերու ու գիւնի: Թութմոսիս արձանագործը կ'ուզէ բռնել
փախչող ճառագայթը, փխրուն գիծը, դալկացող երանգները, երիտասար-
դութիւնը, որ հիմա է, հիմա՛: Պահ մը սիրայն:

Թութմոսիս կ'ատէ թաղմանական արձանները, մեռած, մահը ան-
տոզ: Կ'ուզէ կեանքը բռնել: Կեանքը՝ որ պաշարած է զինք, ողորած է
էութիւնը: Աչքերը պայծառ գոյներ կը տեսնեն, ձեւեր՝ որ սհա ուրիշ ձե-
ւերու մէջ կը հոսին: Արեւը՝ որ կը ճանաչէ, ամէն ինչ է, սերմը կը պայ-

քեցնէ, կը տաքցնէ, կը տրտիցնէ, շունչ կու տայ, ցանկութիւններ կը բռնկեցնէ: Կը ձուլէ ու կը հալեցնէ, ստուերին ծնունդ կու տայ եւ անով կը շեշտէ ձեւերն ու ծաւալները, գիշերն ու ցերեկը: Սրկրագունտը կը կախէ անհունին մէջ: Քեզ եւ զիս:

Թուք-մօսիս արձանագործը կ'արքեմայ Նեֆերոփիփի աչքերով ու արեւ է էութեան մէջ...



Պառկած է անշարժ: Հեռուն, Նեղոսի Հովիտին մէջ: Նրիտասարգութիւնը հոն է: Իր առաջին սէրը, առաջին քերթուածը, առաջին զուակը՝ հոն են:

Հրաշքը մարդկային մտքին, որ ժամանակին մէջ էր ու առաջ կը սուտանի: Թէեւ անշարժ պառկած է, կը տարածուի միջոցին մէջ, անցեալին ու ապագային:

Դար մը ամբողջ քնացեր է: Մեկներ են շատեր, ծներ ճորերը. փոխւեր է կեանքը: Արեւը մնացեր է նոյնը: Վարը խորունկ ձայներ: Կեանքը կը շարունակուի:

Արեւը էութեան մէջ:

Բ. Կ.

Հոս Անճելոս



Ա Ռ Ա Ի Օ Տ

Երբ ֆայլերուդ կը լսեմ ճայնը մամբուն վրայ՝
Որ կը տանի մինչեւ սրտիս գազամիջն անհուն,
Կը շփոթեմ քեզ բայրին հետ ծաղիկներում,
Երբ լայսին մէջ կարծես հոգիդ կը շողշողայ:

Երբ լռութեան լարերուն վրայ զիս կը կանչես,
Հին ազօթֆի մը մրմունջով, ինձ կը քուի
Թէ մանկութեան կայսրդավառ այն տեսիլքն ես՝
Որ կեանքին հետ մինչեւ վայնանըս կ'երկարի:

Ինչ որ ըլլաս, երա՞գ, խորհո՞ւրդ, կրկներեւո՞յ՞ք,
Կը հետեւիմ արշալուստած մերկ ստֆերուդ,
Որ կը տանին մինչեւ հանգիստն իմ օրերուս,

Երբ ձեռքերուս վրայ բօշնած, քախանձագին
Հարցումը դառն, անկարելի եւ խորատոյգ
Համակերպումն է առօրեայ առաւայանքին...

Զ Ի Ի Ն

Զի՛ւն, ողջոյն քեզ յանուն սրտում անտաններուն
Եւ լինելուն ստանաբիւրեղ, յանուն սրտիս,
Անա՛ դարձեալ մամբաներուն վրայ գտայ զիս
Կարօտացեալ եւ մտքուն:

Զի՛ւն, որ կ'իջնես մառախլապատ երկինքէն վար,
Որ արեւին լոյսն է բօշնած եւ մահաբոյր,
Զի՛ւն, որ ամէն շիրմի համար անմեղ համբոյր՝
Կը բողբոջիս աստեղավառ:

Պիտի ծածկես լքուած քումբերն, եւ երբոր գայ
Բարի քոչուն մը տարագիր՝ պատուհանիս,
Թերեւս կեանքը տարփօրէն ընդգրկէ զիս.

Եւ դուն ըլլաս ուրախութեան ժպտուն վկայ,
Զի՛ւն, ո՛վ արցունքն եղնիկներու սիրատուչոր,
Զի՛ւն, որ կարօտն ես մանկութեան իմ հեռուոր:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՑԵԱՆ

ԽՆՃՈՅՔԷՆ, ՎՏԱՐՈՒԱԾԸ

Ամենայնից մեայն չն՞ կաշիք կեանքի՞ն. անձի կը
յամանալի՞մ անարդարութեան, եւ կը սուգուի՞մ անոր յա-
սակը. ծանր քարի մը պէս:

ԺԻՊԵՐ ԱԿՍՊՐՈՆ

Ա.

Պազ հով մը կը փչէր հրապարակի
կողմէն, երբ սկսաւ իջնել փողոցին զա-
ռիվարը: Մաշած վերարկուն ա՛յնքան
նոյնացած էր մարմինն, որ այլեւս չէր
կատարեր իր պաշտօնը եւ կը ձգէր որ
ծակտիկներէն ցուրտը թափանցէ մինչեւ
ոսկորները: Սակայն, հակառակ այս
անպատեհութեան, կը նախընտրէր ձմե-
ռը՝ որովհետեւ զոնէ վերարկուին հնա-
մաշ կերպար կը ծածկէր իր կարկու-
նըւած տարատը:

Անցաւ սինեմա Քափիթոլին առջե-
ւէն, առանց ակնարկ մը նետելու ցուցա-
դրուած չուսանկարներուն: Ծարժա-
նկարն ալ իրեն համար ուրիշ արդիւուած
զբախտ մըն էր: Կանգ առաւ սակայն
զբառան ցուցափեղկին առջեւ եւ ուշի
ուշով կարդաց նոր լոյս տեսած դիրքե-
րուն վերնագիրները: Գոհունակութեամբ
նկատեց որ տակաւին Պոտլէրի գործե-
րուն հաւաքածոն կը մնար իր տեղը,
կարծես կը սպասէր միայն իրեն: Օր մը,
իւր ձեռքերուն մէջ պիտի ունենար այդ
զանձը, տարփանքով պիտի դարձնէր

անոր թարմ էջերը, պիտի աւրանար ա-
նոր տխուր երգերուն կախարդանքով:
Գիրքը կ'արժէր տասնըհինգ ոսկի. ինք
արդէն իննստը էր ինը ոսկի, քառասուն
հինգ անգամ հետիտան երթեւեկելով
Տորայէն Պուրճ տանող ճամբան:

Յանկարծ տժգունեցաւ: Ի՞նչ կը
յուշար, ի՞նչ կ'երազէր, երբ անդին հի-
ւանդ զաւակը դեղի պէտք ունէր: Ծտա-
պով հետացաւ այդ գտանգաւոր եւ ա-
ռինքնող ցուցափեղկէն եւ արագարագ
քալեց դէպի կեդրոնական հրապարակը:
Սակայն կանգ չառաւ կառավարական
օֆոպիսաներու կայարանը, եւ ոչ ալ քիչ
անդին, այն նեղ փողոցին առջեւ, ուր
կը սպասէին Տորա զացող ինքնաշարժ-
ները, որոնք միայն տասը դրուշ կը պա-
հանջէին անձի գլուխ: Այդ տասը դահե-
կանը իրը չէր. ինք ոչինչ ունէր ներկա-
յիս. Պոտլէրի գործերը պիտի անցնէին
ուրիշի մը ձեռքը, եւ ինք պիտի շարու-
նակէր հետիտան կարելի Պուրճէն Նաւր
ոսանող երկար ճամբան:

Մտաւ դեղարան մը եւ ներկայացուց
դեղագիրը:

- Քսանըմէկ սսկի, - ըսաւ դեղա-
զործը:

Ինք դրոպանը ունէր ինը սսկի միայն,
Ի՞նչ ընել, որո՞ւն գիժեկ: Մտադրեց վե-
րադառնալ եւ կանխազմար մը խեղդել
Պ. Պարսիկեանէն, Հոգաբարձութեան
զանձապահ եւ յայտնի սեղանաւոր:
Բայց սարսափեցաւ անոր արճամարհող
նայուածքէն եւ Հեղձող խօսքերէն: Քա-
լեց դէպի տուն: Եւ քայլերուն տոջեւ
մայթը կը սահէր, կը դալարուէր յու-
սահատեցնող սողունի մը պէս. զորը
ժապաւէն մը, որուն վերջաւորութեան,
իր առջեւ, պիտի ցցուէր դառն ճակա-
տաղիբը:

Պա՛հ մը կանգ առաւ նահրի կամուր-
ջին վրայ, որուն աակը պզտոր ու դար-
շաճոտ Հեղուկը կը ծուլանար, կը դան-
դաղէր, կարծես ձերբազատուելու Հա-
մար իր Հոտէն, զոր մրի կը բաժնէր մօ-
տակայ բնակիչներու:

Ո՞ր երթալ, որո՞ւն գիժեկ: Խա-
նութեան ծանօթներ եւ բարեկամներ
ունէր այդ կողմերը. մարդիկ՝ որոնք
պիտի լմերժէին իրեն փոխ տալ այդ
չուժարը: Սակայն ինչպէ՞ս ուզել, ինչ-
պէ՞ս մուրալ: Ինք՝ որ իսկական աղքատ
մըն էր. ինք՝ որ աղքատութիւնը ընդու-
նած էր իբր Հոմանուհի, շունէր մուրա-
լու այդ ձիբքը, որ արուած էր ունեւոր-
ներուն:

Մտաւ ծանօթ դեղարան մը ամէնա-
լո՛վ: Արամիկը, ամէնէն պզտիկ աղան
Հիւանդ էր, սեւ ու ժպտուն աչքերով
մանչուկը Հիւանդ էր: Դեղազործը ծրա-
րեց պէտք եղած դեղերը եւ բարի ժպի-
տով մը ըսաւ.

- Պարոն վահրամեան, անհոգ եղէք:
Երբոր դրամ ունենաք վճարեցէք: Եթէ
ուրիշ բանի մը պէտք ունենաք, ինծի
դիմեցէք...

Դուրս ելաւ գինովի մը պէս: Եունչ
մը քաշեց, կարծես դատարանէ մը ւո-
զատ կ'արձակուէր: Թուցաւ այն ահա-
ւոր ձեռքը, որ կը ծանրանար սրտին
վրայ. կարծես յաղթանակ մը տարած
էր ճակատադրին դէմ: Նպարազանաւէ

մը զնեց պանիր, ձիթապտուղ, քամ-
ւած մածուն, Հացազործէն առաւ եր-
կու քիլօ Հաց ու Հասաւ տուն:

- Արամիկը այսօր շատ Հազաց, -
ըսաւ տիկին վահրամեան ամուսինը գի-
մաւորելով, - տաքութիւնը քիչ մըն ալ
բարձրացաւ. դեղ չկար որ տայի:

Վահրամեան դեղերու ծրարը եր-
կարեց կնոջը, ուտեստեղէնը տարաւ խո-
հանոց: Ուրախութիւն չկար տան մէջ:
Ջարեհ եւ Ջեփիւս, անկիւն մը քաշ-
ւած, իրենց դասերը կը պատրաստէին:
Անոնց նայուածքը չէր խայտար, որով-
հասեւ Հոն կար կանխահաս դառնու-
թիւն մը, Հայ ուսուցիչներու զուակնե-
րուն նայուածքին յատուկ:

Տիկին վահրամեան, Արամիկին դե-
ղերը տալէ ետք, անցաւ խոհանոց, ընթ-
րիբը պատրաստելու:

- Կէսօրուն մօտ, Պ. Արիշեան ե-
կաւ: Ըսաւ որ վերջերս շատ ծախքեր
ըրած է սոնական օրերուն եւ դրամի
պէտք ունի: Երեք ամսական կանխիկ
տան վարձք կը պահանջէ:

- Երեք ամսական, Բայց մենք Հա-
մաձայնած էինք որ ամէն ամիս պիտի
վճարենք: Այս ամիս իրեն տալիք չու-
նինք:

- Ձեմ գիտեր: Վաղը կէսօրին կըր-
կին պիտի գայ. Ի՞նչ պէտք է դատաս-
խանեմ իրեն:

- Բայց նոր օրէնքը չի ստիպեր որ
երեք ամսական տան վարձքը կանխիկ
վճարենք:

- Օրէ՞նքը, ո՞ր օրէնքը, որո՞ւն օ-
րէնքը: Ի՞նչպէս պիտի կարենաս իրա-
ւունքդ պաշտպանել, եթէ Հազիւ դրամ
ունիս Հաց դնելու: Օրէնքը զէնք մըն է,
զոր միայն Հարուստները գիտեն գործա-
ծել: Անոր գաղտնիքը դրամն է: Վաղը
Պ. Արիշեան կընայ պաշտօնեայ մը կան-
չել, երկու ոստիկաններով, եւ անոնց
խրաքանչիւրին ափին մէջ տասուկան
ոսկի գետեղելով, մեզ եւ մեր զոյգերը
փողոցը նետել տալ:

- Պ. Արիշեան այդքան զէչ մէկը չէ:

Նախ Հայ է եւ մեծ յարգանք ունի Հայ մտաւորականներուն Հանդէպ: Իրենց պատկերին պատերը զարդարուած են Մահակի, Մհարոպի, Զօհրապի եւ Վարուժանի նկարներով: Յետոյ մի մոտար, որ անոնք ընտանեօք աստուածաժառու եկեղեցաւէր են: Ամէն Կիրակի եկեղեցի կ'երթան, պատարագ կը տեսնեն: Եկեղեցիներուն մեծ նուէրներ կ'ընեն ամէն տարի: Իրենք ալ ժամանակին աղատ եղած են: Լսածիս Համեմատ, իրենց Հայրը Հին վերաբերումներ կը ծախէ եղբոր ուսին վրայ, Հալէպի շուկաներուն մէջ: Վայը կը խօսիմ քահանային, որ մեր եւ իրենց լաւ բարեկամն է, կը միջամտէ եւ խնդիրը կը կարգադրէ...

- Բարի ու միամիտ մարդ: Աւելի դիւրին է Համոզել տեղացի կալուածատէր մը, քան Հայ վաշխառու մը: Մի' մոռնար. իրաւունքը միշտ զօրաւորին է, նոյնիսկ եկեղեցականներուն Համար:

- Ազատուհի, մի չափազանցեր: Ծիշոյ է որ կղերականները կորսնցուցած են իրենց երբեմնի Հեղինակութիւնը, բայց ես կը ճանչնամ շատեր որ Հաւատարիմ կը մնան իրենց կոչումին, մարդասէր են ու զոհուող...

- Կրնայ ըլլալ. բայց վստահ եմ որ անոնք Հայ չեն:

Վահրամեան չպատասխանեց ու մօտեցաւ Արամիկի անկողնին: Մանչուկը դեղերու ազդեցութեան տակ կը քննար...

Անմիջապէս դիմեց քահանային, որ խոստացաւ միջամտել: Սակայն Պ. Արիշեան անդրդուելի մնաց. քանի մը որ ետք, պայտօնեայ մը, երկու ոստիկաններով ներկայացաւ Վահրամեանին տունը, եւ փողոց նետել տուաւ Հայ ուսուցիչին դոյքերը եւ ընտանիքը, Հիւանդ տղեկն ալ միասին: Յաջորդ Կիրակի, Պ. Արիշեան երկու Հարիւր սակի կը նուիրէր Թաղի եկեղեցիին եւ նոյն իրիկունը ճաշի կը Հրաւիրէր Եպիսկոպոսներ, արհղաներ եւ քահանաներ, իր զաւկին տարեդարձին աւերթով:

Բ.

Տեսչարանին մէջ, ուսուցչական կազմը ամբողջ Հաւաքուած էր: Տնօրէնը, կրկարահասակ ու նիւար, քառասունի մօտ, Հալէպէն նոր ժամանած էր, ուր կը ծառայէր իբր գրագիր Ելեկտրական ընկերութեան մէջ: Երկրորդական ուսումը աւարտած չէր, բայց փեսան էր Պ. Պարսիկեանին: Ժողովին ներկայ էր նաեւ Հոգաբարձութեան ներկայացուցիչը, կյոք ու անուս մարդ մը, որ Համբափողոցին վրայ երկու բարձր շէնքեր ունէր: Վահրամեան, ըստ սովորութեան նստած էր ամէնէն ծայրը, Համեստ արթոր մը վրայ, մինչ օտար լեզուներու, դիտութեանց եւ ուսողութեան օւսուցիչները բազմած էին թիկնաթոռներու վրայ, պատուոյ տեղերը:

Տնօրէնը, որ ըլլաւէ կը տառապէր, զլիտու Անրվային շարժումներով բացատրեց ժողովին օրակարգը: Իրմէ ետք, Հոգաբարձութեան ներկայացուցիչը իր կիսկատար Հայերէնով Հետեւեալը ըսաւ.

- Պարոններ, դիտէ՛ք ի՞նչ զոհողութիւններ կ'ընենք այս Հաստատութիւնը պահելու Համար: Ամէն տարի, Հոգաբարձութեան անդամները Հազարաւոր սակիներ կը նուիրեն իրենց քսակէն՝ պիտոճէն Հաւասարակշուէրու Համար: Մեր վերջին ժողովին առինք շատ կարեւոր որոշումներ: Պիտի ջանանք այսուհետեւ այս Հաստատութեան ազգային եւ Հայեցի դիմագիծը պահելով Հանդերձ, զօրացնել օտար լեզուներու եւ դիտութեանց ուսուցումը: Որոշած ենք աւելցնել այդ նիւթերուն դաստամբերը: Հայերէնը կը մնայ աւանդուած նիւթերուն կարեւորագոյնը, բայց նկատելով որ անոր յատկացուած ժամերը շատ են, մաս մը պիտի զեղչենք անոնցմէ, Հայերէնի ուսուցչէն պահանջելով քիչ մը նիւթական զոհողութիւն եւ աւելի արգիւնաւոր աշխատանք: Մանրամասնութիւնները ձեզի պիտի Հազորդուին Պ. Տնօրէնին կողմէ:

նիհար ու աննպաստ անօրէնը ուր
քի ելաւ ու քանի մը խօսք ուղղելէ ետք
ընդհանուրին, զարձաւ Պ. Վահրամեան
նին:

- Պարոն Վահրամեան, աստեղ մը ի
վեր ձեր մասին շատ գանգաւանք կը
լսեմ եւ աշակերտներէն, եւ ծնողներէն:
Մինչև հիմա ականջ չուզեցի կախել,
բայց վերջերս, զանգատը այնքան բարձր
ու հեղինակաւոր անձի մը կողմէ եղաւ,
որ ստիպուած եմ հետեւեալ դիտողու-
թիւնները ընել ձեզի: Թօքս ձեր կարող-
ութեան մասին չէ, այլ ձեր շօվիմիզ-
մին: ձեր հայերէն գրասերը շատ հայկա-
կան կ'ընէք: կը զովէք մեր տնցեալը,
կը զովէք մեր դրագէտները պէտք եղա-
ծէն աւելի: Մեր Ժողովուրդը կը նկա-
տէք ամէնէն կատարեալը եւ ամէնէն
հանճարեղը: Բան մը՝ որ հակառակ է
արդի մանկավարժութեան եւ արդի հո-
գեթանութեան տուեալներուն: Մենք
կ'ուզենք այնպիսի միտքեր պատրաստել,
որ հարցերուն մօտենան գիտական տու-
եալներով եւ ոչ թէ ատան զգացումնե-
րով: Հայերէնը՝ լեզու մըն է ուրիշ լե-
զուններու պէս, ո'չ աւելի, ո'չ պակաս:
Դուք, սակայն, կը ջանաք անոր աւել կա-
րեւորագոյն տեղը տղոց միտքերուն մէջ:
Ամէն օր պատրաստել կուտաք Հայերէն
գրասեր, ամէն շաբաթ կու տաք զրաւոր
պարտականութիւն. տղաքը մամանակ
չեն գտներ միւս դասերը պատրաստե-
լու...:

- Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ուրեմն,
Պարոն Տնօրէն:

- Որոշած ենք Հայերէն լեզուն դա-
սել երկրորդական նիւթերու ցանկին:
Պէտք է համակերպինք մեր դարուն եւ
մեր շրջավայրի պայմաններուն: Մեր
տղաքը պետական վկայական ստանալու
եւ համալսարան մտնելու համար պէտք
չունին Հայերէնին...:

Տնօրէնը կը շարունակէր իր ճառը,
սակայն Վահրամեանի ականջին անոր
ձայնը կու գար հեռաւոր շուրհի մը պէս:
Տխուր կատակերգութեան մը դերակա-
տարները նստած էին դէմը: Սա կ'որ,

անուս ու հարուստ մարդը, որ հոգա-
բարձութեան անուճով կը խօսէր զո՛հա-
բերութեան, ազգապահպանման մասին,
տարեկան միայն տասը ոսկի կը նուիրէր
գարոցի անուկին եւ իր զաւակները կը
դրկէր օտար վարժարան, ուր բառ մը
խնկ հայերէն չէին սորվեր: Վահրամեան
նաքի ելաւ:

- Պարոն Տնօրէն, - ըսաւ, - երկու
տարի առաջ, այս գարոցին մէջ կ'աւան-
դէինք շաբաթական վեց պահ հայերէն
եւ երկու պահ Հայոց պատմութիւն եւ
տղաքը շատ փայլուն յաջողութիւններ
կ'արձանագրէին պետական քննութեանց
մէջ: Անցեալ տարի այդ պահերը եղան
երեք եւ մէկ. արդիւնքը դուք ինձմէ լաւ
գիտէք, սերքիֆիմայի քննութիւննե-
րուն՝ 15 աշակերտներու վրայ միայն
երկու հոգի յաջողեցան...:

- Այդ տարին ես չէի տնօրէնը:

- Անոնք որ իրենց մայրենի լեզուն
լաւ չեն գիտեր, կը նմանին առանց ար-
մատի բոյսերու: Անոնք չեն կրնար հայ-
րենասէրներ ըլլալ եւ ոչ ալ լաւ քաղա-
քացիներ, կը դառնան անսկզբունք մար-
դիկ...:

- Քեզի կրնամ հարիւրաւոր որի-
նակներ տալ հակառակը փաստելու...:

- Պարոննե՛ր, սիրելի Հայ ուսուցիչ-
ներ, ասկէ յիտուն տարիներ առաջ ա-
պաստանեցանք այս հիւրընկալ ակերը,
կատաղի փոթորիկէն փախուող ցէր ու
ցան տերեւներու պէս: Ամէն հնարաւոր-
ութիւն ունէինք հայ ապրելու եւ յա-
րատելու, որովհետեւ յուսահատ էինք
ու յօգնած: Պայմանները նոյնը կը մնան
տակաւին, բայց մենք նոյնը չենք այլեւս:
Մենք Հայեր չենք այլեւս, այլ հայա-
խօսներու ամբոխ մը, տարուած միայն
ու միայն անմասկան քմայքներով ու փա-
ռասիրութեամբ: Ողբերգութիւնը վեր-
ջացաւ ասկէ յիտուն տարի առաջ. մեզան
հերոսները եւ սկսաւ ահաւոր կատակեր-
գութիւնը: Սարքած ենք հսկայական
զաւեշտ մը, որուն եւ դերակատարներն
ենք, եւ հանդիսատեսները:

- Պարոն՝ Վահրամեան, չափը մի՛ անցնի՛ք, - պոռաց տնօրէնը:

- Ո՞ր մէկ չափը եւ ի՞նչին չափը: Բոլորդ ալ գիտէք որ ըսածներս իրականութեան մէկ շնչին տոկոսը միայն կը ներկայացնեն, բայց կը լռէք, որովհետեւ քաջութիւնը չունիք ձեր համոզումներուն պաշտպանը կանգնելու... Այժմ, ցտեսութիւն:

Ժողովականները պահ մը լռու մնացին: Տնօրէնը խիստ ճառ մը խօսեցաւ, ուր ձաղկեց այն բոլոր ազերախտները, որոնք ազդին հացը կ'ուտեն եւ ամբարտաւան կը դառնան. զանոնք նմանցուց օձերու, որոնք կ'ապրին հայութեան տաքուկ ծոցին մէջ եւ առաջին առիթին իրենց թունաւոր ակուաներով կը խայթեն իրենց ազատուան ու անունը տուող մայրը: Բոլորն ալ դատապարտեցին Վահրամեանը իր կրշտ ելոյթին համար եւ զուրս ելան իրենց սեղմ անկցութիւնը խոստանալէ ետք Հոգաբարձութեան արդանուէր գործունէութեան:

Տնօրէնը վերադարձաւ իր դրասենեակը, ուր երիտասարդ մը իրեն կը սպասէր: Հօրեղբոր որդին էր, որ համալսարանը կէս ձգած, անգործ կը թափառէր եւ հօրը դրամը կը վատնէր կապիւններու մէջ եւ խաղի սեղաններուն առջեւ:

- Յակոբ, - ըսաւ Տնօրէնը, - գործը լաւ ճամբու վրայ է:

- Այտի՛նք:

- Մարդուկը այնքան կատղեցուցինք, որ սկսաւ ակնդ-ցփեղ յայտաբարութիւններ ընել: Հոգաբարձութեան ներկայացուցիչը այնքան վիրաւորուած զգաց, որ բարկութենէն կաս կարմիր կարեցաւ: Պէտք եղածը պիտի ընէ եւ մօտ օրէն վարժարանիս հայերէնի ուսուցիչը գործէն պիտի արձակուի եւ դուն անմիջապէս պիտի առնես իր տեղը:

- Բայց ինչպէ՞ս կարելի է ուսուցիչ մը տարուան կէսին գործէն արձակել, մանաւանդ ուսուցիչ մը, որ կը ծառայէ տարիներէ ի վեր:

- Հոգաբարձութեան մէջ կան շատ ազդեցիկ մարդիկ, հառապարութիւնը

իրենց մէկ խօսքը երկու ջըներ: Գալով Վահրամեանին՝ խեղճ ու կրակ մարդ մըն է, իրեն կոնակ կեցող ո՛չ ոք ունի:

- Բայց ես հայերէն լաւ չեմ գիտեր. պիտի նախընտրէի անգլիերէն կամ գերմաներէն զասուանողել:

- Հայերէնի ուսուցիչ կ'ըլլաս. շատ դուրին է: Պահերն ալ կ'աւելցնենք, որպէսզի կարենաս ամսական դոնէ 400 ոսկի ստանալ եւ առօրեայ ծախքերդ գոցել: Կ'աշխատիս միշտեւ որ աւելի լաւ պաշտօն մը գտնես օտար ընկերութեան մը մէջ:

Գ.

Պաղ Հով մը կը փչէր գիժացէն, երբ սկսաւ բարձրանալ փողոցին գառովերը: Մաշած վերարկուն զէչ մը աւելի թեթեւցած էր եւ զէչ մը աւելի նոխացած՝ մարմնին:

Բակին մէջ աղաքը կը վազվզէին: Ոմանք անկիւնները քաշուած, գիրք մը ձեռքերին, կը ջնասին շահի այն ժամերը, զորս կորսնցուցած էին հեռատեսիլի առջեւ: Երջանկութիւն մը կը զգար, երբ անցնէր դպրոցին դուռը: Հոս, կարծես շնչած օդը տարբեր էր. սրտին բարխումները կը կանոնաւորուէին, արիւնը՝ աւելի հարստացած՝ կը վազէր իր լերդացած երակներուն մէջջէն:

- Բարի լո՛յս, պարոն, - կ'ըսէին, իր մօտէն անցնող աշակերտները, որոնց հետ դաս ունէր այդ օրը: Բարի լո՛յս մը, որուն մէջ հեզնական շեշտ մը կար՝ իր անձին եւ հապուստին հանդէպ: Իսկ անոնք որ հեռու էին, իրարու ետեւը նայելով կը խնդային ու բարձրաձայն կը պոռային.

- Բարի լո՛յս, պարոն վերարկու: Ուսուցչարանը ամայի էր, Գրպանէն հանեց Թաթլի Ալթըի դեղին ծրարը ու սիկատէթ մը վառեց: Կը յիշէր իր անցեալի խանդավառութիւնը, իր պատրանքները քառուցական ասպարէզի մասին: Այնքան հայկական դպրոցներ,

եկեղեցիներ եւ ակումբներ կային այս քաղաքին մէջ, որ մարդ կրնար ապրիլ իսկական մթնոլորտի մը մէջ: Պէյրուք զարձած էր մայրաքաղաք Սփիւքի հայրենան: Ստացած էր համալսարանական բարձրագոյն ուսում եւ վկայական: Մայրենի լեզուն չափ գիտէր օտար լեզուներ եւ գիտութիւն եւ սակայն նախընտրած էր հայերէն դասաւանդել, գիտնալով հանդերձ որ օտար լեզու եւ գիտութիւն աւանդող ուսուցիչները աւելի փնտրուած էին եւ աւելի լաւ վճարուած:

Սուղին տարին իսկ սկսած էր յուսախարութիւնը: Փոխած էր վարժարանը. բայց ամէն տեղ նոյնն էր մթնոլորտը: Իր գործելու եռանդը կը բախէր տնօրէններու ստրկամտութեան եւ հոգաբարձուներու մանրուք հաշիւներուն, ինք՝ որ յօժարած էր ապրիլ նիւթական համեստ պայմաններու մէջ, իր սիրած պաշտօնը կատարելով, զգացած էր յանկարծ, որ կը զանուէր արհամարհուածներու եւ անտեսուածներու դասին մէջ:

Բացաւ դասադրքերը եւ այժ մը նետեց օրուան մէջ աւանդուելիք դասերուն: Ժամանակ ունէր տակաւին: Պաշտօնակիցներէն շատերը կու գային աղոց դասարան մտնելէն ետք. ինք, սակայն, նոյնիսկ անհանդիսա եղած օրերուն, միշտ ներկայ եղած էր մուտքի դանդաղէն կէս ժամ առաջ, կամաւոր զինուորի մը պէս, որ միշտ մերկայ կ'ուզէ պտտալ իր սպային մէկ անակնկալ այցելութեան պահուն:

Երբ մուտքի դանդաղը հնչեց, որբազրուած տետրակներուն տրցակը եւ դասադրքերը թիւին տակ առնելով՝ քալեց դէպի դասարան: Բարձրացաւ ամպիտին վրայ, նստաւ դրասեղանին առջեւ երկիւղածութեամբ, ինչպէս պատարագիչ քահանան կը մօտենայ խորանին: Քսան տարիներ, այսպէս նստած էր հայ մանուկներով լեզուն դասարանի մը առջեւ, եւ աւանդած հայ լեզու, հայ դրականութիւն եւ հայոց պատմութիւն: Սկիզբները, տարիներ առաջ, երբ կը խօսէր մեր

գրագէտներուն, մեր բանաստեղծներուն, մեր հերոսներուն եւ մեր մարտիրոսներուն մասին, երբ կը բանար մեր անցեալի փառաւոր ու ողբերգական էջերը, տղաքը զինք մտիկ կ'ընէին անշարժ արձաններու պէս, կը վերանային իր հետ, կ'ուրախանային, կը յուզուէին կամ կը տխրէին: Ներկայիս, դիմացը նստող երեսունի չափ խելահաս մանչ ու աղջիկներէն, հազիւ չորս կամ հինգ հասր ականջ կը դնէին իր ըսածներուն, մինչ ետեւի շարքերուն վրայ նստողները կ'ամ կը յօրանջէին եւ կամ ալ դադարազոյր ուրիշ զասեր կը պատրաստէին:

Ինք, սակայն, կը խօսէր նոյն երանդով եւ նոյն վերացումով այդ հինգ աշակերտներուն համար, վախնալով որ, օր մը, անոնք ալ հետեւէին միւսներուն օրինակին:

- Սիրելի՛ տղաք, մեր ազգը երեք հազար տարի ապրեցաւ ու յարատեւեց, որովհետեւ կը հաւատար իր անձահոթեան:...

Յանկարծ դուռը բացուեցաւ եւ զոնսպան թաշիկը ներս մտաւ: Տղաքը խնդացին: Առանց ներողութիւն խնդրելու՝ մօտեցաւ ամպիտին: Երբեք չէր համարձակած այսպէս վարուիլ միւս ուսուցիչներուն հետ:

- Պարոն Տնօրէնը զրկեց այս նամակը. ըսաւ որ անմիջապէս կարգաք հսկէսօրին հանդիպէք իր գրասենեակը:

Պարոն Վահրամեան առաւ պահարանը ու վերաբերուին գրպանը զրաւ: Պէտք չունէր կարդալու. գիտէր նամակին պարունակութիւնը: Շարունակեց խօսիլ. բայց ձայնին շեշտը նոյնը չէր, աւելի մեղմ էր եւ աւելի խորունկ: Եւ երեսուն չափահաս հայ մանչերը եւ աղջիկները գոցեցին իրենց զրքերը եւ ուշադրութիւն դարձուցին իր ըսածներուն:

- Մեր ազգը կը հաւատար իր անձահոթեան: Հաւատքը այն թիւն է, որ մարդը կը կապէ յաւիտենական բաներու: Ազգ մը որպէսզի գոյատեւէ, իր մարմնին համար պէտք ունի հողի եւ իր հողիին համար պէտք ունի հաւատքի:

Ներկայիս կ'ապրինք Հայրենիքէն հեռու, Հող շունինք մեր ոտքերուն տակ, կը մնայ Հաւատքը: Չայն հրահրելու համար ունինք երկու միջոց. Լեկզիցի եւ ժշակոյթ: Ձեզմէ ընդմիջտ բաժնուելէ առաջ՝ կ'ուզիմ հետեւեալ խրատը տալ. ականջ մի կախէք այն բոլոր աղուէսնեքուն, որոնք ժպիտներով կը մօտենան ձեզի: Եղէք անկեղծ ձեր համոզումներուն մէջ, սիրեցէք Հայ ազգը, անոր պանծալի մշակոյթն ու յաւիտենականութեան վրայ խարսխած անոր Եկեղեցին, առանց շահանդութեան, ինչպէս ըրաւ ձեր ուսուցիչը...

Ձանդակ մը հնչեց բակին կողմէն: Տղաքը մէկիկ-մէկիկ զուրո ելան, ուսուցիչին կողմը նետելով համակրական նայուածք մը: Վահրամեան բացաւ պահարանը եւ կարգաց նամակը, Հոգաբարձութիւնը, տնօրէնին առաջարկին վրայ, զինքը գործէն կ'արձակէր իբր անկարող ուսուցիչ, ուսումնական տարելջանին կիսուն...

Վահրամեան ծայեց նամակը ու զբաւ պահարանին մէջ: Իջաւ ամպիտնէն ու մօտեցաւ նստարաններուն: Գիտէր անոնց իւրաքանչիւրին պատմութիւնը, պիտէր ու կը յիշէր այն բոլոր աշակերտներուն անունները, որոնք տարիներու ընթացքին նստած էին Հոն: Վերագարձաւ, կրկին բարձրացաւ ամպիտնին վրայ ու նստեցաւ: Բակին մէջ տղաքը կը վազվզէին, կը խաղային, կը պուռային...

Քառորդ ժամէն կրկին պիտի վերադառնային իրենց տեղերը, պիտի բանային իրենց դրօշը այդ երեսունի չտփ Հայ մանչ ու աղջիկները, որոնց աչքերուն մէջ տակաւին չէր մեռած գարաւոր երազը ձիւնապատ Արարատին եւ Սեւանի կապոյտ ալիքներուն, որոնց անուն-

ները տակաւին կը բուրէին Հայոց Պատմութիւն՝ - Վահէ, Մեսրոպ, Տիգրան, Անի, Ալիսէն, Ասողիկ: Փխրուն հողերներ, ուր պիտի ցանուէին օտարախրութեան եւ անբարտաւանութեան սերմերը:

Ամայի դասարան, դասարկ նստարաններ...: Գուրսը հարիւրաւոր Հայ մանուկներ, որոնց նայուածքին մէջ տակաւին չէր մարած մանկական անկեղծութիւնը եւ անմեղութիւնը՝ կը խաղային անհոգ. իսկ Հոս, Հայ մարդ մը, առանձին նստած, կը յանձնուէր ճակատաբի անողոք հարուածին:

Վահրամեան ձեռքը տարաւ կուրծքին, ձախ կողմը, Հոն՝ ուր ընդհանրապէս մահը կ'իջնէ իր զօրաւոր թաթը: Պատուհաններէն եկող լոյսը կամաց կամաց կ'աղօտէր, նստարանները կը վերածուէին անորոշ զանգուածներու. աչխարճը գոյութիւն ունենալէ կը դադրէր անոր աչքերուն...

Երբ զքօտանքը վերջացաւ եւ աշակերտները մէկիկ-մէկիկ ներս մտան, զարմանքով տեսան որ իրենց Հայերէնի ուսուցիչը տակաւին նստած կը մնար իր տեղը, ամպիտնին վրայ, զլուխը կը Հանդէ՛ն սրբագրուած Հայերէն տետրակներու արցակին վրայ...:

Երբ ուսողութեան ուսուցիչը ներս մտաւ, Վահրամեան ոչ մէկ շարժում ըրաւ զինք դիմաւորելու եւ իր տեղը տալու: Ի ուրն ալ զարմացան:

- Պարո՛ն Վահրամեան, - ըսաւ ուսուցիչը:

Ո՛չ մէկ պատասխան: Վահրամեան ալիւս չէր լսեր իր շուրջի ձայները: Ինչպէ՛ս էր զինուորի մը պէս, պատնէ՛շին վրայ, զնդակ մը օրտին:

Յաջորդ օրը, տնօրէնին հօրեղբորորդին ստանձնեց իր նոր պաշտօնը...

Ե. Չ.

Դեկտեմբեր 1967

ինչպե՞ս է պրոսե-
 կա լինում այնպիսի
 մի առարկայի մասին
 որի մասին չկան
 ոչինչ տեղեկություններ
 ընդհանուր... Ի. Օրմանյան

X X
 1 1
 --

Հուլիսի արցունքը վտակի ելունի
 զենամ է, զենամ, թայց տեղ չի հասնում,
 Ափերին միայն վշեր են բռնում,
 Եւ հոնք եւ սեռում զաշուստը զարման։

Հուլիսի անրելներ ալալների մի որթի
 Անտարթյամբ ինչպե՞ս էս ծագեր հանի,
 Եւ ինչպե՞ս որդս արե՞րվներ ճեհի,
 Ինչպե՞ր սալառնի սիրտս սեփարի։

Հուլիսի մեծալոր, հուլիսածն մի ծառի
 Հողն էլ շոյանքով մտուշտերս է պոկում,
 Ամուշ հարսի պես ինձ չի ամոթում,
 Եւ ինչպե՞ս ծառս ճեհի մի սևոր։

Հուլիսի սրուն զալն է ցրված սառչերիս
 Երանք էլ՝ սեփու՞ ինչպե՞ս զան իրար,
 Եւ ինչպե՞ր հայրց սառչն արևսերի՞
 Եւ ինչպե՞ր թալլամ բերքս վործերիս։

Հուլիսի գնդանի, թայց թարն մի կրնի
 Ինչպե՞ն էլ իսկ եւ իմ կրթքին սեղմում,
 Մին էլ չի տուլիսս վիշտս չի մեղմում,
 Հուլիսիս թողնվին ծաբով եւ կրկին։

Տե՛ր, հուլիսս ծառս էս սպարած էս վճռո
 Հուլիսիս մամուռն էլ՝ մայրին էլ թանի՞
 Պիտի, սևասուլի՞ Մասիան հասնիս,
 Քանչև աշխարհի ցավով կցվանմ...

Եվ հուլիսի մալ էլ դառնա՞ չի կարի,
 Գերի չեաներիս ցաշով մեկ է ևսս-
 Գալստի գեղված հողս քառակույսս՝
 Ես չեմ հավատում չեմ ճանաչողի...



ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Երեք ժամէն պիտի հնչեն զանգերը. նաւերու փողերէն փախչող ձայները հին ցաւերու մեկնումն ու նոր յոյսերու գալուտը պիտի յայտնեն աշխարհի: Ձիւնածածկ բլուրի մը վրայ պահ մը իրար պիտի հանդիպին ծնող ու մեկնող տարիները. հինը պիտի նայի Նոր Տարիին, պիտի լինէ անցեալի իր յաջմական մուտքը դէպի մարդոց յուսակարօտ սըրտերը. պիտի ժպտի ու անցնի...:

Ձիւններու վրայ պիտի մնան զոյգ ոտնահետքեր. հինը՝ փերթատուած ու թաղուած յոյս, նորը՝ սպասում, երազ անստուեր...:



Նոր ասրուայ լոյսերով ու ճիւղիւրով դարդարուած զուլայփեղկ մը: Մօտը, ստարուպիկ մանուկ մը՝ կարկոնըւած տարատով ու արտով: Անդին, մոխրադոյն մազերով երիտասարդ մը՝ նոր հազուատներով ու հին սրտով: Ձիւնը կ'իջնէ հանդարտութեամբ:

Անցեալ մը կայ հոն՝ մանուկի մը կերպարանքով. ներկայ մը՝ երիտասարդական կեցուածքով. ու նաև Նոր Տարուայ նոյն տեսարանը՝ ձիւնը, պլպլացող արուեստական աստղերը, արուեստական ձիւղերը, ծառերը ... ու ծնունդ մը արուեստական:

Մանուկը՝ հասուն մարդու մը մտահոգութիւնը շալկած՝ ձեռքերը կը մխրտնէ տարատին դրականներուն մէջ, ու քերելով մայրերը՝ կը մեկնի:

Մեկնող մանուկին փոքրանալուն հետ, կը մեծնայ յուզումը երիտասարդին, կը ստեղծուին անհանդարտ քամիներ, կը թղթատեն փոշոտած էջերը ան-

ցեային, ու ընդվզումով կը կենան հոն՝ մանկական տաղին գիտակից Նոր Տարիին սեմին...:



— Մայրի՛կ, ինչո՞ւ կը հնչեն նաւերու փողերն ու եկեղեցիներու զանգերը: Ինչո՞ւ ծիծաղ ու երգ կայ դրացիներուն տուներէն ներս: Մութ գիշեր է, մայրի՛կ, ինչո՞ւ արթուն են բոլորը...:

— Քնացի՛ր, մանչա՛:

Արամիկ ընդոտա արթնցած էր դրացիներու Նոր Տարուայ երգերէն, ու տնդիտակից իր շուրջի անցուղարձերէն, կ'ուզէր դահապնել իր մանկական հետաքրքրութիւնը:

Ունէր վեց տարիներու թեթեւ բնու մը ուսերուն, մայր մը, չորս քոյրեր եւ չորս պատերով ու յողնած առաստաղով սենեակ մը: Հայրը անվերադարձ մեկնած էր օտար երկիր գալիստելու:

Չքնացաւ: Ինչո՞ւ քնանալ, երբ տրթուն էր թաղը, երբ չորս քոյրերը շարուած էին պատուհանին մօտ ու հետաքրքրութեամբ կը նայէին դրացիներուն տուներէն ներս, երբ արցունք կտր ժօրը աչքերուն ու աղօթքի շուկ՝ անոր դուրեկ շրթներուն...:

Նաու սուլոցները դազրեցան: Միայն եկեղեցիին զանգերը քիչ մը եւս չեշտեցին այս անձանթօթ ու տարօրինակ գիշերուան մթնոլորտը, ու լռեցին: Միծաղի եւ երգի ձայներ միայն արձայնագեցին գիշերուայ լուսթեան մէջ:

— Քոցեցէք պատուհանը, աղջիկնե՛ր, կը մտիք:

Մեծը՝ տասնըվեց տարեկան՝ փակեց պատուհանը: Արամիկ քոյրերուն

աչքերուն մէջ տեսաւ արցունք, դժգոհանք ու շփոթ: Այդ խորհրդաւոր դիւտերը տարօրինակ երանգներ էր մտայնացած աղքատիկ սենեակէն ներս: Ու անծանօթ բառ մը առաջին անգամ ըլլալով շուկայ Արամիկի լսողութիւնը:

- Ենորհաւոր Նոր Տարի, ժառուկաներս...

Ճ

Յաջորդ առաւօտ արեւը իր ձմեռնային տկար շողերը նետեց ձիւներուն վրայ: Մայրը փաթեց Արամիկի վրը շարով մը, ու ըսաւ:

- Գնա՛, մանչօ, զիջ մը խաղայ դուրսը:

Չարմացաւ Արամիկ. ոչ ոք կար փողոցը: Ո՛ւր էին տղաքն ու աղջիկները. ինչո՞ւ այս լռութիւնը թաղին մէջ: Գոց էր նսեւ նպարաւաճառին խոնուքը:

Նստաւ ասն աստիճանին վրայ: Ոտքով Հարութեան ձիւնը: Շշուկ մը լսեց զիջ անդին, դարձաւ. թաղի շուկն էր՝ Պլանքոն: Ան ալ կարծէք զարմացած ու անտեղեկ թաղի ամայութիւնէն, եկաւ, նստաւ Արամիկի մօտ ու Հարցակոն նայեցաւ անոր աչքերուն:

- Այսօր չկան տղաքը, Պլանքօ՛, - ըսաւ Արամիկ, - տունն են ու դուրս չեն ելած տակաւին: Ես ու զուն ասանձին ենք. խաղանք, Պլանքօ՛...:

Քաշեց շան ականջներէն ու մօտեցուց իրեն. շուկայ գլուխը: Կը սիրէր այդ շունը, որ երբեք չէր խօսեր ու չէր ծիծաղեր իր Հինցած կօշիկներուն ու ծակ տարատին վրայ: Չէր Հարցներ հօրը բացակայութեան մասին: Չէր ըսեր՝ թէ Հին է իրենց տունը, եւ ցուբա օրերուն կուզար ու կը դիշերէր իրենց սենեակին անկիւնը:

Շունը՝ յայտնելու Համար իր Հըրճաւանքը՝ թաթերով Հարութեան ձիւնը ու նոր փաթիլներ գետնէն նետուցան Արամիկի երեսին: Արամիկի ծիծաղը ինկաւ՝ ձիւներուն վրայ: Վազեց շան հտեւէն, քաշեց պոչէն, իր զուարթ ճիւղերը

խառնեց շան մտերմիկ Հաջոցներուն. շէնցաւ անհրապոյր լռութեամբ տղեկացած թաղը:

- Հանգիստ ձգէ շունը, շա՛ն լաւ կուտ: Ի՞նչ է կ'աղմկես առտու կանուխ: Չե՛ս գիտեր, թէ ամէն մարդ կը քնանայ:

Գիմացի տան պատուհանէն դուրս ելած կանացի գլուխը՝ իր լռութիւնը պաշտպանող խօսքերով՝ արթնցուց դրացիները: Արամիկ վերադարձաւ տուն: Բայց, Պլանքօ շուկայ տեղի տալ կնկան սպանալիքներուն, ու իր Հաջոցներով սկսաւ վիճել անոր Հետ, մինչեւ այն պահը, երբ կինը տեղի տուաւ ու գոցեց պատուհանը:

Շունը յաղթական պոչը տնկեց վեր, մօտեցաւ Արամիկինց տան, ու առջեւի թաթերով քերեց դուռը:

Արամիկ ու Պլանքօ անաղմուկ շարունակեցին իրենց խաղը: Ժամ մը ետք թաղի նպարաւաճառը յօրանջելով բացաւ խանութին փեղկերը. մամիկներն ու պապիկները Հապճեպով բռնեցին եկեղեցիին ճամբան:

Շէնցաւ թաղը: Տղաք ու աղջիկներ երեցան պատշգամներուն վրայ ու սեմերուն առջեւ: Կիրակնօրեայ Հագուստներ էին Հագած անոնք. իրենց շրթներուն վրայ կային նոր ժպիտներ, ու ձեռքերուն մէջ՝ փայլուն ու գունաւոր առարկաներ: Արամիկն ու շունը Հետաքրքրութեամբ նայեցան անոնց. Պլանքօյին պոչը ինկաւ ետեւի սրունքներուն մէջտեղ. Արամիկն ալ զգաց, թէ բան մը ինկաւ սրտին մէջ...:

Թեւը նետեց շան վզին ու միասին դիտեցին դիմացի մայթին վրայ Հաւաքւած տղաքը: Ամէն մէկը Հպարտանքով կը ցուցնէր իր ձեռքի առարկան, Հետաքրքրութեամբ կը դիտէր միւսին նորութիւնը: Արամիկ մտածեց մօտենալ անոնց, բայց չհամարձակեցաւ: Սիշեց երէկ գիշերուայ տարօրինակ ու խորհրդաւոր զանգերն ու երգերը:

Պլանքօ քանի մը քայլ առաւ, տատանեցաւ պահ մը, Հասաւ ճամբու կի-

սուն, դարձաւ ետ, շարժեց գլուխը երկու անգամ. սպասեց: Արամիկ Հասուշան ետեւէն ու միասին անցան միւս ծայթը:

Տղաքը պահ մը դադարեցուցին խօսակցութիւնը ու նայեցան Արամիկին: Մեծերը բաներ մը փսփսացին իրարու ու Հեռացան քիչ մը:

- Տէ՛ս, Արամիկ, - ըսաւ Թուրէն խանդավառուած, - Կաղանդ Պապուկը այս օդանաւը բերաւ ինձի:

- Կաղանդ Պապուկը...:

Արամիկ չհասկցաւ, թէ ո՞վ էր այդ «Կաղանդ Պապուկը»: Երբեք չէր լսած անոր անունը: Կարծեց՝ թէ Թուրէնի Հայրն էր. բայց, ո՛չ, «Պարոն Սնդրակ» էր փսփսայտը անունը:

- Տէ՛ս, Արամիկ, ինձի ալ պուպրիկ բերաւ Կաղանդ Պապուկը:

Սեւ ու խոշոր աչքերով Եռչեկն էր խօսողը, որ խարախաճէր պուպրիկ մը կ'օրօրէր թիւերուն մէջ:

- Ինձի ալ նաւ մը, Արամիկ...:

- Տէ՛ս, նոր հաղուսաներս:

- Գլխարկս տե՛ս, Արամիկ...:

Բացարեւոյցին. Հասոկցաւ: Երէկ գիշեր, կարմրազգեստ ու ծերուկ մարդ մըն էր եկեր Հեռուոր լեռներէն. բերած էր իրեն Հեա, շատ նուէրներ ու բաժնեք բարի աղոց ու աղջիկներուն: Ահա՛, այդ մարդը կը կոչուէր «Կաղանդ Պապուկ»: Ան գիտէր, թէ ո՞վ չար էր ու ով բարի. ան բարիներուն նուէր կը բերէր, իսկ չարերուն՝ պատիժ...:

- Քեզի նուէր չբերա՞ւ, Արամիկ:

Կուռազան Մինասն էր Հարցնողը:

Բոլորը լռեցին ու Հարցական նայեցան իրարու: Արամիկ չփոթեցաւ. չպատասխանեց: Եոյեց շան գլուխը ու յետոյ ըսաւ.

- Մեզի չեկաւ: Նուէրները վերջացան էին: Թերեւս վաղը գայ...:

- Եթէ երէկ գիշեր չեկաւ, այլեւս չի գար: Կաղանդ Պապուկը տարին մէկ անգամ կ'իջնէ լեռներէն, - չարութեամբ ըսաւ Մինաս:

Արամիկ չպատասխանեց: Արդէն

ինքն ալ շատ չէր հաւատար իր բաժին: Այդպէս ըսած էր, որովհետեւ Հարցուցած էին իրեն ու ինք ձեռով մը պէտք էր պատասխանէր...:

Քիչ մը գիտեց աղոց խաղալիքները: Թուրէն իրեն տուաւ օղանաւը ու ինք Հրճուանքով քսեց անոր անիւները գետնին: Նայեցաւ օդանաւին պատուհաններէն ներս. աթոռներ կային Հոն, ու անոնցմէ մէկուն վրայ դիւրուրական Համարգեստով մարդ մը:

- Կը բուէ, - ըսաւ Թուրէն, - կը բուէ խաղաս, է՛տ տուր:

Տուաւ:

Վերադարձաւ տուն ու Հոնիէ դեմեց խումբը: Յետոյ՝ կանչեց Պլանքոյին: Եունը անմիջապէս ձգեց խումբը ու միացաւ Արամիկին:

Արամիկ թեւը նետեց անոր վզին ու փսփսաց.

- Ինձի ու քեզի մտցած է Կաղանդ Պապուկը, Պլանքո՛...:

Ճ

Գիշերը, երբ Արամիկ վերջացուց աղօթքը, չխաչակնքեց: Ըսելիքներ ունէր Աստուած Պապուկին: Ան Հաւանաբար բարեկամ էր Կաղանդ Պապուկին: Այդպէս պէտք է ըլլար, որովհետեւ կրկուքն ալ Պապուկ էին, ու ո՞վ գիտէ, թերեւս Աստուած Պապուկը տարին մէկ անգամ կարմիր հաղուսաներ կը հագնէր ու կր դառնար Կաղանդ Պապուկ: Ո՞վ գիտէ, թերեւս...:

Ըսելիքներ ունէր Աղօթեց.

«Կաղանդ Պապուկ, գուն որ բարեկամ ես ու կը սիրես բարի աղաքը, ինչպէ՞ս մտցար դիւ: Ես բարի եմ, Կաղանդ Պապուկ: Թաղի շար աղաքը, մանաւանդ Մինասը, միշտ կը ծեծեն դիւ, որովհետեւ ատանձին եմ ես, ոչ ոք ունիմ ինձի պաշտպան: Գիտե՛ս, Հայրիկը գացեր է ուրիշ երկիր դրամ բերելու: Ես ոչ ոքի կը զարնեմ: Բոլոր աղոց նուէր բերիք, Մինասին անգամ բերիք. ես ի՞նչ յանցանք գործած էի, Կաղանդ Պապուկ: Հարցու՛ր, Հարցու՛ր բոլորին, պիտի ը-

սեն, թէ ինչքան խելօք եմ եւս: Ինծի ալ եկուր, Կաղանդ Պապուկ...»:

Յայակնքեց:

Ձգնացաւ: Մտածեց ալ՞ օրուայ ղէպքերուն մասին: Թերեւս սուս էր Մինասը. ուզած ատենը կուզայ Կաղանդ Պապուկը. ինչո՞ւ մէկ անգամ պիտի գայ եղեր. երբ որ սիրուը ուզէ՝ կ'ուզայ, կը յիշէ, թէ մտոցած է զինք ու կուզայ...:

Բնացաւ...:

Ճ

Առտու յիշեց երազը: Կաղանդ Պապուկը խոտառմանը տուած էր: Շուտով ինք ու Պլանջօն պիտի ստանային իրենց նուէրները:

- Մայրի՛կ, երբ քնացած էի Կաղանդ Պապուկը եկա՞ւ:

Մայրը ցնցուեցաւ. շփոթեցաւ: Անակնկալ հարցումին առակ՝ յուզումը սեղմեց կոկորդը: Գողնացին ծայրով սրբեց աչքերը ու գողացող ձայնով մը ըսաւ.

- Ո՛չ, մանչս, հայրիկին երթալն էր քո շատ ծերացաւ Կաղանդ Պապուկը: Տակաւին չեկաւ մեր թաղը:

- Եկած է, մայրի՛կ: Ռուբէնին, Շուշիկին, Մինասին, բոլորին, բոլորին նուէր է բերեր Կաղանդ Պապուկը:

Ճ

Երեկոյեան, ընթրիքի սեղանին վերայ, երկու մտերու մէջտեղ, եղեւնի ճիւղ մը կար կանգնած՝ արծաթազոյն թուղթերով ու գունասուր ժապաւէններով զարդարուած:

- Կաղանդ Պապուկը այս դիշեր քեզի ալ նուէր պիտի բերէ, ձաղո՞ւկս, - ըսաւ մայրը, կուրծքին սեղմելով Արամիկը:

Ընթրիքը նոր էր վերջացած, երբ մեծ ջոյքը մտաւ ուղղեց զէպի դուռը ու ըսաւ.

- Լսեցի՞ր, Արամիկ, Կաղանդ Պապուկին կտորքին անիւններուն ձայն էր:

Արամիկ սրեց լսողութիւնը: Մանուկ աչքերը խոշորցան ձայնի սպասումի կախարհանքով: Այո՛, լսած էր աղմուկ մը. կարծած էր, թէ Շուշիկի հօր ինքնաշարժին ազմուկն էր ան: Եփոթած՝ նայեցաւ մեծ ջրովը.

- Բաց դուռը, ջոյրի՛կ, թերեւս ան է, - շնջաց յուզումով:

Ձմտեցաւ դրան: Նախընտրեց մնալ իր տեղը ու սպասել կարմրազգեստ ծերուկին:

Մեծ ջոյքը բացած էր դուռը, եւ նայուածքներով կը փնտռէր կտորքն ու Կաղանդ Պապուկը: Բարձրացուց նայուածքը հեռուէն ու ըսաւ ժպտով.

- Ահա, կը մեկնի Կաղանդ Պապուկին կտորքը, ահ՛ս, Արամիկ...:

Արամիկ վաղեց դուրս. ուշ էր այլ լինաւ: Մեկնած էր կտորքը. բայց դրան առջեւ դրուած էր ծրար մը:

- Անտպարեց Կաղանդ Պապուկը, շատ է ծերացեր...:

Արամիկ մտիկ չըբաւ մօր խօսքերը: Մտոցաւ Կաղանդ Պապուկն ու անոր կտորքը: Մտեցաւ, վերցուց ծրարը. բաւական ծանր էր. ի՞նչ կար մէջը. նա՞ւ մը արեւօք, թէ զեղակ, զէնք, զինուոր, կամ օդանաւ մը՝ գունասուր պատուհաններով...:

- Տեսա՞ր, Արամիկ, քեզի ալ նուէր բերաւ Կաղանդ Պապուկը:

Գոյրն ու մայրը քակեցին ծրարը ու երեւցաւ թիթեղեայ փոքրիկ տուփ մը: Արամիկ մանչցաւ տուփը, որու մէջ մայրը կը դնէր լուացքի ունեւիղները: Զարմացած նայեցաւ մօրը:

- Տի՛ս, Արամիկ, տուփէն զատ ուրիշ նուէրներ ալ կան:

Ձոյք մը գուլպայ, հայրիկնի դասագիրք մը ու նարնջազոյն հեղուկով լեցուն շիշ մը:

Մայրը նոր գուլպաները հագցուց Արամիկին: Մտերու լոյսին մօտ բացաւ հայրիկնի գիրքը ու ըսաւ աղուէն.

- Սորվէ՛, մեր զեղեցիկ լեզուն, մանչս. սորվէ՛, որպէսզի երբ մեծնաս, մեծ մարդ ըլլաս:

Արամիկ շնայեցաւ գրքին։
 - Հապա այս չիլը ի՞նչ է, մայրի՛կ։
 - Ձկան իւղ է, զաւա՛կս. հաղանդ
 Պապուկն է ղրկեր որպէսդի խմես ու զօ-
 րանաս։

Արամիկ նայեցաւ նուէրներուն.
 խանդավառուած չէր։ Ինք ինչե՛ր էր և-
 րազած. ինչե՛ր էր խոստացած հաղանդ
 Պապուկը իրեն։ Ա՞յդ էր աղօթքին պա-
 տասխանը։ Ինչո՞ւ Մինասը նաւ մը ու-
 նէր, Բուրճը՝ օղանաւ, Շուշիկը՝
 պուպրիկ. իսկ ինք...։

- Ես ինչո՞վ խաղամ, մայրի՛կ։
 Մայրն ու ջոյրը նայեցան իրարու։
 Մայրը՝ ծածկելու համար արցունքները՝
 դարձուց ղլուխը ու շփոթած՝ մտաւ խո-
 չանոց։

Մեծ ջոյրը հաւաքեց սեղանին վրայ
 դրուած ճիւղին արծաթագոյն թուղ-
 քերն ու զոննաւոր ժապաւէնները, լե-
 ցուց թիթեղեայ տուփին մէջ ու ըսաւ.
 քնքշու՛թեամբ։

- Ասոնցմով կը խաղաս, Արամի՛կ։
 Տուներ կը շինես, ճամբաներ...։ Տե՛ս,
 այսպէս՝ ծաղիկներու փունջ մը կ'ըլլան
 անոնք. այսպէս ծալլես՝ կ'ըլլայ նաւ,
 այսպէս թւոյն...։

Արամիկ ժպտեցաւ. քաշեց տուփը
 իր մօտ ու սկսաւ խաղալ թուղթերով ու
 ժապաւէններով։ Տուփը բերդ մըն էր իր
 երեւակայութեանը մէջ, ժապաւէնները՝
 ճամբաներ, արծաթագոյն թուղթերը՝
 նաւ, օղանաւ, ձիււոր, զինուոր...։

- Տե՛ս, մայրի՛կ, տե՛ս, զինուորնե-
 րը ինչպէս կը բարձրանան բերդի աստի-
 ճաններէն։

Մայրը թաց աչքերով վերադարձաւ
 խոճանոցէն ու համարեց Արամիկը։

Երբ մոմերու բոցերը սաւեցան վար
 ու հասան իրենց ոտքերուն, մայրը Ա-
 րամիկը դրաւ անկողին։

- Աղօթէ՛, մանչս...
 «Հայր մեր, որ յերկինս ես...»
 Աղօթեց. ու աղօթքի վերջաւորու-
 թեան՝ խաչակնքելէ առաջ՝ չմոռցաւ
 շնորհակալութիւն յայտնել հաղանդ Պա-

պուկին՝ թիթեղեայ տուփին, արծաթեայ
 թուղթերուն ու զոննաւոր ժապաւէննե-
 րուն համար...։

Յոգնած կոպերը անզամ մը եւս
 բարձրացուց վեր, հոն՝ ուր կախուած
 էր փայտեայ խաչը, ու շնջաց։

- Նորէ՛ն եկուր, հաղանդ Պապուկ։

Ճ

Անհունդարտ քամին կը յամառի
 մնայ մանկական առաջին դիտակից Նոր
 Տարիին փոշոտած էջերուն վրայ։ Կը
 քալէ երթոտասարդը դէպի տուն։ Երե-
 սուն տարիներ են անցած, ու ահա դար-
 ձեալ Նոր Տարի, նոր յոյսեր, նոր երազ-
 ներ...։

Կաղանդի արուեստական ծուրը հա-
 սած է մինչեւ առաստաղ։ Միրդերով,
 անուշիկչններով ու խմիչքներով զար-
 դարուած ճոխ սեղանին վերի ծայրը
 նստած է Արամին մայրը շրջապատուած
 իբր զաւակներով ու տասներեօթը թուռե-
 րով։

Կաղանդ Պապուկը եկած է ու մեկ-
 նած։ Մրարներու թուղթերը թափած են
 զետին, ու երեխաները իրենց ճիւղերը կը
 միացնեն ինքնագործ խաղալիքներու ուղ-
 մուկին։ Միծաղն ու զոննակուճիւնը
 կը խայտան մեծերու դէմքերուն վրայ։
 Արամ նստած է մօրը կողքին. իր
 մաքի արահետներէն ստարուպիկ մանուկ
 մը կ'անցնի՝ կարկտնուած տաքատով ու
 սրտով։

- Մայրի՛կ, կը յիշե՞ս Պլանքօն,
 չէ՞, մեր թաղի շունը։

- Կը յիշեմ, զաւա՛կս։ Բայց, ինչո՞ւ
 յիշեցիր այդ անասունը։

- Քիչ առաջ շուն մը տեսայ դուրսը,
 անոր կը նմանէր...։

Ձիւնածածկ բլուրի մը վրայ պահ
 մը իրարու հանդիպեցան ծնող ու մեկ-
 նող տարիները. ժպտեցան ու անցան...։
 Պլանքոյին նմանող շուն մը վազեց միւ-
 ներու վրայէն ու իբր թաթերով աղտո-
 տեց ճերմակ տարածութիւնը...։

Ա. Ա.

155-2000

15/0

ՏԱՆՁԱ՛ՆՔ,

Ա՞ՑՍ Է ՀՆԱՐԱԾ ԲԱԼԱՍԱՆԴ
ԽԱԲԿԱՆՔԻ

Նստած ես գուցե սեղանիդ առաջ
 Նոր տարուան առթիւ քարքեր գրելով,
 Յամկարծ յիշեցիր, չորս ճմեռ առաջ՝
 Ազդիկ մը ճանչցար պարզ ու հոգեքով.
 Կազանդ գիշերով լացի՛ր անարցունք,
 Մեկնէ՛ր պիտի յաջորդ առաւօտ,
 «Շուտ նստակ գրէ, գայն որպէս մտումս
 Համբարե՛մ պիտի», ըսիր սիրայորդ...
 Օտար էր լման՝ սրտիդ աշխարհն այդ,
 Օրերը դիւրի՛ն ձեզ հաշտեցուցին,
 Նոր գրատուներ, նոր համալսարան,
 Նոր ազդիկներու հրմայֆները հին...
 Յետոյ չարչարուած «կորուս» բառին վրայ՝
 Օրերն աննշտար գիծեր քաշեցին,
 Որքան իմացար՝ ազդիկն հեզանագ՝
 Տրուեցաւ ուսման աննահանգ երթին:
 Ո՞ր կարգն է հիմա, ի՞նչ միւզ ընտրած է...
 Սրտատ ծիծաղն իր ա՛ր է, մարեցա՛ւ,
 Արդեօք ան ալ քեզ այսօր կը յիշէ՞,
 Նո՞յնն է, թէ շատո՛նց անունդ մոռցաւ...

Ա՛խ, սիրոյ տենդը վառուեցաւ կրկին,
 Գլուխդ քրտնած՝ սեղանին դրիր,
 Զեռֆերովդ հոն այդ հին, մտերիմ
 Հեռու ազդկան բոյրը տենչացիր...

Զգտա՛ր հարկաւ: Պարի՛կ էր որ գար:
 Հակատդ ասիբուդ՝ կանչեցիր «Նաշի՛կ»
 Բայց արձագանգը պատէ պատ փախու,
 Հեռախօսը գիլ՝ գո՛ւր կանչեց մտիկ:
 Ժողվեցիր ցրուած քարքերդ. վրան՝
 Ինկած գրիչէդ՝ սպիներ կային...
 «Երգանկուքիւն»ներ բաշխեցիր սրտանց,
 Խորֆիդ մէջ սակայն գիտնալով հաստատ
 Որ այս տարին ալ միւսին պէս անցաւ՝
 Ոչ ամանո՛ր է, ոչ բարի՛ կազանդ...

Վ. ԹԷՔԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Պ Ա Տ Է Ն Ա Ն Դ Ի Ն

Մայրս լուսաւորյալաններու դըպրոցէն հաննց զիս ու տարաւ կաթոլիկներուն: Իրեն ըսած էին, թէ հոն կրնայի կատարեալ Փրանսերէն սորվիլ: Եթէ կարելի ըլլար ուսանիլ մինչև սերթի-Փիքա, աճէն ինչ ներելի կ'ըլլար յուսալ, ապագայ յաջողութեանց համար:

Տնօրէն վարդապետը Փրանսերէնով տարիքս հարցուց ու պատասխանը պահանջեց նախ բերանացի ու ապա գրաւոր՝ իր ներկայացուցած պզտիկ քարէտախտակին վրայ:

Առաջին անգամն էր կեանքիս մէջ որ այսքան իբրբու կապուած Փրանսերէն նախադասութիւններ կը լսէի: Վերելմարոյ հասկցայ հարցումը ու պատասխանեցի հազիւ լսելի մայնով, իսկ գրաւոր պատասխանիս բառացի թարգմանութիւնը՝ գլուխ-գործոց մըն էր:

Ես տասը էլ յիմնիմ:

Տարի եւ էլ բառերը, Փրանսերէնի մէջ գրեթէ նոյն ձևով կը հնչուին, ես խնդիրը աւելի պարզացնելով, տարի գրելու տեղ՝ էլ գրած էի:

Տնօրէնը ծիծաղեցաւ ի լուր էշերու այս կարաւանին.

— Եթէ կէս դար առաջ ըլլար, — ըսաւ հայերէնով, — կրնայինք փոխադրական ընկերութիւն մը հիմնել:

Սակայն էշերու բազմապատկութեան այս հրաշքը, կ'երեւի բնաւ դիւր չեկաւ տնօրէնին, քանի որ մեր յուսացած դասարանէն երկու կարգ վար ուղեց զնեւ զիս: Մայրս ընդդէմացաւ, առարկեց, շատախօսեց, երգուընցաւ, մինչև որ միջին ճամբայ մը զտնուեցաւ: Ի՛հ, շատախօսութիւնն ալ երբեմն իր բարեքները ունի:

Ես որ ինքզինքս հանճար մը կը կարծէի (մայրս ու դրացիները այդպէս համոզած էին զիս), դասարան մտած պահուս բնա՛ւ պատշած ընդունելութեան շարժանացայ: Ուսուցիչը նոյնիսկ անունս չհարցուց: Ետեւի նստարաններէն մէկը ցոյց տուաւ ձեռքի նշանով մը: «Մրեւի շտա խօսիլ չի սիրեր այս ուսուցիչը», խորհեցայ: Սխալած էի: Անշուշտ ինք ալ սխալած էր խեղճ արտաքինէս դաստիարակի, (ինչ որ էր սառն ընդունելութիւնը կը բացատրէր), որովհետեւ հետագային ուղղակի մղձաւանջ մը պիտի դառնայի իրեն համար:

Մեր դասարանը տարբեր էր ուրիշ դասարաններէ: Ընտանեկան ջերմ եւ մտերմիկ մթնոլորտ մը կը տիրէր հոն:

Ուսուցիչը երկարահասակ մարդ մըն էր, որ կարճատես էր հաւու մը նման: Սովորութիւն չունէր ամպերնին

վրայ նստելու, այլ աթոռը քաշած, քառորդ ժամը անդամ մը տեղ կը փոխէր դասարանին մէջ, շատախօս կիներու նման, որոնք ամբողջ օրը դրացիէ-դրացի կը տեղափոխուին...

Երևակայեցէք ուսուցիչ մը, որ աւտուրնէ իրիկուն կը զբաղի նոյն դասարանով: Հայերէն, Ֆրանսերէն, արաբերէն, թուարանութիւն, ամէն նիւթ ինք է, որ կը դասուանդէ, երբեմն խոժոռ, երբեմն ուրախ, երբեմն ջղային, սակայն միշտ համակրելի: Ամէն պահնդուքի ու ծիծաղի խնճոյք մըն էր, որովհետեւ մեզ ալ վարակած էր իր կատակախորութեամբ ու սրամտութեամբ, առանց դոյզն մտահոգութիւնն իսկ ունենալու, որ կրնայինք օր մը չափազանցութիւններու մէջ մտնել:

- Ուսուցիչին՝ պարոն կ'ըսեն, - կը բացատրէր մեզի, - ուսուցչուհին՝ օրինորդ, վարդապետին՝ վարդապետ: Երբ մէկուն հետ կը խօսիք, ճշդեցէք թէ որո՞ւ հետ կը խօսիք: Օրինակի համար, երբ ձեզի հարցում մը կ'ուղղեմ, պէտք է ձեր պատասխանին վրայ «պարոն» բառը աւելցնէք:

- Այո՛, պարո՛ն, - կը գոռայինք միաձայն:

Այս ճշդումը կը քարոզուէր ամէն անգամ որ աշակերտ մը մոռնար պատասխանին կարեւոր բառը:

- Ո՞վ էր Յիսուս:
- Յիսուս Աստուծոյ որդին էր, պարո՛ն:
- Ի՞նչ ըրաւ Յիսուս:
- Յիսուս խաչին վրայ մեռաւ, պարո՛ն:
- Ինչո՞ւ մեռաւ Յիսուս:
- Որովհետեւ Հրեաները խաչեցին զինք, պարո՛ն:
- Ինչո՞ւ խաչեցին:
- Որովհետեւ Հրեաները մտրակով ծեծեց տաճարին մէջ, պարո՛ն:
- Ինչո՞ւ մտրակով ծեծեց:
- Ձեմ դիտեր, պարո՛ն:
- Ինչո՞ւ չես դիտեր:
- Ձեմ դիտեր, պարո՛ն:

- Ձեմ դիտե՛ր, չեմ դիտե՛ր, պարո՛ն տը անցիր:

Պատը բաւական լայն էր, բարեբախտաբար, եւ ամբողջ դասարանին համար «պատը անցնելու» բաւարար տեղ կար, որովհետեւ այս «պատը տնցիր» օրը մի քանի տասնեակ անգամ կը կրկնուէր դասարանին մէջ:

- Ձէօրէքճեան, Հոս եկուր:
- Այո՛, պարոն:
- Ձրօսանքին ինչո՞ւ պատէն ցատկեցիր:
- Ծարաւ էի, պարո՛ն:
- Է՛հ, դպրոցին մէջ ջուր չկա՞յ:
- Ձովացուցիչ մը դնել ուղեցի, պարո՛ն:
- Կը լսէ՞ք, պարոն Ձէօրէքճեանը զովացուցիչ մը դնել ուզած է եւ պատէն ցատկած է: Է՛հ, ի՞նչ խմեցիր նայինք, քոքա-քոյա՞, թէ փէփսի-քոյա:
- Ճէլուլ խմեցի, պարո՛ն:
- Անճաշ՝կ, պարոն անցիր:
- Երբ «պատը անցիր» կը պոռար, պարոն թապրիկեան կարծես մահուան վճիռ մը կ'արձակէր, այնքան դաժան արտայայտութիւն մը կը ստանար դէմքը: Պատը, իր ակնոցով, անարգանքի սիւնն էր, որուն կ'ուղէր դամեւ անճազանդ ու անպարտաճանաչ աշակերտները:
- Ո՞վ էր Վարդան:
- Վարդան քաջ մէկն էր, պարո՛ն:
- Ի՞նչ ըրաւ Վարդան:
- Վարդան թիւրքերուն դէմ պատերազմ ըրաւ, պարո՛ն:
- Ինչպէ՞ս պատերազմ ըրաւ:
- Առտուն կանուխ, պարո՛ն, ամէն կողմէ, ամէն տեսակ մարդիկ եկած էին, պարո՛ն:
- Դուն ալ հո՞ն էիր:
- Ո՛չ, պարոն:
- Ուրեմն ինչո՞ւ կ'ըսես՝ ամէն տեսակ մարդիկ:
- Հայերը, թիւրքերը, Ղեւոնդ Երէջը, փիղերը, պարո՛ն:
- Անճարա՛կ, պարոն անցիր:
- Վեց ամիս պարոն թապրիկեանին

աշակերտելէ ետք, ա՛յն հղբակացութեան եկած էի, որ մեր դասարանէն չէնք-չնոր՛ք մէկը անկարելի էր որ դուրս դար: Թիբեւս, մեր քսան եւ Հինգ ընկերներէն մէկը կամ միւսը կարենար օր մը մարդավարի մասնագիտութիւն մը ձեռք բերել, սակայն, ընդհանուր առմամբ, բոլորս ալ դատապարտուած էինք դառնալու պատերու հետ ազիրս ունեցող արհեստաւորներ, Հիւան, Ծեփող, ներկարար, աֆիշ փակցնող...

- Դատիթեա՛ն, մէկ մէկ ալ քանի՞ կ'ընէ:
- Երկու կ'ընէ, պարո՛ն:
- Ինչո՞ւ երկու կ'ընէ եւ ոչ թէ երեք:
- Ձե՛տ դիտեր, պարո՛ն:

■ Պա՛տը անցիր:

Պատը անցնելու միակ թիկնածուն, անկասկած ինքն էր, մեր շնաշխարհիկ ուսուցիչ Խաչրիկեանը: Այս մասին անփերայա՛ն կերպով համաժառ էինք դասարանի քսան եւ Հինգ աշակերտներս: Որովհետեւ իր նուազագոյն յանցանքը՝ շատախօսութիւնն էր: Իսկ իր հարցասիրութիւնը՝ սահման չունէր: Իր հարցումներուն կ'ընկերանար ձեռքը, պարոյկի ձեռով շարժում մը դժելով օդին մէջ: Ի՞նչ, ի՞նչու, ի՞նչպէս, ե՞րբ, ո՞վ, քանի՞, հարցումներ էին որոնցմով կը սկսէր իր ամէն մէկ նախադասութիւնը, որ ընդհանրապէս կը վերջանար «պա՛տը անցիր»ով:

- Ձիւնկերեա՛ն, ոտքի ել տեսնե՛ք:
- Այո, պարո՛ն:
- Ես, դուն, ան, մենք, դուք, ասոնք ինչե՞ր են:
- Դէ՛մքեր են, պարո՛ն:
- Քո՞ւ դէ՛մքի պէս:
- Ո՛չ, պարոն:
- Հապա ինչո՞ւ կ'ըսես՝ դէ՛մքեր են:
- Անձնական դերանուններ են, պարո՛ն:
- Հա՛, ուրեմն ինչո՞ւ ըսիր՝ դէ՛մքեր են... պա՛տը անցիր:

Երբեմն կը համաձայնէինք, ծիծաղելի պատասխաններ տալով իր հար-

ցումներուն: Ասիկա կը պատահէր ա՛յն պահուն, երբ դասարանին կէսէն աւելին պատը անցած կ'ըլլար:

- Հէքիմեա՛ն, ո՞րն է Անգլիոյ մայրաքաղաքը:
- Նո՞րը թէ Հինը:
- Ի՞նչպէս նորը թէ Հինը, Անգլիա սկիզբէն ի վեր մէ՛կ մայրաքաղաք ունեցած է:
- Ես միշտ կը կարծէի, թէ երկու մայրաքաղաք ունի, պարո՛ն:
- Է՛, տա ալ նորութիւն է: Ըսէ՛ տեսնե՛ք, որո՞նք են այդ մայրաքաղաքները:
- Մէկը մոսկոյ, պարո՛ն, իսկ միւսը կարծեմ Պելլինն է:
- Ենթահայրութիւններս, պարոն աշխարհակալ, անգլիական կայսրութիւնը բաւական ընդարձակեցիր, պա՛տը անցիր:
- Դո՛ւն նայինք, Պուլղուրճեան, Փարիզ ըսելով ի՞նչ կը հասկնաս:
- Բա՛ն մըն ալ չեմ հասկնար:
- Այսինքն ըսել կ'ուզեմ ի՞նչ է Փարիզը:
- Աշխարհի ամենաբարձր լեռն է, պարո՛ն:
- Է՛, դուն ելե՞ր ես այդ լեռան գագաթը:
- Ո՛չ, պարոն:
- Ուրեմն ինչե՞ն դիտես որ ամենաբարձր լեռն է:
- Անցեալ օր դուք ըսիք, պարո՛ն:
- Պա՛տը անցիր, պա՛տը անցիր, ես կեանքիս մէջ անանկ բան ըսած չունիմ:
- Նայուածքները յառած էին պարոն Խաչրիկեանին, հարցում մը ընդունելու ակնկալութեամբ:
- Սիսեռեա՛ն, ի՞նչ է Վոլկան:
- Օթօ է, պարո՛ն:
- Է՛, դուն հեծե՞ր ես այդ օթոն:
- Այո, պարո՛ն:
- Քանի՞ անիւ ունի այդ օթոն:
- Հինգ անիւ, պարո՛ն:
- Հի՛նգ անիւ... ո՞ւր դրուած են այդ հինգ անիւները:

- Զորքը տակը, մէկն ալ հասելը, պարոն:

- Պրաւօ, պրաւօ, այդ օթոն ինչպէս ապրանք է:

- Ուսական, պարոն:

- Պա՛ւը անցիր, պա՛ւը անցիր, տխմար, վրիկան ուսական է, այո, բայց օթօ չէ, դէմ է:

Երկրորդ աշակերտ մը միջամտեց.

- Ո՛չ, պարոն, օթօ է:

- Դո՛ւն ալ պատը անցիր:

Ուրիշներ, իրենց կարգին հաստատեցին.

- Մենք տեսած ենք այդ օթօն, պարոն:

- Դուք տեսած էք այդ օթօն, արեւմտահայեր, բուրդ ալ պատը անցէք:

Ուղեցի հակասել թուրին.

- Ես տեսած չեմ, պարոն:

-Դո՛ւն, դուն ալ պատը անցիր, - դռնաց իզագար զբռնում մը, երբ այսօր տարդ տեսած է, դուն ալ տեսած ըլլալու ես:

Ամբողջ դասարանը պատը անցած էր:

Տարեւրջանը իր լրումին կը մտնէր:

Պատին ներքը տեղ-տեղ սկզբնաւոր էր, տեղունած, դժուած, իսկ մեզմէ շատերու վերաբերուածներուն ունն ու թեւերը մաշած էին պատը անցնելէն, նոյնիսկ նշանաւորներուն ուսերուն վրայ կարկտաններ կը տեսնուէին:

Դասարան մտած առաջին օրէն իսկ, խոր ցանկութիւն մը բոյն դրած էր սրբորին մէջ ու օրեր ամբողջ մտածած էի այդ ցանկութիւնս երազործելու մասին:

Իրիկունը մի քանի ժամ պզտիկ կարուք թերթատած էի ու պատրաստած էի քանի մը հարցումներ, նեղ կապուածեան մտտնելու համար Պրն. Պապրիկեանը:

Առաջին պահուն իսկ սկսայ.

- Ո՞վ է Շէքսպիէր, պարոն:

- Ալիսարհի մեծագոյն թատերադիրն է: Զե՛ս լսած, տխմար:

- Ե՛րբ մեռած է, պարոն:

- Կարծեմ մեռած է 1856-ին:

Յաջորդ պահուն ուրիշ հարցում մը.

- Ե՛րբ շինուած է Էյֆէլի աշտարակը, պարոն:

- Կարծեմ շինուած է 1900-ի ստեղծները:

- Իսկ Բիզայի ծուռ աշտարակը:

- Այսօր շատ հարցաւէր դարձած ես դուն, մանչուկ, - ըսաւ լրջանալով, նախ եւ առաջ ըսեմ՝ թէ Բիզայի աշտարակը ծուռ շինուած չէ, այլ գիւղի ծուռն է, իսկ թէ ո՞ր դարէն կուզայ, շատ ալ դժուար չէ գուշակելը, Զ. կամ է. դարուն կառուցուած է անպատճառ:

Վերջին պահուն, մտառ բարձրացնելով, դարձեալ խօսելու հրաման ուղեցի:

- Նորէն ի՞նչ ապուշ բան ունիս ըսելիք, - սրբողեցաւ:

- Վերջին հարցում մըն ալ, պարոն, - ըսի ինքնավստահ, - ո՞րն է Գալիֆորնիոյ մայրաքաղաքը:

Ուսուցիչը շփոթեցաւ:

- Շիտակը, - ըսաւ կարճելով, - վստահ չեմ, սակայն կը կարծեմ թէ Սան Ֆրանսիսքոն է, հաւանական նկատելով ճանդերմ որ կրնայ լսու Էնքըլըրը ըլլալ:

Շակուեցայ, հազացի:

Շակուեցայ, հազացի:

- Եսա կը ցաւիմ, պարոն, - ըսի քմծիծաղով մը, - մեղք որ այս բաները ձեր աշակերտներէն պիտի սորվիք: Գալիֆորնիոյ մայրաքաղաքը կը կոչուի Սաքրամենթօ, սա՛ մէկ: Բիզայի ճուռ աշտարակը շինուած է ժՖ. դարուն, սա ալ՝ երկու: Էյֆէլի աշտարակը շինած է Փրանսացի ճարտարագետ Կիսթաւ Էյֆէլ՝ 1889-ին, սա ալ՝ երեք, իսկ մեծ թատերադիր Ուիլիամ Շէքսպիէր մեռած է 1616-ին, ինչպէս դուք ըսիք այս առաւօտ: Թերեւս մեծ թատերադիրն կհանրը բոստոնն տարի երկարելով կ'ուզէիք առիթ տալ իրեն, որ մի քանի ողբերգութիւն եւս գրելու ժամանակ ունենար, սակայն ձեր սխալը առիթ տուաւ որ ստեղծուի այս ողբերգական տեսարանը, որուն Շէքսպիէրեան հերոսը անարժանաբար դուք էք այսօր, պարոն:

րո՞ն: Պա՛տը անցէք, պա՛տը անցէք, պարո՞ն, կը շնորհաւորեմ ձեզ մէկ բանի համար. ամբողջ տարին ամպիտոնին վրայ շնտեցաք: Կ'երեւի դուք ալ թերահաւատ էիք ձեր ուսուցչական կարողութեան վրայ:

Լուսթիւնը ճնշիչ էր:

Պատրաստուած էինք բոլորս, դիտէինք թէ պիտի չկարենար պատասխանել ձեր հարցումներուն, ու ի տես իր շփոթումին, խնդալէն պիտի մարէինք: Արդէն գրասնօրին զինք պատկերացուցած էինք ձեր մաքերուն մէջ ու կանխիկ խնդացած, այնքան որ ձեր աչքերը արցունքոտած էին: Ապա երեւակայած էինք զինք զիրար վազրի մը նման, որ ցաւէն կը մոնչէր ու ի լուր ձեր խայթող քրքիչներուն, ձեր վրայ կը խոյանար, ու մենք խոյս կուտայինք, աւելի ծիծաղելի կացութեան մը մասնելով ձեր ուսուցիչը...

Այս բոլորէն՝ թան մը չպատահեցաւ:

Քար լուսթիւնը կը ծանրանար:

Չանգը հնչեց: Մահաղանգ էր կարծես, որ կը թաղէր ամբողջ տարուան մը ուրախ ու կենսախրդ ապրումները:

Իրարու կը նայէինք, շտտերուն աչքերը թրջուած էին յուզումի արցունքներով:

Տ

Տարիներ յետոյ, օր մը հանդիպե-

ցայ իրեն, երբ մտազբազ կը քալէր փողոցին մէջ:

- Ի՞նչպէս էք, պարո՞ն, - հարցուցի, - Ի՞նչպէս է պատը:

- Չարանճի, - ըսաւ խնդալով, - ես լաւ եմ, պատն ալ տեղն է, սակայն որդէն վեց տարիէ ի վեր ձգած եմ ուսուցչութիւնը:

- Ի՞նչ լաւ օրեր էին, պարո՞ն, այնպէս չէ՞:

- Այո՛, լաւ օրեր էին, դուք ալ՝ լաւ աղաք էիք, խելացի ու այնատասեր: Բոլորդ ալ մարդ դարձաք: Բայց վերջին տարիներու աշակերտները զգուելիօրէն ծոյլ էին, ցրուած ու բթամիտ: Մինձա, պար, կիթա...

- Իսկ հիմա ի՞նչ կ'ընէք, - հարցուցի:

Առանց մեծ խանդավառութեան, ըսաւ թէ հաշուակալ էր, աղիւսի գործարանի մը մէջ, բաւական լաւ ամօականով: Ապա գառնօրէն աւելցուց.

- Պա՛տը անցէք, պա՛տը անցէք, կը պոռայի ձեզի: Վերջին հաշուով կ'ս եղայ պատը անցնողը: Առտուընէ իրիկուն գործս պատերու հետ է: Երկու մէթր բարձրութեամբ, յետուն մէթրնոց ցանկապատի մը համար քանի՞ աղիւս պէտք է: Հաշուէ, բեռցուր, զրկէ, զանձէ: Ի՞նչ ընենք, իմ բախտս է եղեր: Այսպէս պիտի շարունակենք, մինչեւ որ անցնինք պատէն անդին...

Ս. Ս.

Ս Վ Ս Ե Լ Է Ա Ռ Ա Ջ

ԵՔազինէի է. ասրուան Ան-րզ թիւով հարգած էինք ընթերցողին, թէ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային ՎՄ. Արեղեանի անուան գրա-հանութեան ինստիտուտը Գեղամ Անուան կոչուածին ստորագրութեամբ մե-հազարութիւն մը լոյս ընծայած է, ի մասին Վազգէն Շուշանեանի: Մենազո-ղը, ի պատկերի իւրում, բաւորովին լզրնած ու անճանաչելի զարմուշած է Շուշանեանի զազագործական անձը, իտարգախ մէջբերումներու եւ կամոյական ձեկնարանութիւններու ընդարձակ անպարկէշտութեամբ մը:

Վազգէն Շուշանեանի ներկուակցական պայտաբը շարաշահոյ առաջին փորձը չէ առիկա, ուրիշներու եւս հանդիպած ենք, բայց կարգացած եւ անցած, նոյնը պիտի ընդհնէ եւ ա՛յս անգամ, եթէ, անլուշտ, շարաշահը թ'նք սպան ըլլաք իր շարաշահութիւնը, բայց երբ պատասխանատու հաստատութիւն մը իր հո-վանաւորութիւնը կ'ընծայէ տնօր, հարցը կը փոխուի եւ հարկ կ'ըլլայ խոսք բանալ այդ մասին եւ ընել կարգ մը մասնանշումներ:

Ամբիխապէս նմալլ մը՝ գրուած ու հովանաւորուած այդ աննեթեթու-թեանն:

Սոսքը կը վերաբերի փետրուարեան սպասամբնէն հաջ՝ Շուշան-եանի փախուտն ու եւ այդ արեւու հոգեբանութիւնը պատկերացնող նոյն ինքի Շուշանեանի Վերջայ եւ արկածի ազաբըն անուն գործին:—

«Եւ Շուշանեանը գրեց իր կեանքի այդ շքեանի մասին եւս: Գրեց ՎՄ-բայ եւ արկածի ազաբը՝ վեպը: Հայրենի երկրի այդ ժամանակաշրջանի քա-տային վիճակը պատկերող եւ քառսի ու մղձաւանդային պայմաններում սի-բային մի գողտրիկ պատմութեան վրայ հիւսուած վեպը շատ աւելի յոտն է, քան քուստ է տապին հայեացքից: Վեպը ասրիներ շտրումակ՝ շանագոր-ծելու է դաշնակցութեան կողմից, տողամէջերում համայնավարութեան եւ համայնավարների հոսցէին ասուած ակնարկութիւնների համար: Բայց, երբ կարգում եւ վեպը ուշի-ուշով, սնանում ու գումում եւ, որ իրենց հակամո-լուցքի մէջ պատանի հերոսները չէին իմանում, թէ ինչ են անում: Նրանց բոլոր լծակները ուրիշի ձեռքին էին: Սիրոյ եւ արկածի մի պատմութիւն է վեպը, որտեղ բարայտն ու յուզիչ են ծրուամղի (Շուշանեան) ու Արփիկի սիրոյ տառապաններն ու սպրումները: Բայց ստեղծագործութիւնը սիրոյ մի դժբախտ պատմութիւն լինելուց շատ հեռու է, եւ ուղղուած է նեցց պաշ-տակցութեան դէմ: Գրքի վերջաւորութիւնն իր սուր կողմով ճոյն կազմա-կերպութեան եւ նրա քարոզած գաղափարների մերկացումն է:»

Այս խորաթափա՞նց մտքին թուտաւ հզրակայութիւնները շատուէն կ'ուշուս համար՝ անհրաժեշտ է թերեւս ընդհուպ ներկայացնել ճշնեց գաշ-նակցութեան դէմ ուղղուած յիշուլ վեպին կարգ մը ցարուածքներ, ուր անառարկելի յատակութեամբ մը կ'երեւայ, թէ ո՞վ ինչպէ՞ս ԵՔազինէն է...

Ահաւասիկ:—



**ՍԻՐՈՑ ԵՒ ԱՐԿԱՇԻ
ՏՂԱՔԸ**

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

«ՀԱՅՐԵՆԻՔ» ԱՄՍԱԳԻՐ, Զ. ՏԱՐԻ
ԹԻՒ 3, 1928 ՅՈՒՆՈՒԱՐ

Փետրուարեան աստամբուրեան տղմուտ ու անսպառ գիշերներէն մէկն էր: Կայրէիմք այն միակ գիւղաքաղաքին մէջ, որ դեռ գերի էր օտար ու ծանր կրունկներու տակ, ծուխէ խեղդուած, աղքատ, աղտոտ, ցուրտ ու կիսախարխուլ հանրակացարանի մը մէջ: Շատ մը տղաք էինք, ա՛հ, դեռ պզտիկ, բայց մեր եղբիները ընդարձակ էին տոնելուքեամբ, մեր նայուածքները խիստ ու ամուր, ուր մեր ժողովուրդին տառապանքին տակ, այդ զանգուածեղ, այդ հսկայական, այդ զարհուրելի բեռան տակ, մեր ուսերը դեռ հաստատուն էին, հաւատացե՛ք, երիտասարդ տղաք, որ դեռ չէ՛ք համբուրած մեր հայրենի ապերախտ հողը:

❖

... Տղաք կային, որ կը մարտնչէին այդ խոժոռ եւ դաժան գիշերով, օտար ու քիրտ ուժի դէմ: Ա՛հ, ե՞րբ, ե՞րբ պիտի գային անոնք, այդ ըմբոստ, այդ «աւազակ տղերք»ը:



Կը ֆալէիմք կողմ-կողմի ու գլխահակ: Յանկարծ պատի մը վրայ փակցուած տեսանք «Մարտակոչ» համայնավար թերթին վերջին թիւը: Բնագրաբար կեցանք ու սկսանք կարդալ, բայց քանի կը կարդայինք, զգայ-նութիւննիս կը մեծնար: Մեր հոգիներում ամբողջ ուժովը կ'ստեղծէ համայնավարները, եւ այն միտքը, թէ այդ ժպտում ու անուշ ֆազաքն ալ անոնց կրօնկներում տակն էր, բարկացուց մեզ: Ստեղծ կը ճայէինք իրա-րու: Կը գգայի որ ճոյն ցանկութիւնը կը շարժէ ճան ընկերս:

- Սրիկամերը, - մայրաց սկսանքում մէջէն ու արագ շարժումով մը կռնակը դարձուց թերթին ու պատուեց գայն:



- Ընկերուսի, տեւէ՛ք ձեր թաշկիմակը...

Անշուշտ «ընկերուսի» բառը գայրացուց գայն: Նայեցաւ ասելու-թեամբ իր ազուար ու համարձակ աչքերով ընկերոջս շուարած դէմքին ու շարունակեց իր ճամբան: Կ'երեւի՝ ենթադրեց, որ համայնավար լսկուտներ ենք:



- Իսկ ձեր միւս ընկերները ո՞րք են կս բողէիս:

- Հայաստան... դժուար է վերագտնուլը. ես եւ ընկերս առաջին-ներն ենք որ կրցանք փախիլ:

- Ինչո՞ւ չմնացիք Հայաստանում:

- Համայնավարները չենք սիրեր, - ըսի համարձակ, - Հայաստանը դարձած է կրկին Ռուսաստան: Մենք ալ որոշեցինք վերագտնուլ մեր Հայաստանը:

- Պօլի՞ս, - հարցուց ժպտում:

- Այո՛:

- Ուրեմն Թիֆլիսը չէ՞ք սիրում...

- Շա՛տ. շա՛տ, օրհորդ, իսկ եթէ համայնավարները գայն գրաւած չըլլային, երբէ՛ք անգամ աւելի շատ...

- Այո՛, - հծծեց ցատկ, - աներցիմ մեր շէն ու սիրուն Թիֆլիսը:



Ձիւն ճմռ էր, Յունուարին խումբով՝ հարիւր դարացակամներ կ'անցնէինք Դիլիջանէն, պարտասուն ու ցրտաբեկ, ծածկուած ճիւղով: Կիրակի էր: Ձիւնը առատ ու խոշոր փաթիլներով կ'իջնէր գիւղաճաղաքին

Վրայ ու մեր ուսերում: Փողոցները լեցուն էին երիտասարդ տղաց ու աղջիկներու բազմութեամբ: Համայնավարներ կ'անցնէին թիւ թիւ երիտասարդ հայուհիներու հետ՝ երգելով «Միջագայնականք»: Ռուս գինուարներ մեզ կ'առաջնորդէին բանտ: Երբ հասանք քաղաքին հրապարակը, բազմաթիւնը աւելի շատցաւ: Գերման համայնավար Ռոզա Լիւստենպուրկի և կարլ Լիբկնիխտի մտնում տարեդարձը կը տօնէին: Կեդրոնը բարձրացուցած էին անպիտան մը: Յանկարծ աղջիկներու և տղաց բազմութիւն մը խուժեց վրանիս: Աղջիկները մեզ կ'անարգէին «Գաշնակ լակտոներ» և այլ բացազանչութիւններով:



Ձմրան կ'էտին, ցուրտ ու անեղբ գիշերներով, ի՞նչպէս կը ցանկայինք, որ Հայոց աշխարհի գարունը գար մեր վրայ, ելլէի՛նք ամառ: Գիւղաբազաբին աղջիկները կ'ըսէին մեզի որ շա՛տ, շա՛տ... բուս-բուս մանիշակներ կը բուսնին մեր ծառերուն տակ: Ձկրցանք մեր անտառներուն մանիշակները հետտեսիլ, քաղիլ զանազան, դնել մեր լամբակներուն ու ուրախանալ գոնէ մեր ազաբախտ երկրին ծաղիկներովը: Ուշ գիշերին փախանք գազ մտրդոց պէս, ես ու ան, երկու պզտիկ տղաք, կ'ծկուած ազտու երկաթուղակառփի մը անկիւնը, կարծուած մեր յիշատակներուն խորը:

- Ի՞նչ կը մտածես, երուանդ, - հարցուց ընկերս յանկարծ:
- Կը մտածեմ Մեծ-Ղարաբիլիսէի անտառին մանիշակներուն մասին, գոր չկրցանք քաղիլ...
- Այո՛, - բաս ևեզ, գլուխը ծակով ու ձեռքը դնելով ծունկիս, - մեր մանիշակներուն...



- Խեղճ ամի՞ծեմ, երկար տաննէ ի վեր այոպէս չէի ճաշած, գիտես, Հայաստան՝ երբ երազնիս հաց կը տեսնէիք...
- Տակուի՞ն մի՛ խանդավառուիր, սղասէ՛ տեսնեմք...
- Իրաւունք ունիս, - հծծեց լուրջ, - Խեղճ ամի՞ծեմ, սքանչելի երկիր է... եթէ համայնավարները չըլլային... մայրերնին էշերը...

«ՀԱՅՐԵՆԻՓ» ԱՄՍԱԳԻՐ, Զ. ՏԱՐԻ
ԹԻՒ 4, 1928 ՓԵՏՐՈՒԱՐ

Գիշերով էր, որ ես ու վտերսը լքեցինք Մեծ-Ղարաբիլիսէն: Երկուքս ալ՝ կողմնակի ճամբաներով անցագիր ունէինք, բայց կը վախճայինք, որ վերջին պահուն կը վերադարձնեն մեզ: «Յեղափոխական Կամիտի» նախագահը, թո՛ւ խոստում ու տրտում աչքերով մարդ մը, մասը բարձրացուցած բաժն էր, որ մեզի պէս տղաքները իրենց պէտք են, թէ

Քոյլ պիտի չտար որ մեկնէին: Մեզ կը խոստանար զրկել Մսկուա՝ Հա-
գարեան հեմարան, բայց անգամ մը լեցուած էր մեր սիրտը ատելութեամբ:
Կ'ըսէինք՝ ընկեր, բայց դողդոջ ու ատելիվառ շրթներով:

•

Հովը կ'ոռնար մեր խեղճ ու աղքատ հանրակացարանին առջեւ: Յան-
կարծ կը լսուէր, հեռուէն, իրա՛ւ, տակաւին շատ հեռուէն, հրացանաձգու-
թեան ձայն, որ մեզի մօտ կը թուէր: Կը զգայինք յստակօրէն կռիւը՝ հե-
ռա՛ն: Մեր սրտերը կ'ուռէին: Մեզմէ մէկը կ'ըսէր՝ խույ, բայց լի ձայնով,
սրտին խորէն, սիրոյ ազազակի մը պէս՝

– Պիտի գան, պիտի գան...

Այո՛, վստահ էինք, որ պիտի գային անոնք: Ու կը սկսէինք երգել:
Երգել բարձր ու ամուր ձայնով: Լիսեազագ: Արդար էր, որ այդ տարիքիս
չվախեայինք ոչ մէկ բանէ: Համայնավարները մեր վրայ կը նայէին այդ
օրերուն զսպուած ատելութեամբ: Ու շա՛տ էինք: Հարիւր հոգի: Մեր ե-
րիտասարդ ու անօթութենէ իսկ չընկնուող հասակներով կը լեցնէինք փո-
զոցները եւ կը նայէինք լրբօրէն եւ յանդգնութեամբ ռուս կարմիր բանա-
կայիններուն, որ կ'անցնէին միշտ զինուորական խաւածոյն ու նուազով,
սևաբեկիւտ համար միակ գիւղաբնակներէն հասարակութիւնը, որ դեռ գե-
րի կը մնար իրենց կրօնկներուն տակ: Կ'անցնէինք հպարտ, մենք մեր հայ-
րենիքին մէջ իսկ պանդուխտ տղաք, հայրենի ժրհատած կ'փոզոցներէն,
մեր բարձր ու առաջ ձայնով լեցնելով շրջապատը: Կ'երթայինք կայարան,
դիտելու խուճապն ու տագնապը, որ օրըստօրէ կը մեծնար, ու կը հըծ-
ծէինք.

– Պիտի գան, պիտի գան:

Ու ի՞նչ գծնդակ, ի՞նչ ցուրտ, ի՞նչ անաւոր էր գիշերը անօթի գիւ-
ղաբնակներէն վրայ: Անկիւններէն կը բարձրանային տառապանքի ու հոգե-
վարքի ձայներ: Կին մը քարտուած կողերով կը կազկանձէր մեր կացարա-
նէն քիչ մը հեռու: Պատիկ ու տարաբախտ մուրացիկ մը ամէն գիշեր կու-
գար ու կը սողոսկէր մեր դռնէն ներս: Մեր հանապազօր հացէն իւրաքան-
չիւրս պատիկ պատառ մը բաժին կը հանէինք այդ չարչարուած անասունին,
այդ հէզ, աներդիք տղուն, որ կը կշտանար ու կը ժպտէր: Տեսակ մը գե-
րեզմանի ծաղիկ՝ իր այլանդակուած դէմքին վրայ: Երբեմն չէինք կրնար
զուգել մեր սրտերէն բարձրացող յուզումը ու կը սկսէինք երգել բարձրա-
ձայն՝ հայրենական երգեր: Անծանօթ ու արի զինուորի մը անունը կը հաս-
նէր ականջներուս: Կ'ըսէին ան է, որ կը վարէ կռիւը, այնտե՛ր, Համաւ-
լուէն անդին: Մեզմէ մէկը, որ չէր կրնար հանգստօրէն նայիլ՝ ոռոտական
ու թրփական բանակները մեր հողերուն վրայ ճշուղ հայերուն կ'ըսէր՝

– Մուրերնիդ կարուկ, մեր տղա՛քը... կտրուկ...

Ու իր աչքերը կը շողային: Ու պատիկ, պատիկ էինք թուրս: Խնթ-
ու չաք տղաք՝ սիրոյ ու երջանկութեամ ծարսու, որ կը տառապիմ իրենց
տարիքէն մեծ ցաւով մը: Ու մեր ձայնը կը լեցնէր ծուխէն յեզզուած կա-
ցարանը:

Հուրբա՛, Հուրբա՛, Հուրբա՛...

Քաղ Կուռային սուրբ թող շողա՛

Անկիրնէ մը խոհեմ ընկեր մը կը փսփսար, ամէն գիշեր, նոյն յամա-
ռութեամբ «կամաց, տղա՛ք, կամաց», ամէն գիշեր հայեցողութիւններու
նոյն տարափը ընդունելով իր խոհական գլխուն: Ու կը բնանայինք վաս-
տակարեկ, դժբախտ, բայց հաւատարմով, որ պիտի գան, ամոնք, որ չեկան,
ամոնք, որ մնացին կէտ մամբամ՝ թեւաբափ ձգելով մեր թռչուն յոյսը...



Ընկերս կը վիճէր հիմա բարձրաձայն, վառի, համոզելու ու յազ-
թելու բնական ու բարբարոս ցանկութեամբ Ներսիսեանցիին հետ, որ կը
յարձակէր վանեցի վաշխառուի մը յատուկ լրբութեամբ՝ Հ. Յ. Դաշնակ-
ցութեան վրայ՝ շնորհակալով միշտ ստորնահալ, կծկուիլ շէտփութեան առ-
երեւոյթ պատուարի մը հտին:

- Քամերուք ընթացաւարտներ էինք, - կ'ըսէր ժպտելով իր պզտիկ
ու շարաննի աչքերուն մէջէն, - մէջերնիս մէկ հոտ Դաշնակցական կար,
մէկ ալ ես էի՝ անկուսակցական, միւսները բոլորը՝ համայնավար էին...

- Բոլորին ալ տոյրերը... - ըսաւ Վահրամը վայրագ:

Շէկ ու բարձրահասակ տղան կը խնդար ուրախ ու կայտառ, բարե-
կամարար կը գարնէր ընկերոջս ուսին, իսկ միւս վանեցին աւելցուց ժըպ-
տուն ու յայտնապէս անկեղծ՝

- Ե՛ս ալ միասին...

- Ե՛ս ալ, - ըսի խեղկատակ:

Ներսիսեանցիին կը մայր նեղուած, բայց միշտ ժպտուն:

- Ես, - ըսաւ փոքր վանեցին, որ Պոլիս պիտի երթար, - կը պատ-
կանիր Հ. Յ. Դաշնակցութեան (ու այս վերջին բառերը արտասանեց մառ-
նաւոր հպարտութեամբ մը, շեշտելով, ուրախանալով, որ կրնայ. իրաւունք
ունի գանձք արտասանելու, կ'ըսէր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան)
ու ցոյց տուաւ բանկանակին ներքի կողմը գիւնացում մը...

- Ե՛ս ալ, - ըսաւ շէկը ու աւելցուց Ներսիսեանցիին ցոյց տալով, -
համայնավար չէ, բայց հակադաշնակցական է:

- Ո՛չ, - բողոքեց Ներսիսեանցիին, - հայ եմ պարգապէս, առանց ա-
ծականի, էլի՛, ու բոլորի թերութիւններն էլ ասում եմ...

- Այո՛, այո՛, - հեզմեց ընկերս, որ յատկապէս կռուելու տրամա-
դրութիւն ունէր, - ըսէք որ վանեցի վաշխառու էք. - ու օճիքը թօթուեց,-
այն վանեցին, որ Դաշնակցական չէ, վախցիր...

Երեքն ալ խնայցիմ: Յաղթանակը ընկերոջս կողմն էր:

Վահրամը՝ Ներսիսեանցիին նեղ դրութեան մէջ դնելու համար առա-
ջարկեց, որ խմենք Հ. Յ. Դաշնակցութեան կենացը, բացագանչութիւնով
(իմեզ հոգիով՝ չորս հոգիանոց մասնաբանի մը մէջ էինք): Ներսիսեանցիին
մերժեց: Վահրամը, որ հետզհետէ կը գրգռուէր, թոյլ չէր տար, որ բա-
ժակը վերցնէր՝ իբր թէ կատակի տալով: Ներսիսեանցիին կը ժպտէր, իր
կէտ-խարդախ ու կէտ-հանոյակատար ժպտովը՝ բիրտուն խորէն: Ես բըռ-
նեցի Վահրամին ձեռքէն՝

- Թող, պիտի խմէ, - ըսի, նայելով աչքերուն:

Տխուր՝ համակերպեցաւ: Ներսիսեանցիին բաժակը բարձրացուց ու
ըսաւ.

- Հայ ժողովուրդին կենացը...
- Լաւ, լաւ, - ըսինք բալարս:

«ՀԱՅՐԵՆՆԻՔ» ԱՄՍԱԳԻՐ, Զ. ՏԱՐԻ
ԹԻՒ 6, 1928 ԱՊՐԻԼ

... Արեւին մէջ եւ քարին վրայ նստանք ու կարօտով, բայց եւ տըխ-
բութեամբ կը նայէինք ծովուն ու կը վիճէինք, չեմ գիտեր ինչու, քիչ ա-
ռաջ պատին վրայ կարդացած մէկ յօդուածնու մասին: Խնդիրը կը վերա-
բերէր Հ. Յ. Դաշնակցութեան եւ, հակառակ տիրող փափակ պայմաննե-
րուն, մեր երիտասարդի անհագութեամբ բարձրաձայն կ'արտասանէինք այդ
անունը:

Յանկարծ տեսնեմք, որ բռնակիր մը պարանի մը կռթնած կը լսէր
մեզ: Վայրկենաբար դադարեցանք խօսելէ, բայց ան մօտեցաւ մեզի. անշուշտ
զգացած էր, որ մեզի կրնար խօսիլ: Գործերնին վերջացած էր: Նստաւ բռ-
նակցին եւ սկսաւ խօսիլ իր բարի եւ քիչ մը կոպիտ լեզուով:

Սեպուհի ճախկին զինուորաներէն էր: Բարեբոյժի: Արեւա, բայց զօ-
բաւոր, բայց մահւ քարի գէղմով: Ճակատը մեզ' ու մազերը' խնուն:
Բարձր ու առայգ հասակ ունէր ու պատկառազգու մարմին: Բազուկները,
որ մերկ էին, կը ցուցադրէին հարուստ ու զօրաւոր մկանային գրուքին
մը: Գլխարկը դրաւ գետին, ծխախոտի տուփը հանեց, առաջարկեց մեզի,
յետոյ ինքն ալ հաստ գլանիկ մը փաթեց: Ու սկսանք ծխել:

Նստած էինք շրջանակի: Կը խօսէր ցած ձայնով ու նայելով շուրջը,
մերս բաշխելով ծխախոտին ծուխը: Ինքն ալ նոր եկած էր Հայաստանէն:
Սիրտը լեցուն էր եւ անշուշտ ասոր համար էր որ կը խօսէր մեզի անկեղ-
ծութեամբ, պարզելով իր մազը:

- Ես որանց մէ'րը... - ըսաւ անկեղծ ու շողացող աչքերով:

Վահրամը մտիկ կ'ընէր գայն խանդավառութեամբ: Փորի վրայ պատ-
կած էր սոսք քարերուն վրայ, արմուկները գետին ու գլանիկը բերանը:
Կը սիրէր ժողովուրդը ու անոր հոգին: Կը սիրէր մեծաւանդ պարզ ու ան-
կեղծ մարդիկը, որոնք իրեն նման ամբողջ սրտով սիրելի ու ատելի գիտեն:
Իր աչքերը կը շողային եւ մէջ ընդ մէջ կը հայեոյէր համայնավարներու
հասցէին:

Արեւը կը ծնէր իր վախճանին, դէմը հորիզոնն ի վար: Ձկնորսի նա-
ւակները հետզհետէ կը մօտենային լեցուն' քիչ մը վարը: Բազմութիւնը
կ'ազմկէր: Ազգաւ մարդիկ կը հաւաքուէին մեկուկներուն շուրջը: Խտա-
լական նաւէն խումբ-խումբ դուրս եկան նաւագներ: Անշուշտ կ'երթային
պտոյտի: Ձկնորս մը բարձր ձայնով ու քրքերէն կը գովէր իր ապրանքը:
Անշուշտ Սեւ ծովի եզերքներէն էր:

Վահրամը ու Սեպուհի զինուորը հայեոյեցին միաբերան քուրքին
հասցէին, որ կը յամառէր պռտալ:

- Ես ինչ ազատս լեզուիդ արժանոր, - կ'ըսէր Վահրամը վայրի, իր
խոշոր աչքերը բարձրացնելով վրաս ու գարմանալով, քէ ինչպէ՞ս կարելի
է լռել ու անտարբեր մնալ:

.....

- Անուռը ի՞նչ է, - կ'ըսէր զինուորը ընկերացո:

- Վահրամ ու անորը' Ծրուանդ:

- Իմ անունն Արշակ է, - շարունակեց միւսը հպարտ, - մեր Սեպուհին անունը, - ու գողունի ճայելով շուրջը ցուցուց փոքր վանեցիին մետաղեայ զինանշան գնդառեղ մը, որ կը կրէր Հ. Յ. Դ. սկզբնաստաւերը:

- Ազրէրս է Ամերիկայից զրկել, - յարեց:

Վահրամը կը թնկէր զինանշանը, ագահ աչքերով: Երբ ճայեցայ աչքերուն, յստակօրէն գգացի, որ եթէ կարենայ՝ կը գողնայ, առանց խղճահարութեամբ. այնքան սիրուր փակաւ վրան:



- Ընկեր Արշակ, մի՛ ցոյց տուր քո զինանշանը...

Արշակը հանեց գայն գողունի ու դրաս վահրամին ձեռքին մէջ: Անոր աչքերը կրկին շողացին: Կը ճայէր ուշադրութեամբ թիին, փետուրին, գաշոյնին ու գրօշակին ու ժպիտ մը կ'ուրուագծուէր իր շրթներուն վրայ: Կը զգայի յստակօրէն, որ պիտի չվերադարձնէ գայն:

Յանկարծ հարցուց.

- Սրան ի՞նչ են տաւ, ընկեր Արշակ:

- Տօ՛, էդ էլ հարցո՞ւմ է որ տալիս ես, խօ Հ. Յ. Դաշնակցութեան զինանշանն է, - ըսաւ հպարտ:

- Ի՞նչ է նշանակում էս թիւն, էս գրօ՞շը, էս փետու՞րը:

Արշակը ուսերը թօթուեց: Յամախ վահրամը կը նեղէր գայն աւելորդ հարցումներով:

«ՀԱՅՐԵՆԻՔ» ԱՄՍԱԳԻՐ, Զ. ՏԱՐԻ
ԹԻՒ 7, 1928 ՄԱՅԻՍ

Մայիսի մէկը: Ու նուագիտները կ'ունային, բայց ո՞րքան դանդաղութեամբ ու ո՞րքան սեռանութեամբ արտիւր կը շարժէր: Յանկարծ լսեցին ձայները: Վերէն, գլխաւոր բեմէն՝ ձեռք մը լուսիւն պարտադրեց ամբաստին: Նիհար ու պզտիկ զինուորական մըն էր: Կը խօսէր նշան ու ցած ձայնով ու ցոյց կու տար գէմը՝ Լենինի հսկայ ու ծիծաղելիօրէն խեղճատակ հասակը: Կը խօսէր կրճով, բայց իր խանդավառութիւնը, որ անհամեմատական էր իր մարմնին հետ, ծիծաղելի կը գարծնէր գայն: Վերջացուց: Վտիտ ու տկար ծափահարութիւն մը ողջունեց գայն: Յետոյ եկաւ ուրիշ մը, բարձրահասակ, թուխ ու անհանկրելի գէմէնով մարդ մըն էր: Կը խօսէր վրացերէն ու այդ լեզուին անախորժ հնչիւնները աւելի անախորժ կը գառնային իր բերքին մէջ:

Կեցած էինք բազմութեամբ շուրջ տասնընկուց ընկերներ, կողք-կողքի: Մեր ընկերները եկած էին նախընթաց օրը ու պատասպարուած բոլոր գաղթականներուն պէս՝ զինուորական հանրակացարաններուն մէջ: Ի հարկէ, բոլորս ալ թշնամաբար կը նայէինք ազնկող բազմութեան ու զինուորական վաշտերուն: Կը զգայինք, որ ժողովուրդը նոյնպէս սրտով չէ որ եկած է: Մարդիկ մտիկ կ'ընէին յոգնած ու անձրացած դէմքերով բանախօսներուն եւ հագիւ թէ կը ծափահարէին: Ի վերջոյ, երեցաւ նաեւ թուրք

մը: Բազմութեան մէջէն լսուեցաւ քշմամութեան մուտուս: Անշուշտ հա-
 յերն էին, որ չէին հանդուրժեր որ քուրք մը խօսի համաշխարհային եղ-
 բայրակցութեան ու խաղաղութեան անունէն: Կափահարութիւններ խեղ-
 դեցին մուտուսները: Մարդը, որ վայրկեան մը կը թուէր, թէ կը վարանի,
 վերստացաւ իր խաղաղութիւնը ու սկսաւ իր սափակ մտը: Արգաստաշլա՛ր:
 Ձայնը բարձր էր ու ամուր, բայց կը խօսէր դժուարութեամբ, եւ մախա-
 դասութիւնները գուրկ էին ջերմութեան ու կրֆէ: Հայ բանուոր մը մեր
 կողքէն մուտաց՝ կրո՛ւ: Ժպտեցանք բոլորս ալ:

Յետոյ նուագախումբը կրկին սկսաւ «Միջազգայնական»ը: Բեմ
 բարձրացաւ ջզուտ ու առատ մագերակ երիտասարդ մը: Անոր դէմքը ար-
 սայայտիչ էր ու համահրեյի: Աչքերը կը շողային պայծառ հաւատով մը:
 Հայ էր: Վայրկեան մը սպասեց որ ամբողջ լռէ: Իր նայուածքը պտտուց
 գորութեամբ բազմութեան վրայ: Անշուշտ գիտէր գայն զսպելու կերպը:

- Ընկերներ ու քաղաքացիներ, - ըսաւ ամուր ու երգող ձայնով մը,
 առաջին բառերէն իսկ տիրապետելով ամբոյսին:

Գոռ ու պատերազմական «Միջազգայնական»ը պատասխանեց իրեն:

Երիտասարդ հայը անցաւ մեր առջեւէն, նայեցաւ շեշտակի բոլորիս:
 Անշուշտ գիտէր, թէ ո՛վ էինք ու ուրկէ՛ կու գայինք: Թեւիմ տակ ունէր
 կաշիէ սիրուն պայուսակ մը, մագերակ առատ էին ու խառնիխուռն: Ակնոց-
 ներում տակէն մեզի կը նայէր յամառութեամբ:

- Ինչո՞ւ չէք երգում, - պռոպ քարձր ձայնով, - խօսքը ուղղելով
 մեզի:

- Ձե՛նք գիտեր, - ըսի լրջութեամբ նայելով աչքերուն ու գլանիկ մը
 վառելով:

- Սովորեցէ՛ք, - ըսաւ ջզային, - կարծում էք էս բոլոր մարդիկը
 գիտե՞ն, որ երգում են:

- Ձե՛նք ուզեր սորվիլ. - ըսի աւելի լիբր. - Ինչի՞ պէտք կու գայ որ...

Բոլորս ալ գիտէինք ի հարկէ «Միջազգայնական»ը: Այնքա՛ն լսած
 էինք ու կը սիրէինք գայն երգել մենք մեզի, բայց անոնց հետ՝ անշուշտ՝
 ո՛չ: Ո՛չ: Մօտեցաւ: Զօրութեամբ ու իր ուժին վստահ մարդու պէս բռնեց
 բազուկս եւ նայեցաւ աչքերուս: Նայեցայ ես ալ իր աչքերուն, առանց վա-
 խի ու գայրացած:

- Երիտասարդ ընկեր, - ըսաւ հեզմութեամբ, - ասացէ՛ք, խնդրեմ,
 ինչի՞ չէ՛ք ուզում սովորել...

- Որովհետեւ, - ըսի լկտի:

- Ես որ լինէի, ձեզ թող չէի տայ որ թողնէի՛ք Հայաստանը, - ըսաւ
 ամուր, - ձեզ թանաւորել են, ընկե՛ր, - յետոյ ժպտում, - ձեզ բոլորդ կը
 կոխէի բանտ ու կը սովորեցնէի «Միջազգայնական»ը:

- Ձեր ընկերները այդ ալ փորձած են, - ըսի միշտ լկտի, - ձեր բան-
 տը պահկած ենք Հայաստան:

«ՀԱՅՐԵՆԻՔ» ԱՄՍԱԳԻՐ, Զ. ՏԱՐԻ
 ԹԻԻ 8, 1928 ՅՈՒՆԻՍ

- Ի՞նչ կ'ըսես, Երուանդ, - ըսաւ վահրամը, - աշխարհ՞նք այս-
 տեղ...

- Ձեմ գիտեր, ըրէ՛ք՝ ինչպէս որ ուզէք. ես համաձայն եմ...
 - Ուրեմն բոլորս ալ համաձայն ենք: Կ'երթանք հագուստներնիս
 կ'առնենք ու կու գանք այստեղ...

- Բայց ուշադրութիւն ըրէ՛ք, - ըսի, - պետական աշխատանքի մէջ
 ենք, եթէ գործերնիս ձգենք, կ'ապերնիս կտրած կ'ըլլանք «Աշխատանքի
 բաժնին» հետ:

- «Աշխատանքի բաժնին» հիւրը դնողին... - սկսաւ Վահրամը իր ա-
 վորական հայեցութեամբ:

Այդ վայրկեանին խնդիրը բնաւ զիս չէր հետաքրքրեր ու, եթէ կ'ա-
 ռարկէի՝ պատճառը այն էր, որ կը գգայի, թէ յիմար հետեւանքներ կրնար
 ունենալ այդ քայլը, յետոյ՝ եթէ գիւղատնտեսը բարկանայ, կրնայ ներա-
 թիւն պատճառով մեզի, կրնայ նոյնիսկ բանտարկել տալ:

- Լաւ է որ այսօր ալ աշխատինք այստեղ, - ըսի, - գիւղատնտեսը
 կու գայ, կ'աշխատինք համոզով, գիտէ որ տուած դրամնին հազիւ ցամաք
 հացի կը թուէ...

- Իսկ եթէ չհամաձայնի՞...

- Այն ատեն՝ վաղ առաւօտ կ'աշխատինք պարսիկներուն մօտ...

Այդպէս ալ ըրինք: Քանի մը ժամ յետոյ գիւղատնտեսը եկաւ:

.....

- Էդ շուն պարսիկներն են ձեզ գլխէ հանել, - կը գոռար, - ես նը-
 քանց կը սովորեցնեմ, թէ ո՞նց կարելի է պետական բանուտղներ խտրել՝
 սուտ խստամտեցնել ու ստիպել, որ գործը թողնեն...

Ես գգացի վայրկեանապէս այդ մարդուն հոգիի ազտութիւնը: Բայց
 սիրտս այնքան լեցուն էր սիրով, որ չէի ուզեր ոչ ոք վշտացնել: Կ'ուզէի, որ
 վայրկեան մը առաջ գործը վերջանար, ժամը հնչէր ու կարենայի գլուխս
 առած երթալ իմ Երազիս գիրկը:

- Ոչ ոք մեզ չէ խտրած, - պռուց Վահրամը իր կարգին գայրացած,-
 ձեր կառավարութեան տուածով շուն մըն ալ կարելի չէ կերակրել: Այստեղ
 խտրելը ո՛ւր է. ո՛վ աւելի տայ՝ կ'երթանք անոր: Եթէ խտրող մը կայ, ան
 ալ պետութիւնն է, որ մեզ իշու պէս կ'աշխատցնէ՝ առանց գարի տալու...

- Բանուտղագիւղական երկիր է, - ըսաւ սրիշ մը, - բանուտղը
 ազատ է, ուզած տեղը կ'աշխատի. ձեզ հետ պայմանագրութիւն չենք կըն-
 քած, որ միշտ այստեղ պիտի աշխատինք գերի եւ անօրի պիտի մնանք...

.....

- Սպասեցէ՛ք, ես ձեզ կը սովորեցնեմ, Դաշնակցական լակտմեր,
 բոլորդ էլ բանտարկել կը տամ, ինչ էլ, - ըսաւ դառնալով ինձ... - բա-
 լո՛րդ էլ Դաշնակցական է՛ք, գիտե՛մ, վաղուց է գիտեմ. դուք կը տեսնէ՛ք,
 թէ ո՞ւմ հետ գործ ունէ՛ք... Իսկ էն շներին՝ ես կը սովորեցնեմ, սպա-
 սէ՛ք...

- Հայտէ՛, տաճա՛կ, - ըսաւ Վահրամը լիրբ, - կորսու՛ւ՛ր տրտեղէն,
 եթէ ոչ կոշտը կ'ուտես, - ձեռքը բռնած էր խոշոր հոգի խոշոր կաշտ մը
 ու կը պռուք, - կառքդ քաշէ՛, ծօ'...



Յանկարծ տեսնէք, որ գլուխնուս վրայ կ'եցած է գիւղատնտեսը:
 Բոլորս ալ լսեցինք:

- Նայե՛ք, - ըստ համոզարու ու յիսակալ, - եթէ աշխատանքնիք բող-
ձէ՛ք ու գա՛ք անմիջապէս պարտէ՛զը վերսկսելու, ոչի՛նչ. այլապէս բալո՛րդ
էլ ձերբակալել կը տամ...

Ոչ ո՛ք չպատասխանեց իրեն, բայց գգացիմք, որ լուրջ է: Այնքան
վստահութեամբ կը խօսէր, որ բալո՛րս ալ ազգուհեցանք, բայց ատիկա ան-
լի գրգռեց մեզ:

- Կատակ չեմ անում, - ըստ միշտ յիսակալ, - պարսիկներին ան-
պայման բանտարկել եմ տալու. մի քանի ամիս կը փոսն ու կը տեսնեն,
թէ ո՞նց կը լինի խաղ անել ետու. գալի՛ս է՛ք թէ ոչ...

Բարկութիւնս գարկու գէմքիս: Անոր վատութիւնը կը կատարեցնէր
գիս: Այսուհանդերձ ինչգի՛նքս գրկեցի:

- Ընկե՛ք, - ըսի հանդարտ, - մե՛նք տղայ չեմք. չեմք գար ըսինք՝
չեմք գար: Յանցանք չունինք: Մերկ եմք: Ո՛վ շատ վնասէ՛ր անոր կ'եր-
թանք: Ի՛նչ կ'ուզէ՛ք ըրէ՛ք: Իսկ եթէ մեզ բանտով պիտի վախցնէ՛ք, գգու-
շութի՛ւն, մե՛նք ալ կատակ չեմք ըմբ...

- Ի՞նչ կարող է՛ք անել որ, - ըստ հեզմակամ, բայց յայտնի էր որ
կը վախճար:

- Ահա՛ թէ ի՛նչ «կարող եմք անել», - գռռաց վահրամը, ցտակեց
վրան ու շատաչում ապտակ մը փակցուց քթին բերնին:

Մարդը բարկութենէն սկստ գռռալ: Քիթը արիւնեցաւ, երկու ան-
գամ անլի ուժով էր քան վահրամը, բայց անոր աչքերուն կրակին տակ
կը մնար ընկճուած ու տկար:

- Շուն, - ըստ վահրամը կատարի, - պաշտպանուիլ ալ չես գիտե-
րս քեզի պէս հայուն...

Ու կուզէ մը քֆտ անոր երեսին:

Պարսիկները կը նայէին մեզի եւ գիւղատնտեսին՝ վախով ու շփոթա-
հար: Վահրամը քաշեցինք մէկ կողմ: Ձեռքով ու ռոտով կը խօսէր: Տըժ-
գունած էր բարկութենէն ու կը սպառնար ծեծել գիւղատնտեսը, «լուրիկ
զարձանի» եթէ չմեղէր...

Վահրամը նախորդ գիշերուընէ ի վեր չէր մարտած «Իաշմակեցական
լսկուտ» անարգանքը:



Յամկարծ հեռաւոր նամքէ մը լսուեցաւ ձիերու գոփիւն ու խօսակ-
ցութեան ձայն: Ձեմ գիտեր՝ ինչո՞ւ անհամբարտացանք բալորս ալ ու լռե-
ցինք: Պարսիկները տժգունեցան. անշուշտ տեսած էին ձիաւորները: Երեք
վայրկեան յետոյ՝ իրենց ձիերուն սանձերէն բռնած մեր առջեւը կեցած էին
չորս ձիաւոր՝ ստիկաններ ու ստիկանապետ մը, որ կը խօսէր քրքրէին:

Լրբութեամբ ու յանգզմութեամբ կը նայէի իր աչքերուն:

- Ինչո՞ւ կը նայիս այդպէս, - ըստ կապտութեամբ շարժելով ուսէս
ու փարձելով գիս ռոտի հանել:

- Ձգե՛ր գիս, - ըսի կատարի, - ո՞ւր է ձերբակալման երամանա-
գիրդ...

Մարդը սկստ խնդալ միամտութեամբ վրայ:

- Տգաս, - ըսաւ քրքերէն, - այստեղ տաանց երամամագրի կը ձեր-
բակալեն, - ու ժպտեցաւ հինաշուած պիտերուն մէջէն շնակահօրէն:

Բարկուքիւնս գարկաւ դէմքիս:

- Ես ինչ տղադ չեմ, շո՛ւմ քուրք, - ըսի վայրագ ու հոգի կոշտ մը
գարկի երեսին:

Աչքերը լեցան հոգով, յարձակեցաւ վրաս իր մտրակովը, բայց
յաջողեցայ փախչիլ...

.....
Հասած էի արդէն պողոտայ մը: Յանկարծ տեսայ ձիաւոր ստիկան-
ներէն մէկը. որ փողոցին մէջտեղը կը սպասէր ձիու վրայ: Իջաւ վար ու
վազեց վրաս: Փորձեցի դառնալ ետ, բայց հասան միւսները: Երկար ու
կատաղի դիմադրութենէ յետոյ ձերբակալեցին զիս ու առաջնորդեցին պա-
հականոց, ուր էին մանր ընկերներս: Կեցած էին ուրիշ եւ տժգոյն եւ շատ
երկիւզահար, բացի վահրամէն, որուն աչքերուն բոցը կը վառէր իր բի-
բերը: Ոստիկան մը մտրակ մը փակցուց կանակիս: Ուրիշ մը կից մը տուաւ:
Յետոյ մտրակը կրկին իջաւ ուսիս, կարծես արիւնեց. աչքերս լեցան ցա-
ւէս ու յուզումէս, բայց սիրտս անլի կարծրացաւ:

- Ան՛ումդ, - ըսաւ ստիկանը:

Լռեցի:

.....
- Ան՛ումդ, - գոռաց կատաղի:

- Պիտի չըսեմ, շո՛ւմ քուրք, - պատահի վայրագ:

.....

Մեզ հանեցին դուրս ու առաջնորդեցին Յեզափոխական Կամիտէի
շէնքը:

.....

Մեր բովէն անցան գոյգ մը գեղեցիկ աղջիկներ: Յետոյ խումբ մը
եւ: Յետոյ ուրիշ խումբ մը՝ գուարբ ու շէնքող:

- Հա՛յ եմ, - փափսաց վահրամը ու անկցուց, - Երուս՛նդ, Յովնան-
հանցիներն են:

Աղջիկները լռեցին ու կանգ առին: Իրենց ազուր ու հայու սեւ աչ-
քերով կը նայէին մեզի: Արցունքը քրջեց կակորդս, բայց չլացի: «Արփիկ,
Արփիկ», կը հծծէին շրթումս: Համաբձակ աչքերով աղջիկ մը առան-
բէնով հարցուց ստիկանապետին, թէ մեզ ինչո՞ւ ձերբակալած են:

- Դաշնակցականներ են, - ըսաւ մարդը կատակով ու նայեցաւ ինծի:

.....

Հասանք կառավարչատունը: Մեզ ընդունեց կարճատեղի վրացի հա-
մայնավար մը, երիտասարդ ու տեսնելի դէմքով:

.....

Յեզափոխական Կամիտէի նախագանը կը նայէր ժպտուն աչքերուս:
Բաւ մը հարցուց: Երիտասարդ, սեւ շագիկաւոր տղայ մը քարգմանեց:

- Դո՛ւմ էիր որ կռուեցար ստիկանապետին հետ...

- Այո՛, - ըսի շեշտակի նայելով աչքերուն ու ամուր ձայնով:

Նայեցաւ աչքերուս եւ բարեացակամօրէն ժպտեցաւ կրկին: Իր ժը-
պիտը զիս մեղեց:

- Դո՛ւմ էիր, որ արիւնեցիր մեր ստիկաններէն մէկուն գլուխը ա-
թոռով...

- Այո, այո, - ըսի կատաղած, - ձեր ստիկանը լիբր է:

Շրթներս դողացին: Իր գլխում վրայ կար Տրոցկիի մեծադիր նկարը: Սեղանին վրայ շամ գանկ մը: Կը նայէր ուշադրութեամբ այջերու: Լըքութեամբ ըստ:

- Միւսները պիտի արձակեմ, իսկ քեզ պիտի բանտարկեմ:
- Կը լսեմ, - ըսի աւուր:

Սիրտս կը դողդոզէր, բայց չտկարացայ: Թօթուեցի ուսերս արեամբանմանով:

- Գամի՞ տարեկան ես:
- Տասներեօթը:
- Ի՞նչ կուտակցութեամ կը պատկանես...

Յանկարծ այդ վայրկեանին ձերս մտաւ այն երիտասարդ հայը, որ Մայիս մէկին խօսած էր քեմէն ու մեզի հետ վիճած:

- Դաշնակցական է, - ըսաւ ժպտուն, - ասումք բալորը Դաշնակցականներ են, ընկե՛ք, - յետոյ լրջութեամբ, - պէտք է շոգեկառէ գննի ու վերադարձնել Հայաստան:

.....

Նայտազտեղ ըսաւ.

- Ուրեմն դու Դաշնակցական՞ ես...

- Այո, - ըսի գտարած տառապանմանով, - երբ Հայաստան եկանք, հակադաշնակցականներ էինք. ձեր Հայաստանի ընկերները մեզ Դաշնակցական շինեցին, ընկե՛ք նայտազտեղ...



Ձեռքս բռնեց ու գրաւ սրտին, որ կը գարնէր ուժգին ու արագ:

- Նայի՛ք, գողցողում եմ, - կ'ըսէր, - դու էլ, սժգոյն ես, խեղճ, խեղճ նրումնդ... Զգիտե՛ս որքան լացել եմ երէկ գիշեր ... ընկերուսիներս պատմեցին: Գիտե՛ս՝ նրանք ոչինչ գիտեն մեր յարաբերութեամ մասին: Պատմում էին որպէս հետաքրքիր գէպք ... մի «Դաշնակցական քաջ պատանու» մտայն: Սիրտս ասաց, որ դու ես:

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆՆԱՆ

(«Սիրոյ եւ արկածի սղաքը»)



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՎ

ՍՐԲԱՊԻՂԾՆԵՐՈՒ ԳՐՈՂԸ

«Սիրոյ եւ արկածի տղամբ» *անուն դործէն կանխող էջերուն վրայ*.
արուած թաղուածքները նկատի առած՝ Շուշանեանի մասին *ժենադրութիւն-*
շարադրող շահատակը, յիշեալ դործը «Հենց Դաշնակցութեան դէմ» հանե-
լէ ստալ, զգալով հանդերձ իր շափազանցութիւնը, կը դրէ.

«Զափագանցութիւն քուայ քիրես, բայց ոչ. չէ՛ որ քաղաքական
բոլորովին ներքեակ տրամադրութիւններով գրի առնուած Շուշանեանի մէկ
այլ վէպի՝ «Սիրոյ եւ արկածի տղամբ» գրքի հերոսը՝ Երուանդը, նոյն մա-
տուր ու ջինջ տղան է, նոյն Շուշանեանը, հակառակ այն բանին, որ այդ
գրքում նա գործում է քաղաքական այլ դրամատիքի ու գաղափարի հումով,
նոյն անկաշառ տղան է եւ նոյնքան սիրելի, որովհետեւ գիտես, որ այդ
Երուանդը եւս, մի օր չի կարող չկանգնել ուղիղ նախապարի վրայ»:

«Մի օ՛ր...»

Այսինքն՝ հետու օր մը, տարբեր առիթով, տարբեր դործի մը մէջ:
Բայց, ինչպէս տեսաք մեր ՉԹ-րդ էջին վրայ կատարուած մէկքերու-
մէն, մարդը այդքան համբերութիւն չէ ունեցած, դարձած ու հրաշքը կա-
տարած է ինքը, նոյն դործին մէջ իսկ Շուշանեանը գնելով ռուզիզ ճանա-
պարհի վրայ», նոյն դործին համար պնդելով նոյն ասան, զոր սիրոյ մի
դժբախտ պատմութիւն լինելուց շատ հետու է, եւ ուղղուած է Հենց Դաշ-
նակցութեան դէմ: Գրքի վերջաւորութիւնն իր սուր կողմով նոյն կազմա-
կերպութեան եւ նրա ջարդած գաղափարների մերկացումն է»:

Շուշանեանի բիրտ անկեղծութեամբ ու անտուեր պայծառութեամբ
ըսած խօսքերն ու ձեւակերպած տրամադրութիւնները այս աստիճան եղծել
ու շարափոխել, բնական է, բնական մարդու գործ չէ՛, եւ արդէն ըստ
էութեան անոր չեն ուղղուէր այս տողերը, կ'ուղղուին այդ զտանցանքը
հրատարակութեան համար ստորագրող «Մ». Արեղեանի անուամ գրականու-
քեան ինստիտուտի գիտական խորհրդին»: Գիտակա՛ն խորհուրդին: Ապ-
շեցուցելը այս խորհուրդին անխորհուրդ ընթացքն է արդարեւ: Գիտակա-
նը՝ ճշգրտութիւն մը կ'ենթադրէ, ճշգրտութիւնը՝ պարկեշտութեամբ կը
ստացուի, պարկեշտութիւնը՝ առարկայական տուեալներով վտահուութիւն
կը շահի, մինչդեռ այս առաքինութիւններէն եւ ո՛չ մէկը կիրարկուած է

«Գիտական խորհրդի որոշմամբ» լոյս ընծայուած այս գործին մէջ, ընդհանրապէս, ամբողջ գործը կառուցուած է հաշիւի, քմահաճոյքի, բանդազուանքի վրայ եւ պատիւ չի բերեր զգիտական բառը գործածող ո՛չ մէկ մարդու: Աւելի ուշ՝ ընթերցողը աւելի զիւրին պիտի ըմբռնէ կատարուած խեղկատակութիւնը: Առայժմ վերադառնանք շորէն «Սիրոյ եւ արկածի տղաքը» գործին առիթով սեւագրուած անհեթեթութեանց:

«Վէպը մնում է Շուշանեանի գրականութեան լատգոյն ստեղծագործութիւններից մէկը, իր անկեղծութեանը մէջ՝ կրկնակի ուրբերակամ: Եւ պատմական այդ ժամանակաշրջանի հակամարտ ուժերի հոգեբանութեան վրայ սփած իր լայնով դառնում է մանւ այդ անգիտակից Եղեղմերի փախուտը երանրող մութ ուժերի, այսինքն՝ Դաշնակցութեան անազն մերկացումը»:

Դաշնակցականի մը կողմէ գրուած, Դաշնակցական թերթի մը մէջ ապուած, այլ գրուելն ու ապուելն ուղի՞ղ քառասուն տարի հոռ, ահաւասիկ վերջապէս մէկը, որ ճիշդ կը հասկնայ «Սիրոյ եւ արկածի տղաքը»-ի մէջ առաջ՝ ոչ մէկ խելացի, մ'չ Դաշնակցութեան, ոչ համայնավարութեան մէջ, ուր, կը կարծէինք, իրմէ աւելի արթուն ու աւելի պապական մարդէկ կան: Գիտն՝ կը նշանակէ: Հաստատանի մէջ նոյնիսկ գիրք հրատարակեցին (1966) Շուշանեանէն, յառաջաբան գրեցին գործին, յառաջաբանին մէջ յիշեցին «Սիրոյ եւ արկածի տղաքը», և, անկախ Դաշնակցութենէն ու անկախ համայնավարութենէն՝ Գանացին ըմբռնել անոր գրական արժէքը, ոգին, ըսին՝ «Սիրոյ եւ արկածի տղաքը» վէպը մարդկային անասնամ կարողութիւնների, մեծ երգանքների, սուրբի եւ արկածի» ցնորքների քախում էր ամուրախ իրականութեան հետ»: Ըսին՝ ու անցան: Մինչ այս ուշ ներածուած ծառայածիսը կուսակցական նախանշանակեալ նեղմութեամբ կը պրպտէ գործը ու կը խօսի Շուշանեանի գաղտնջ մասին, արժանք սիրուած էին արտասանմանից՝ «զաշնակցական» ինքատարմամբ, եւ դէպքերի քախումով այժմ դիմում էին փախուտի, խունապահար փախուտի դէպի ետ, անկասկած «վերին կարգադրութեամբ»:

Անկասկած:

Վերին կարգադրութեամբ փախցնելէ առաջ արտասահմանից զգաշնակցական լիցքատրմամբ բերուածները, ուրիշ էջի մը վրայ արդէն փախցուցած է գանոնք հեղ մը եւ հետեւեալ հարցը գրած ու լուծած է անգամ մը:

«Ի՞նչ եղաւ «Սիրոյ եւ արկածի տղաքը» վէպի մրումնդի (Շուշանեան) նակատագիրը: Թե՛ վէպից եւ թե՛ հեղինակի օրագրից յայտնի է, որ պոկեցին Շուշանեանին հայրենի հողից. նրան եւ նրա պէս հագարաւորմներին հաւատացնելով, քե՛ այդ է շուրջից մանապարհը»: Իսկ այդ շուրջից մանապարհը՝ պատմաւ հանդիսացաւ, որ նրանք օտարութեան մամբաներում թուրքի ետքաղանը զգալուց յետոյ, երկրորդ անգամ աւելի խոր ապրեմ մանւ սպիտակ ջարդը: Սպիտակ ջարդը, որ կարող էր գէշ խնայուել այդ սերնդին. չէ՞ որ նրանք կարող էին մնալ ապահով անգիրի մէջ եւ դառնալ հայրենի երկրում ստեղծագործող սիրում գրողներ, փախուտի իրենց կեանքը, իրենց սիրում ու հոգին օտարութեան ցուրտ ու անհիւրընկալ ճանուղիներում թողնելու»:

Երկիրը բուրբովին չգրկելու համար «ստեղծագործող սիրուած գրողներէն», վերին կարգադրութիւններ ընողները հոն ձգեցին Զարեհը, Բակունցը, Թոթովենցը, աւելի գեղատիներէն՝ Մահարին, Նորենցը, Մկրտ-

տիչ Արմէնը, ուրիշներ: Շուշանեանի եւ Շուշանեանի սերունդին ժառանգութեամբ ընդունինք պահ մը, նոյն անպատասխանատուութեամբ կրկնենք, որ զանոնք ջարդեց ապիտակ ջարդը: Ի՞նչ եղաւ սակայն «Հայրենի երկրում» մնացած զրոյներուն ճակատագիրը: Սիրուած գրողներ եղան անոնք «Հայրենի երկրում», թէ հոգիով ու մարմնով սրածուած զրոյներ: «Իրենց սիրտն ու հոգին օտարութեան ցուրտ ու անհիւրընկալ քառուղիներում» ձգող Շուշանեաններու հոգիներէն նուա՞զ ցրտացաւ անոնց հոգին հիւսիսի հիւրընկալ ստույգներուն մէջ:

Ինչո՞ւ այս դաժան բաները վերստին յիշեցնելու ստիպումին տակ կը դնեն մեզ մարդիկ, ուրիշ տպուելիք ձեռագիր՝ կը պակսէր արդեօք, որ «Պիտական խորհրդի որոշմամբ» այսպիսի անպիտան բաներ կը ներկայացուին ընթերցողին:

Շուշանեանի դաւանած սրբութիւններուն հայտնելով, շարունակ անոր ոգին վրդովելով էջ էջի վրայ դիպող սրբապիղծը, աւելի անդին, պրոգնէտը իր կուսակցութեան դէմ հանելէ առաջ ու ետք, անոր յիւատակին կարմիր դրօշ, պրոյնտաքիտտ, սովետական ու հոկտեմբերեան բաներ խառնելէ առաջ ու ետք, մէջ ընդ մէջ կ'ողջայ:

«Սուխուր փաստ է, որ իր սիրելիները, հարազատները անպատի աւագներին յանձնելուց յետոյ, վայրի տունի նման մեծացող այն տղան, իր մէջ 120·000-ից անլի հայութիւն հաշուող ֆրանսահայ գաղութում շիրիմ ու սեփական հազախոյտ անգամ չունեցաւ»:

Ուրիշ տեղ մը, հարիւր քսան հազարի այդ անորոշութենէն զուրս կու գայ յանկարծ եւ կրկին մեղքը կը բարդէ Դաշնակցութեան վրայ:

«Մարդիկ զլացան շիրիմը Շուշանեանին, բայց ժամանակին չէին վարանում «յանուն հայրենասիրութեան» փոքր ու գնում յազրանակների Խամար Բշիլ այդ սերունդը եւ Շուշանեանին՝ երկրից երկիր, Բաղաբից Բաղաբ, մայրից մայր»:

Այդքան անհեթեթութիւններ թոյլ տուողը, ի հարկէ, բնաւ պիտի չվարանէր նոր անհեթեթութիւն մը արձանագրելու: Շուշանեանի շիրիմին կապուած անցուղարձերը ծանօթ են թէեւ, բայց երկու տողով կրկնենք ճշմարտութիւնը: Մեռնելէ ետք՝ «կառակատարներէն» մէկը այն դարձած էր Շուշանեանին եւ քաղաքապետարանի տոմարներուն ու զերեզմանատան վարչութեան մօտ ձեւակերպութիւնները կատարուած էին անոր անունով: Շուշանեանի սկիորներուն տէր կանգնած անձը թերացաւ իր պարտաւորութիւններուն մէջ եւ օր մըն ալ իմացանք, որ զերեզմանատան վարչութիւնը կատարած է ի՛ր պարտքը, անտէր մեռելին սովորները նետելով հասարակաց փոսը:

Այս է դառն ճշմարտութիւնը: Պարզան՝ Դաշնակցութեան դէմ նոր անկիւնէ մը վայրահաշիւու առիթի մը վերածուած է հոս եւ ուրիշ ոչինչ, կ'ըսենք, ու կ'անցնինք, անցնելէ առաջ պզտիկ հարցում մը սակայն:

– Շուշանեանի շիրիմին ու հողակոյտին հանդէպ ինչպիսիք այդքան բժանողիք ցոյց տուող մարդը, կրնա՞յ նոյն ողբը հիւսել ու պատասխանատուները հաշիւի կանչել Չարենցի, Բակունցի, Չապէլ Եսայանի, Թոթովենցի եւ այլոց առիթներով, որոնք, իրենց կարգին, իրենց իսկ հարբներէն մէջ շիրիմ չունեցան:

Մենք, անշուշտ, մեր հարցումին պատասխանին չինք սպասելու Ռոբովհասեւ, լաւ գիտենք, որ իր մտահոգութիւնը ոչ շիրիմն է, ոչ ալ ճիշտ

մարտութիւնը: Իրը՝ Դաշնակցութեան զէմ իրենց անասնական ատելութիւնը վարդապետութեան վերածած զօս հողիներու այն մտիւզեութիւնն է, որուն մասին, պիտի տեսնէք զիչ անգին, այնքան ճշգրտօրէն խօսած է Շուշան-հան:

Նոյն մտիւզեութենէն նոր նմոյշ մը.

«1919 թ. Սեպտեմբերին վազգէմ Շուշանեանին տեսնում եմք, իր հօր աւանդին հպատակ՝ Արմաշի նոքարաց երկրորդական վարժարանում: Դա այն շրջանն էր, երբ Դաշնակցութիւնը հայրենի երկրում հաստատել էր իր տիրապետութիւնը: Դաշնակցութեան գաղափարախօսութեան արտաքին փայլը մօտ էր տնտեսական և արհեստի փրկուած սերնդին, որ առանց քափանցելու եզիւրփիւնների խորքը, մեզ բերում թագաւորեանք ու զպետականութեան» մէջ տեսնում էր իր քափուած արեան, իր գանձի տն-թիւ ու անհամար գրկամբների հատուցումը»:

Մէջերուած այս հատուածին մասին, քանի մը շարաթ առաջ, ուրիշ անգ ըսինք քանի մը խօսք, տարբեր չէ մեր ըսելիքը եւ հիմա, հարկա-դրուած ենք կրկնել նոյնը, ըսել՝

Եզիւրփիւններուն խորքը թափանցելու ընդունակները տարբեր վերաբերում ունեցան միմէ, խանդավառութեան տարբեր խորք մը ու պրե-ցան, որ Հայաստանի մէջ ազատութեան ու պետականութեան համար զոհ-ւածներուն յուշակոթող հոյակերտուած տարին՝ մարդիկ կը մղըհին ծառայատութեան իրենց հին վաստակին հաւատարիմ մնալ ու լակերտել այն-քան թանկ գնով մեռք բերուած ազատութիւնն ու պետականութիւնը:

Այս խաթարուածները չեն սակայն, որ բովանդակութիւն կու տան կենսաբնի եւ ընթացք՝ պատմութեան, այն միտնե՛րն են, անշահախնդրօ-րէն հայրենիքին ու ժողովուրդին նուիրուած ընտիրները, հերոսները, հե-րոսներուն հերոսական ժառանգը ըստ արժանւոյն գնահատող Շուշանեան զրոգէտները, ամենայն հայոց բանաստեղծները: Եզիւրփիւնների խոր-քը՝ թափանցելու իմաստակութիւններ չէին ցուցադրեր առնձ, եզիւր-թիւններու մէջ էին եւ երախտազիտութեամբ, բո՛ւտն խանդավառութեամբ կը դիտէին ազգը նոր անկիւնադարձի մը առջեւ դնող ազատութեան ու պետականութեան այդ հրաշքը:

Ներքին ապականութեան վերոյիշեալ նմոյշը ընթերցողին հրամցնե-լու մեր մեզքը թեթեւցնելու համար՝ արտադրենք նոյն երևոյթին մասին ամենայն հայոց բանաստեղծ՝ Յովհաննէս Թումանեանի մէկ արտայայտու-թիւնը, այն Թումանեանին, որ Հայաստանի ազատութեան եւ պետակա-նութեան օրերուն Շուշանեանի երեք տարիքը ունէր, եւ անգայմա՛ն հայ-րենասիրական աւելի ոգի ու աւելի իմաստութիւն, քան ծառայածիտներու ամբողջ դասը միասին առած:

Թումանեան կը գրէր, 1 Օգոստոս 1920-ին.

«Մեր սերունդը է՞ն սերունդն է, որ դեռ երեկ ազատ Հայաստան էր երազում:

Ազատ Հայաստան էին երազում ռուսաեայր, տանկաեայր, պարս-կաեայր եւ բոլոր հեռաւոր գաղութները:

Ազատ Հայաստան էին երազում հայ ժողովրդի բոլոր խաւերը, առ-նանց սեռի եւ հասակի խտրութեան:

Ի՞նչ ասես, որ չէր տայ գրեթէ ամէն մի հայ, միայն թէ աչքով տեսէր Ազատ Հայաստանը:

Ու յանկարծ...

Արդէն իրականութիւն է երկկուայ մեծ երազը. ազատ է Հայաստանը, ամբողջ աշխարհի կողմից ճանչցուած ինքնուրոյն հանրապետութիւն է նա, իր եռագոյն դրօշակով կանգնած է միւս պետութիւնների շարքում:

Մեծերը այսպէս են միշտ, մեծ, միշտ ուղիղ կը նային կեանքին, մինչ փոքրերը, փոքրողինք՝ բը...

Շուշանեանին մենագրութիւն նուիրած այդ վերջին տեսակի մարդոց այս ներկայացուցիչը անտեսած է տարաբախտ զբաղէտէն տպագրուած տասնեակ կտորներ, բայց մեծ արտօժանով մը ձօնեցած է ընթերցողին համար առայժմ անմատչելի, անտարուելի անտիպներուն: Անտիպները թիւով 16 կտորներ են եւ մենագրութեան համարեա՛ կէսը շարադրուած է անոնցմէ կատարուած մէջբերումներու հիմամբ: Ուշադրաւ է հետեւեալը.

«1920-1932 թթ. Ֆրանսիայում իր սկզբնական տարիների եւ 1923-1932 թթ. կուսակցական կեանքի ռաբերգութեան պատմութիւնը ընդհանրապէս եւ իր կեանքի վեպը մի անգամ եւս ընդգրկող «Ալեկոն տարիներ» գործը, 600 ձեռագիր էջերի մէջ, տալիս է Շուշանեանի իսկութիւնը, դիտւած նոր ակնոցներով, երբ հետացած դաշնակցական կուսակցութիւնից, նա վերածնայում է իր անցեալին»:

«Ալեկոն տարիներ, 1920-1932», 600 էջ:

Տասնըեօթէն մինչեւ քսանըներ տարին երկարող երիտասարդի մը կեանքը: Հուսարքի, յափշտակութեան, զործան եռանդի, մաքուր սպարմաներու, մաքուր կիրքերու, մաքուր պայքարի տարիներ, տարիք: Շուշանեանի խառնուածքով օժտուած երիտասարդի մը համար մանուաւնդ, որ չէր կրնար մնալ որեւէ տեղ, եթէ իր հօգին կերակրող սնունդներուն պակասը զգար, եթէ տուեալ միջավայրին մէջ չզգար «սպարմու հպարտութիւնը»:

1936-ին գրուած «Յեղափոխութեան լալտ գօտին» անուն քրոնիկոնին մէջ, զոր լոյս ընծայեց «Յուսարք» (1948) ամսագիրը, ինքն է գարձեալ, որ մէկ երկու պարբերութիւններով կու տայ իր հօգին կազմող միջավայրն ու տարերքը:

«Հայ յեղափոխութեան գաղափարական միջավայրը մեզմէ շատերուն համար, դեռ մեր յարումէն առաջ, մթնոլորտ մը եղած է, ուր պատմի մը կրնայ տգտութեամբ ու հպարտութեամբ հաստի նետել, ուր կրնայ բարձունքներու կենարար օդը շնչել»:

Ու հերոսներու պաշտամունքը ամէնէն ազնիւ ծէսերէն մէկը կրնայ ըլլալ, եթէ ծառայէ երիտասարդութեան ոգեգինման, ժողովուրդի հոգւոյն աշտարակումին: Այս պաշտամունքի մթնոլորտին, այս հերոսական մտերմութեան շրջանակին մէջ է, որ մեզմէ շատերը վերագտած են ապրելու հպարտութիւնը: Սկսած են հաստալ հայ արիւնաբաւ ժողովուրդի տպագային ու մերժած են մաս կազմել եսանդիկ տկարներու եւ գոսպիներու փազանցիմ»:

1936-ին գրուած են այս տողերը, ճի՛շդ «Ալեկոն տարիներ»-ը գրի առած օրերուն, այսինքն՝ շարամտօրէն ըսուած «իւր կուսակցական կեանքի ողորդութեան» թուականներէն ետք, բայց, ինչպէս կը պարզուի, Շուշանեանի համար հայ յեղափոխութեան գաղափարական միջավայրը, «զեռ մեր յարումէն առաջ», հպարտութեան աղբիւր էր, բարձունքներու կենարար օդ, պաշտամունքի մթնոլորտ, ուր «մեզմէ շատերը վերագտած են ապրելու հպարտութիւնը»:

Այդ բուրբին, ի՛ր էութեան, իր տարերքին դուստնանելու ընդունակ

չէր Շուշանեան եւ ժեղի կը թուէ, թէ «Ալեկոն տարիներ»-ու 600 էջերը տարբեր հիւթով մը չէ ոգոզած ան:

«Ալեկոն տարիներ, 1920-1932»: 600 էջ:

Մենազգողը ամէնէն աւելի շարշարած է ա՛յս մեաազգիբը:

Տասը անգամ գիժած է անոր, բայց դիակապուտի Ծայրագոյն բժա-
խնդրութեամբ կատարած էր տասը մէլքերումներէն եւ ո՛չ մէկը գիտ իբա-
ւունք չի տար իրեն Շուշանեանը հանելու Շուշանեանին դէմ եւ անոր «կու-
տակցական կեանքի ոգրերգական պատմութիւնը» համարելու գործը:

Այս ընդարձակ խարզախութեան ընթացքին, տեղ մը ընթերցողին
կ'ըսուի, թէ՛

«Շուշանեանն այլեւս ոչ մէկ կապ չէր կարգ ունենալ այդ մարդ-
կանց ու կուտակցութեան հետ»:

Փաստերը անտեսելով՝ զուտ հաշիւներու հիմամբ հանդիսուոր յար-
տարարութիւններ ընելու համարձակութիւնը մեր ժամանակը յատկանշող
սխտանիշներէն մէկը եղաւ, ու դժուար է յուսալ, որ ախտակիրները շու-
տախոյժ բուժուին: Ախտակիր մը եւ ա՛յս մէկը, Շուշանեանի մասին
կամայականօրէն խօսող այս կամակատարը: Հոս արձակած էր վճիռը հիմ-
նուէրելու համար անպարճան, շուրջ վաթսուս էջ անդին, կը գիժէ երե-
ւութապէս ի նպաստ իր դասին վկայող սա յերկրանքին:

«Մենք»-ի պոռկուումը մի սերունդի պոռկուում էր, որ իր ... «ակ-
ուններուն տակ, որպէս աւագի կարծր հատիկ, կը փշրէ ապրելու դառնու-
թիւնը...», բայց որպէս աւագի կարծր հատիկ, ապրելու դառնութիւնը
փշրելէ առաջ, փշրուեցան «Մենք»-ի աշխատակցոյ որոշ գրողներին ատամ-
ները: Այսպէս՝ Եսայի Նարդունիմ, Նիկողոս Սարափեանը, Նշամ Պէշիկ-
թաշլեանը հետագայում վերադարձան այնտեղ, որտեղից սկսել էին՝ աւե-
լի իրտեցին ազգայնամուտութեան ախտի մէջ: Դաշնակցական այդ սերունդից
միակը՝ Վազգէն Շուշանեանը մնաց պատմէչի վրայ եւ շարունակեց ըմբռ-
տացումը մինչեւ իր մահը, դառնալով իր սերունդի տառապան մարտիկը:
«Մենք»-ի «Մարտկոցականներին» շարժումը, որի մէջ գլխաւոր դերը վի-
ճակաւու էր Վազգէն Շուշանեանին, չունէր անձնական մեզ հաշիւներին ու-
լորտը, ինչպէս մզնում էին ցոյց տալ դաշնակցական դեկլարաները դիմե-
լով հազար ու մէկ միջոցներին:

Վազգէն Շուշանեանի կեանքին ժօռէն հետեւած մարդոց համար
դժուար է ընդունել հոս ըսուածը, հոս ներկայացուած ոգիով Շուշանեան
մը: Թող զարմանալի չի՞նք, եթէ անմիջապէս ըսենք, որ «Մարտկոցական»
շարժումի ամենարուն օրերուն նոյնիսկ, Շուշանեան կ'ապրէր ու կը մտա-
ծէր Դաշնակցական մարդու պէս: Իր պայքարը, սխալ կամ ճիշդ, Դաշնակ-
ցութիւնը իր ըմբռնումներով տեսնելու բաղձանքի մը արդիւնքն էր, Դաշ-
նակցական գաղափարական զօրութեան ու կարելիութիւններուն զօրութեամբ
հաւատացող մարդու տաղանապ, որուն, շարաննդ մարդիկ տարբեր դու-
նաւորում մը կու տան հիմա, յիմարօրէն պնդելով, թէ ան պայքարի ելաւ
«պատրանաթափ լինելով այդ կուտակցութեան մէջ իր երազներն ու ազգա-
յին իղձերի դարձանը փնտռելուց»:

Այդ մասին խօսելէ առաջ, կարգացէջ «Մարտկոց»-ի իսկ մէջ լոյս
ընծայած Շուշանեանի մէկ պոռթկումէն հատուած մը, որ կը քնարերէն
«Իաշնակցական տղերք»:

«... Ո՛վ չի գիտեր այս տղոց սրտում ու խալ հայեացքներում գե-
պեցկութիւնը, երբեք չի կրնար սիրել հայոց ազգը:

«Ո՛վ տրտում ու քիչ մը խորունկ ակնարկը, ո՛վ սու ու քիչ մը վի-
րաւոր ակնարկը Դաշնակցական տգու, ինչքան ալ զարմանալի թաւի աւի-
կա, ես իստիքովս հասող շուրթերուդ մէջ է որ կը զգամ առանկազայն
հայրենիքը»:

*Այդպէս էր Շուշանեան: Իրապէս անոր պայքարը ճշունէք անձնական
նեղ հաշիւներէ ոչոքուք, քիչ անդին տրուած փաստերը աւելի յստակ կ'ըն-
ծային այդ անշահախնդրութիւնը: Սխալ է միայն Դաշնակցական զեկա-
վարներուն վերադրուած ճշունեան ստասպելը: Դաշնակցական զեկավար-
ները երբե՛ք պէտք չունեցան իրենց վերադրուած ճշտար ու մէկ միջոցնե-
րին դիմելու, դաւը եւ դաւադիրներուն դիմակը վար առաւ ի՛նքը՝ վազդէն
Շուշանեան, շարժման վեցերորդ ամսոյն, իբր շրջաբերական նամակով, որ
գոյրոյթով կը խօսէր կարգ մը մարդոց միջոցով բացուած պղտոր աղբիւ-
րին մասին ու կը զանէր, որ՝*

«Այս մաւթ ու անձանօթ ազրիւրին հանդէպ եղած որոշ յանձնարարու-
թեամբ միայն կարելի է բացատրել «Մարտկոց»-ի բազմաթիւ քիւերուն
մէջ ի յայտ եկած ու մեր սկզբնական ուղղութեան բնաւ չհամապատասխա-
նող գիծը, ինչպէս նաեւ մեր կուսակցութեան բացայայտ թշնամիներուն
ուրախութիւն պատճառով գրութիւններ»:

*Ուղիղ երեսունըզինգ տարի (1933) առաջ գրուած է Շուշանեանի
շրջաբերական-նամակը, եւ որովհետեւ այդ հետաւորութեան պատճառով
Դաշնակցական նոր տղաքը եւ համակիր ընթերցողները կրնան իրենք եւս
ուղղակի տեղեակ ըլլալ անոր բովանդակութեան՝ տանք քանի մը հատ-
ւածներ եւս, որպէսզի միանշաճընդմիշտ յստակ ըլլայ Շուշանեանի «Մարտ-
կոց»-ական գիծադիծը եւ դիւրին ըլլայ զայն շահադրժողներուն դիմակա-
զերծումը:*

Շուշանեան կը շարունակէ իր ախտանշանաւորը.

«Իսկ թերթը շարունակել վերը մատնանշուած ազրիւրներով՝ ժըլ-
տումն ու ուրացումն իսկ է մեր հիմնական ուղղութեան, ամբողջ շարքե-
րու ընկերներուն մտաւոր ու խանդավառ տրամադրութեանց, որ կ'ուզեն
Դաշնակցութիւնը մաքրել ներքին ցեցերէ ոչ թէ մեր կուսակցութեան սխե-
րիմ թշնամիներու օժանդակութեամբ, այլ ձեռք ձեռքի տուած Դաշնակ-
ցական բազմաազար շարքայիններուն, աշխատելով անոնք եւս մտանկից
դարձնել այս շարժման»:

*Կուսակցութեան մը մէջ, նոյն կուսակցութեան պատկանող ուրիշ
մարդոց համար՝ ոչ սիրելի անձեր կրնան միշտ գտնուիլ: Բայց ատիկա
բան մը չի նշանակեր դեռ եւ խոհեմութիւն չէ ընթացիկ այդ երեւոյթին
տակ զազափարական տարակարծութեանց լծակ մը փնտռելու աճապարան-
քը: Կուսակցութիւն մը անձերու կապուած չի կրնար ըլլալ, անձերու կապ-
ւած կրնայ ըլլալ շատ-շատ պահ մը, կ'անցնի պահը, կ'անցնին եւ անձերը
իրենք, կը մնայ կուսակցութիւնը, եթէ զազափարական իր առողջութեամբ
ու նպատակաւորութեամբ արժանի է մնալու: Այդպէս կը մտածէր նաեւ
Շուշանեան եւ կեցուածք կը ճշդէր համաձայն ա՛յդ մտածումին: «Որովհե-
տեւ, — ինչպէս պիտի ըսէր ինքը, — մարդիկը մարդ են, ընկեր, պիտի է
կուսակցից ըլլալ զազափարներու եւ ոչ թէ զանոնք կրող մարդոց»:*

*Հասած ենք ուրիշ առիթներու, շնչտենք անկամ մը եւս, որ Շուշան-
եանի պայքարը տարբեր դրօշակի մը ծառայելու տրամադրութենէն թելա-
զրուած չէր, «մեր կուսակցութեան սխեմիմ թշնամիներուն» ձեռք երկա-
րելու յետին միտք մը չէր հետապնդեր, ինչպէս կը ճշդին ցոյց տալ անոր*

մասին զիրք գրող անպարարները, Շուշանեանի մօտ պայքարը ընտանեկան վէճի մը բնոյթը ունէր եւ այդ սահմանէն դուրս չելաւ, ընդհակառակն, պլզանքով ծառայաւ սահմանազանցներուն դէմ, ու ընդդէմէլ հաք, թէ՛ «մեր յեղափոխական իրողը թոյլ չէր տար որ շարունակենք ծածկել մեզմէ այս դառն ճշմարտութիւնը», ծանրակշիռ ամբաստանութիւններու տակ կ'առնէր իրենց հիմնական ուղղութեան դաւաճանած պղտոր հոգիները, որոնք՝

«Ենթաթիւրած են նաեւ «Մարտկոց»-ի Դաշնակցական դէմքը, կարծիլ տայով հանրութեան ու Դաշնակցական հազարաւոր շարքայիններում, որ հարիւրային գանազան մարտոց եւ մեր միջեւ գոյութիւն ունին կապածնի կապեր»:

Ընդվզելով խեղաթիւրողներուն դէմ ու մերժելով Խորհրդային կասկածելի կապերու մտայլ յիշատակ մը կապել իր տնունին, Շուշանեան, նոյն շրջաբերականով, անմաքուրներուն մաքրագործումը պայման համարելով՝ կ'առաջարկէր «Մարտկոց»ը հրատարակել հետեւեալ ուղղութեամբ.

1.— Շարաքաքերը «Մարտկոց»ը կը շարունակէ տարածել մեր գաղափարները, առանց որեւէ ազդիւրէ — բացի մեր ընկերներէն եւ համակիրներէն — նայաւտ ընդունելու:

2.— Կը դադրեցնէ պայքարը անմերտ դէմ, կը քանայ գորավիզ կանգնիլ Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական բայերում, արտաքին աշխարհին առջեւ բարձր կը պահէ Դաշնակցութեան պատիւը, բայց լրջորէն կը զարգացնէ իր տեսակէտները:

3.— Կը պայքարի Դաշնակցութեան յեղափոխականացման համար, բնառաջատարով ձեկավարութիւնը, ամէն անգամ որ վնասակար բայեր առնէ:

Այս առաջարկը կենդանի գործի չվերածուեցաւ: «Մարտկոց»ը լոյս չտեսաւ իր նախատեսած լոյսով, եւ այդ իսկ պատճառով Շուշանեան վերջնականապէս իր կապը խզեց այդ շարժումին հետ, որ հետզհետէ աւելի պղտորեցաւ, լճացաւ ու ցամաքեցաւ ի վերջոյ: Շուշանեան իրեն մօտիկ ընկերները շարքերը վերագարձնելու լուտ, այլ տենդազին աշխատանք մը ծաւալեց անմիջապէս, եւ հուսկ ապա՝ ընդմիջտ քաշուեցաւ հանրային կեանքէն:

Շրջաբերութեան դրուած վերոյիշեալ շրջաբերական նամակէն մինչեւ իր մահը, Շուշանեան ապրեցաւ ութ տարի, հետու՝ հայկական միջավայրէն, մեկուսի, լուտ, ու եթէ երբեմն խզեց լուծիւնը, յամենայնդէպս, իր խառնուածքին խորթ բեմերէն շփուեցաւ ընթերցողին հետ, մեւը դտաւ կրկին իր տունը վերադառնալու, անեցիկները մեւը դտան զիրկ բանալու իրեն կրկին: Վազգէն Շուշանեանը եղաւ Յովհաննէս Թրակացի պարզապէս ու հրատարակեց իր «Դառն Հաց»-ը, «Հայրենիք»-ի ժԸ. տարուան (1939) նոյեմբերի, Դեկտեմբերի եւ Յունուարի (1940) թիւերուն մէջ: Յետոյ՝ նոյն ծածկանունով, նոյն ամսադրի նոյն տարուան մէջ՝ «Մ»-ին պատմութեան»-ը, յաջորդական եօթը (Մայիս-Նոյեմբեր) համարներով: 1941-ին, այս անգամ բանաստեղծութիւններու տակ, նոյն հանդէսի Փետրուար, Մարտ, Ապրիլ եւ Մայիսի թիւերուն մէջ՝ նորէն կը հանդիպինք նոյն ստորագրութեան:

Ինչպէս կ'երեւի, Շուշանեան «Մարտկոց»ական շարժումէն նոյնիսկ եօթ-ութ տարի հտք՝ ո'չ միայն հոգեւին, այլեւ շօշափելիորէն գործ ունէր այդ մարդկանց ու կազմակերպութեան» հետ, եւ այդ մարդիկն ու կու-

սակցութիւնը խորթ աչքով չէին դիտեր զինք, փոխադարձ կապերը սկսած էին աւելի ամրանալ, երբ, իր վերջին գերթուածը հիւրընկալող «Հայրենիք» ամսագրի (Մայիս) հրատարակութենէն մէկ ամիս շանցած՝ փակեց աչքերը (1941-Յունիս 2) :

Մ

Մտնուան վաղորդային, պարզուեցաւ, որ իր լուռ տարիններուն՝ Շուշանեան կուսակաժ է հսկայ գրականութիւն մը եւ ձգած է անոր կապաժ կտակ մը :

«Մ. Արեղեանի անուան գրականութեան ինստիտուտի»-ի հովանաւորութեամբ լոյս ընծայուած մենագրութիւնը անդրադարձած է նաեւ ատոր :

«Տարիներ շարունակ նրա արխիւի մասին վեճեր ու յուզումներ են եղիլ արտասահմանում, արխիւը նախ մերժուել է Վենետիկեան Միութեան համընթիւ կողմից, հետագայում վերցրել են վիեննական Միութեան անդամները եւ քսան տարի պահել, յետոյ անցիլ է Պէյրութ, իսկ այժմ գտնուում է Երևանի գրականութեան եւ արուեստի քանգարանում: Դժբախտաբար լրիւ չէ այն, պակասում են տետրեր, բայց այնուհէպ զգած գեղարուեստական արձակի ընթերցումը առաւել պայծառ է պատկերում Շուշանեան մարդուն ու գրողին» :

Անխարկուած վէճերուն ու յուզումներուն պատճառներն ու նկարագիրը արորոչ են շատ ու պակասող (դժբախտաբար) տետրակներուն միջոցէն կատարուած ուսումը աւելի թանձրացուցած է մշուշը: Ինչո՞ւ սակայն այս մշուշը: Ինչո՞վ կը բացատրուի վէճին ու պակասող տետրակներուն մօտէն այսքան արագ անցնելու թեթեւութիւնը :

Սփիւռքի ընթերցողներուն մէկ մասը, ա՛նուազն մտաւորականութիւնը տեղեակ է ինդրին էութեան: Վէճը ծագեցաւ 1955-ին, «Նայիրի» շարաթաթերթին եւ Շուշանեանի կարծեցեալ «կուսակաւատարներուն» մէջէն, պակասող տետրակներուն կապակցութեամբ: Նոյն տարին, Ա. Մառուկեան, Ամերիկայէն դարձին՝ յաջողած էր Մկրտիչ Պարսամեանէն աննել ու հետը բերել պակասող տետրակները, որոնք յաջորդաբար լոյս ընծայուեցան «Նայիրի» մէջ: Շուշանեանի գրութիւնները բովանդակող «Նայիրի» թուղթին իսկ թիւէն, կտակակատար պարոնները սկսան հաւար փրցնել, պահանջելով որ վերադարձուին տետրակները եւ դադրի անոնց հրատարակութիւնը: Ի հարկէ, տետրակները չվերադարձուեցան, յանձնուեցան «Համազգային» ընկերակցութեան ատենապետ Վահէ Սէթեանին, անոնց բովանդակութիւնը հանրութեան սեփականութիւնը դարձնելէ ետք:

Շուշանեանի այդ հինգ տետրակներուն հրատարակութեան ընթացքին պարզուեցաւ, թէ ինչու «կուսակաւատարները» տեսարբեր զտնուած էին անոնց հանդէպ եւ ուրիշ՝ կու դար հիմա անոնց անցօր կատաղութիւնը: «Նայիրի» հրատարակած 1939 եւ 1940 թուակիր օրագրութիւններուն ամբողջութիւնը կը հանդիսանար Շուշանեանի օրագրութեանց վերջին շարքը, ուր, տարաբախտ գրողէտը պարբերաբար կ'անդրադառնար իր կուսակցական ապրումներուն ու վերջին դեղումով մը կը յայտնէր իր համարումն ու հաւատարմութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան: Այդ էր :

«Դժբախտաբար պակասում են» եղբերդող ու անմիջապէս ծլկուող լղճուկը անձանթ չէ այս իրողութեան, պակասող տետրակները հրատարակութեան տուած «Նայիրի»-ի թիւերուն: Փա՛ստ՝ իր գիրքի էջ 136-ին միայ յիշատակուած «Ձաւէմ Մանկունիի սերերը», որ ապուեցաւ մէկ տե-

պամ միայն ու միայն «Նայիրի»-ի (Ե. Տարի, թիւ 15-27) մէջ: Ասկէ առ-
մէջնայէս առաջ, նոյն թերթին մէջ երեւցաւ միւս տեսարաններուն բովան-
գակութիւնը, շուրջ երեսուն թիւերով, երեսուն թիւերու զոյգ էջերուն
վրայ փոռած, որ բոլորովին անտեսուած է մենագրութեան մէջ ու պատ-
ճառը շատ յստակ է: Պատճառներէն մէկը կրնաք նկատել Յ Մարտ 1940-ին
գրուած եւ «Նայիրի»-ի 1956 Յունուարի բացառիկին մէջ տպուած Շու-
շանեանի օրագրութեան հետեւեայ հատուածը:

«Հարիր գրիչ շարժողի վրայ՝ հինգ հոգի չէ՛ք գտներ, որ, օրինակ,
կարիքային Միութեան նոր Սահմանադրութեամբ քննարկը կարգացած ըլ-
լան: Անտ կրկին մը որ կը տեայ բռնութեամ տակ: Արդ, այդ բռնութեամ
պաշտօնակում գործիքը անտարբեր կը թողու մեզ: Այս տգիտութիւնը պատ-
ճառ մը չէ սակայն, որ այդ հարիր գրիչները հեղինակաւոր կարծիքներ
չարձանագրեն, անվեղ քղթին վրայ, որ անբողոք՝ ամէն ինչ կ'ընդունի:
Շահնուր, ինձ առաջինը՝ տիպար ու եղկելի օրինակներէն մէկն է այս մը-
տարուպիկ մտաւորականութեան: Երբեք ուզած չըլլալով մեր պատմութիւնը
սքսկիլ՝ սակայն եւ այնպէս, կը դատէ զայն: Կրնա՞ք սպասել ըլլալ՝ որ
Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը անգամ չէ կարգացած, թէեւ շնակամ
անպատկառութիւնը ունենայ անոր մեռելները ծագրելու»:

Միտք պահեցէ՛ք՝

«Երկիր մը որ կը տեայ բռնութեամ տակ», եւ մարդ մը՝

«Որ Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը անգամ չէ կարգացած, թէեւ
շնակամ անպատկառութիւնը ունենայ անոր մեռելները ծագրելու»:

1940-ին արձանագրուած խօսքեր են ասոնք, մէկը ընդդէմ Պորշըր-
զային բռնութեան եւ միւսը Դաշնակցութեան դէմ վայրահաշուութիւններ
արձակողներուն ուղղուած: Ու երկուքը մէկ լիովին կը բացատրեն Շու-
շանեանի դադափարական անձը, ապրումը, բխումը, կեցուածքը: 1940-ի՛ն:
Ահա եւ 1941-ին արձանագրուած տողեր, նորէն «Նայիրի»-էն (Դ.
Տարի, 1956, թիւ՝ 49-50) արտագրուած.

«Վ. Քաթուլ բանաստեղծին ետմովիկ, չոր, անբերրի, գրեթէ չար
ծերութիւնը: Ոչ մէկ սրատեսութիւն աներածեշտ էր զգալու համար թէ՛
ոյր լսկ կեանքին դէմ չէր, այլեւ մեր ժողովուրդին ու մանուսնդ Հ. Յ.
Դաշնակցութեան:

Կարգ մը հայ մտաւորականներու այս գարշելի, այս սանձակեցուցիչ
ախտը: Ախտ մը, որով թունաւորուած է իրենց արիւնը, անդամնայիօրէն:
Գօս հոգիներ, որ արտակարգ կենդանութիւն մը կը ստանան լսկ
փրփրելով այդ հիւսմնդ տեսութեամբ:

Ուսանց մօտ այդ ախտը վերածուած է քրոնիկ քիմիոնդրութեան,
կեանքի անյարիր հանգամակի, ընկերային վարդապետութեան, փիլիսո-
փայութեան»:

Քիչ մը անդին ու նորէն Վ. Քաթուլի առիթով՝

«Ո՛ր էր իր յիսկայ ծերութեան գաղտնիքը:

Այդ գաղտնիքը՝ գաղտնիքն է բազմաթիւ հայ մտաւորականներու:
Հ. Յ. Դաշնակցութեան դէմ տածած իր ախտագին տեսութիւնը՝ պար-
պած էր զինքը հոգեկամ, քնարական երիտասարդութենէ: Ո՛չ մէկ կենդա-
նի էութիւն կրնայ պահել իր գարնանային գաւաթութիւնը՝ նման անար-
կու տեսութեան մը շունչին տակ: Ատելովաւ էր ու քիմիոնդր դէպի
բոլոր անոնք, որ կը զարգանային Հ. Յ. Դաշնակցութեան շունչին տակ:
Այդ տեսութիւնը կը ծնէր յետադիմութենէ, կեանքի յեղաշրջակամ,

կեանքի արհամարհան ըմբռնումէ մը: Ի՞նչ որ ժողովուրդէն կը բխէր՝ ստուգապէս խօսելի էր իրեն համար:

Իր հոգեւոյն վրայ մառախուղի պէս կ'իջնէր Հ. Յ. Դաշնակցութեան մեծ շուէր: Եւստի մը՝ որուն տակ ուրիշ տաղանդներ կը բողբոջէին, ինք լույ ասնելութեամբ կը խանձէր:

Հ. Յ. Դաշնակցութեան մեծ շուէր քնարական երիտասարդութեամբ քնարերէրոյ այս տղերքը, բացատրութեան չեն կարօտիր. բացատրութեան կը կարօտի սակայն անոնց աղբիւրը անտես ընող մարդուն յետին միտքը:

Ըսինք՝ թէ պակասող տետրակներուն ողբը ընելէ ետք, պակասողներուն ճշգրիտ հասցէն գիտնալով հանդերձ՝ ոչ մէկ անգամ յիշած է ճշգրիտ հասցէն, Վեպրիւն, ՈՉ ԻՍԿ ՄԷԿ ԱՆՎԱՄ, փոխարէնը, սակայն, ԵՐԵՎԱՆԻՆԸ-ՀԻՆՎ ԱՆՎԱՄ հակած է Հայաստան հասած Եռւշանեանի անախպներուն վրայ, խորամանկօրէն, որպէսզի դիւրացնէ իր շահատակութիւնը, ընդհանուր մթնոլորտէն անջատուած արհեստական մէջբերումներու հիմամբ կարենայ իր ազոտոտ հաշիւներուն յարմարցնել Եռւշանեանի զտղափարական անձը, տա՛լ ներկուսակցական անոր պայքարին հակադաշնակցական ընդթ եւ կոմունիստական գունաւորում:

1928-ին դրուած «Մերոյ եւ արկածի տղաքը» գործին մէջ՝ դուք տեսաք Եռւշանեանի տրամադրութիւնը համայնափարութեան հանդէպ: Ուրիշ անգամ մը՝ «Մարտկոցական շարժումը դիմակազերծող իր շրջաբերական-նամակէն մէջ, ուր կ'ընդվզէր Խորհրդային մարդոց կասկածելի կապերուն դէմ: Մանօթ ենք նոյնպէս Խորհրդային Միութեան հանդէպ 1940-ին յայտնաբերած իր կեցուածքին» «Անտ երկիր մը որ կը տեսայ բռնութեան տակ»:

Ու իր մտածումներուն չհաստատող մարդ չէր Եռւշանեանը: Հեռու մեղմէ անոր անկեղծութիւնը կասկածի ենթարկելու որեւէ միտք: Եւ յետոյ ինչու պիտի կասկածինք Եռւշանեանի վրայ, երբ ծանօթ է անոր պայծառ դիմադիմը ծամածռելու ժպրհող մարդուն շարտենք ողին: Ան իր վերադրումները մեծ տոկոսով վստահած է սա ձեւի խեղճ ու կրակ փաստերու:

Քիշակցութեան նկատմամբ Եռւշանեանի ներաշխարհում կատարուած վերիվայրումները այդ ստրիկներին, ապացուցում են, որ ֆրանսիական բանուոր դասակարգի հետ շփումը դարձաւ նրա կեանքի իսկական ու իրաւ առաջին համայնարանը: Արխիւում պահուող նկարները (յոյրային եւ անհատական) բանուորների հետ, ցոյց են տալիս վազգէն Եռւշանեանի անկեղծ սէրն ու համակրանքը դէպի «չորրորդ դասակարգը»:

Մեր կողմէ բան մը ըսած չենք ըլլաք, պարզօրէն թարգմանած կ'ըլլանք ընթերցողին տպատրութիւնը, երբ հաստատենք, թէ՛

Մարդոց «չորրորդ դասակարգը սիրելի» դեռ չի նշանակեր Դաշնակցականութենէ պարզուիլ ու միջազգային պրոլետարիատի դրօշ պարզել:

Եանագործող դասուն դէմ դիրք բռնելու տենդը խորթ չէ Դաշնակցութեան ոգիին, եւ բնաւ լաւ ոգիի մը յայտարար նշան չէ այդ տենդին արտայայտիչներուն սովետական թանաչապիկ մը հազցնելու փութկոտութիւնը:

Հայաստանը քար առ քար կառուցող մեր երկրի աշխատատրութեան յարգանք ընծայել՝ տակաւին չի նշանակեր դուրս ծռել այդ երկիրը բուսութեան տակ տնջանող «պաշտօնական գործիք»ին:

«Քաղաքաբաններուն անտուեր ու յաղթական զեղեցկութիւնը» սիրե-

լու պատգամը համայնավար գաղափարաբանութեան խունկ ծխելու համանիշ չէ, եւ բարձունքներու, ամեր մեծ ու լուսակտուր Մասիսին՝ զովք հիւսելը համայնավարներուն մենաշնորհը չէ, որպէսզի մարդիկ արտօնուած ըլլան կարմիր լաթ նետել ենթականերուն վրայ:

Դաշնակցական ո՞ր մարդուն հոգիին մէջ, ո՞ր դործիչին լըթներուն վրայ, ո՞ր դրագէտին գրչին տակ շահագործող քաղցենին յարգանք ունի, ո՞ր ՎՄԼակ-բանուորքը յարգանք չունի, Հոյաստանը վերաշինող ո՞ր մարդը գուրգուրանք չի վայելեր մեր հոգիին, գաղափարներու յաղթական դեղեցկութիւնը չի արտփեր, կամ ամէն օր չի խոյանար Մասիսը իր մաքրամաքուր ու վեհապանծ շքեղութեամբ: Ո՞ր Դաշնակցականը այդպէս չի մտածեր, այդ սպրումներով չի շնչեր, որ նոյն մտածումներն ու սպրումները իբրեւ փաստ կը ծառայեցունին Շուշանեանը սովետականացնելու տխրութեան:

Քիչ անդին, գուր հանչեալ «Սիրոյ եւ ուրկածի տղաքը» գործին ամենաուժեղ տիպարներէն Վահրամը, մարդոց զրկուած, անիրաւուած, շահագործուած դասուն երջանկութիւն խոտացող համայնավարներուն մայրն ու քոյրը կատաղօրէն հայհոյող կատաղի՛ տղան, որ, սակայն, երջանկութեան խոտումներով բեմ եկողներէն շատ աւելի զօրաւոր սիրով մը կը սիրէր սովորական մարդիկը, Շուշանեանի բառերով՝ «Կը սիրէր ժողովուրդը ու ամոր հոգին: Ար սիրէր մտնաւանդ տարզ ու անկեղծ մարդիկը, արտեմ իրեն մտան ամբողջ քրտով սիրելի ու ասելի գիտնն: Իր աչքերը կը շողային եւ մէջ բնջ մէջ կը հայեայէր համայնավարներու հասցէին»:

Անուտաղն Շուշանեանի հայթայթած փաստերով՝ կարելի է, ուրեմն, սիրելի ժողովուրդը ու անոր հոգին, մանաւանդ պարզ ու անկեղծ մարդիկը, ասունց համայնավար ըլլալու, նոյնիսկ համայնավարներուն հայհոյումով, ինչպէս էր իր վէպին Վահրամը, ինչպէս եղաւ եւ ինք, իր ողջ կեանքի ընթացքին:

Ներքին վէճերու հետեւանքով, յիւսիցինք անգամ մը, որ Շուշանեան քաշուեցաւ հայ իրականութենէն: Դաշնակցութենէն դուրս գալէ ետք՝ ուրիշ դրօշակ չփնտոցեց սակայն, յայլասերեց, չլորճեց ինքզինք, մնաց, ու որոշ մարդոց դէմ իր ընդվզումը պահելով հանդերձ նոյն աստիճանին վրայ, հոգին չպարպեց Դաշնակցականութենէ, չուզեց, չկրցաւ, չէր կրնար պարպուիլ Դաշնակցութեամբ շարժուած իր «հոգեկան, քնարական երիտասարդութենէն»:

Տարբեր լոյսի մը տակ Շուշանեանի գաղափարական անձը դիտելու որեւէ փորձ՝ չի կրնար մաքուր մղումի մը արդիւնքը ըլլալ, բռնադրօսիկ կ'ըլլայ, հաշտախնդիր մարդու գոտանցանք կ'ըլլայ, ու ընդվզեցուցիչ, ու ատաղին ընդվզողը կ'ըլլայ նորէն ինքը, Շուշանեան, Շուշանեանի հաստատութեան գիրքը, 1939-ին արձանագրուած ու իր ամբողջ անձին վրայ լոյս սփռող հետեւեալ շտապուն կտակը.

«Խորապէս հաւատացած եմ թէ գրի առնելով այս տողերը՝ հաւատարիմ կը մնամ ընկերավարութեան այն ըմբռումին, որ քանացած եմ քանանելի բազմաթիւ յօդուածներու մէջ: Ու Հ. Յ. Դաշնակցութեան, որուն մէկ գիծուորը կը մնամ, գրպանս անգամաւոր ըլլայ կամ ոչ»:

Պ. ՄԱՊԵԱՆ

ՆՈՐԱՅՐ ՊԱՐԹԵՒԻԱՆ

**ՀՈԳԵԲԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ**

Յրանսացի հոգեբան բժիշկ մը, փրոֆեսոր Փօլ Սիվատան ուսումնասիրած է մարդուն եւ իր շրջապատին փոխազդեցութիւնները: Լուրջ աշխատանք մը, որ կը հետաքրքրէ ճարտարագէտները, իւրաքանչիւքները, ստեղծարարները անշուշտ, բայց նա'եւ գորգացած ուսէ անձ: Փրոֆեսորին դադափարները արդէն իրազործուած են մտային հիւանդանոցներու յատկացուած մեծ հիւանդանոցի մը շինութեան մէջ, Եւրոպայի ամէնէ'ն արդիական շէնքը, ԼԱ Վել'ի'ի'ի' Ի'նչ էն Փօլ Սիվատանի եզրակացութիւնները:

«Մարդիկ տուներ կը շինեն, բայց տուններն ալ իրենց կարգին զանոնք կը կազապարեն», ըսած է Ուիլհելմ Զրիլի: Կա'ն արդեօք մասնաւոր չափեր, ձեւեր կամ գոյներ, որոնք կը ստեղծեն, խաղաղ կամ ալ մտահոգիլ միջոցը մը: Յարմարելու մեր յատկութիւնը անսահմա'ն է, թէ անհրաժեշտ է յարգել կարգ մը հիմնական օրէնքներ տան մը կամ յարկարարման մը շինութեան ընթացքին:

Մարդը, ամէ'ն կենդանիի պէտ, կը կրէ ազդեցութիւնը ա'յն հոգամասին, որուն վրայ կ'ապրի:

Ճիշդ է նաեւ, որ քանի բարձրանանք ապրող էակներու աստիճաններուն վրայ, այսինքն բոյսերէն անջնիք անասուններուն,

բուն, հասնելու համար վերջապէս մարդուն, Ֆիզիքական շրջապատին ազդեցութիւնը կը նուազի, եւ փոխորէնը կ'աւելնայ ընկերային շրջապատին կարեւորութիւնը: Բնական մարդ մը կրնայ սիրել կամ չսիրել իր տունը, իր փողոցը, իր թաղը, բայց «կը յարմարի»: Այդ կ'ըլլայ սակայն քաճում տառապանքի մը գիմով:

ՄՏԵՐԻՄ ԵՐԱՊԱՍԸ

Ծերերը եւ հիւանդները մասնաւորապէս զգայուն են Ֆիզիքական շրջապատին պարտադրանքներուն հանդէպ: Եւ հիւանդներուն մէջ՝ մտային հիւանդները: Նախամարդուն վախերը, վախուստի կամ յարձակման բնազդները անարգել կը յայանուին մտային հիւանդութիւններու ընթացքին: Փրոֆեսոր Փօլ Սիվատան կը մեկնի ա'յն հաստատումէն, որ արտային ամէ'ն ձգտում արդէն դոյութիւն ունի «բնական» մարդուն մէջ: Բայց անիկա անհամեմատորէն կ'ամի մտային հիւանդութեան ընթացքին: Ուրեմն, կարելի է հիմնուիլ մտային հիւանդին հակազդեցութիւններուն վրայ, ուսումնասիրելու համար

պայմանները ա՛յն շրջապատին, որոնք պիտի յարմարին թէ՛ Հիւանդին եւ թէ՛ առողջին համար:

Ուրիշ խօսքով, մտային Հիւանդին հակազդեցութիւնը զօրաւոր եւ անեղծ ըլլալու առաւելութիւնը ունի: Ուսումնասիրման համար կարելոր է նաեւ անասուններուն հակազդեցութիւնը, որ կը յայտնարերէ նախնական բնազդներ եւ դիրքաւորումներ: Այս առբնչութեամբ յատկանշական է քրիթիք հեռաւորութիւնը, որ յարձակումի կամ փախուստի Հեռաւորութիւնն է՝ տնասուններուն համար:

Ամէ՛ն կենդանի — եւ մարդն ալ — ունի «մտերիմ շրջապատ» մը, որ իրեն հետ կը շրջապայի: Այդ շրջապատին ներս մտնողը անպատճառ կը յարուցանէ փախուստի կամ յարձակման բնազդ մը, ա՛նձուազն մտահոգութիւն կամ վախ: Բնական մարդուն համար այդ «մտերիմ շրջապատը» մօտաւորապէս մարմինէն ութսունէն հարիւր քանթիմէթը Հեռաւորութեամբ անտեսանելի պատ մըն է. բայց այդ սահմանները կրնան փոխուիլ համաձայն ընկերային դիրքին եւ ազդութեան: Այսպէս, բանակին մէջ, մեծաւորի մը հետ խօսելու համար հարկ է «վեց քայլ ետ» կայնիլ: Նախարարի մը զրասեղանը շատ աւելի մեծ է, քան ստորադաս պաշտօնեային: Ասոր հակառակը, լատինական ծագում ունեցողները իրարու հետ շատ աւելի մօտէն կը խօսին, իրարու հազուաւ կը բռնեն, վերարերում մը, որ անկօսաքսոն ծագում ունեցողներուն համար պիտի նկատուէր անհանոյ ներխուժում մտերիմ շրջապատին մէջ:

Կարելի է քրիթիք հեռաւորութեան կամ մտերիմ շրջապատէն աւելի մօտենալ անասուններուն, պայմանաւ որ մօտեցողը ենթակայական դիրք մը առնէ: Նոյնը կը գտնենք մարդոց մօտ, յազթականին ոտքերուն առջև խոնարհող պարտեալին դասական պատկերին մէջ:

Մտերիմ շրջապատէն կամ ալ քրիթիք հեռաւորութեան անդին կայ երկ-

րորդ շրջապատ մը, մօտ երկուքուկէս մէթը Հեռաւորութեամբ, որմէ ներս ուրիշի ակնարկը կրնայ նեղացուցիչ ըլլալ: Այսինքն՝ եթէ մէկը անասունի մը մօտենայ երկուքուկէս մէթրի լայք, առանց անոր նայելու, անասունը չ՛ազդուիր: Իսկ եթէ նայի (այդ Հեռաւորութենէն, կամ աւելի մօտէն) անասունը կը մտահոգուի: Կրնայ փախիլ կամ յարձակիլ: Իսկ մարդոց պարագային՝ արդէն այդ Հեռաւորութենէն աւելի մօտ անձ մը կամ առարկայ մը սեւեռելու համար պէտք է ակնարկը կեդրոնացնել, ինչ որ միշտայնս պրկում եւ յոգնութիւն կը պատճառէ: Երկուքուկէս մէթրէն անդին՝ ակնարկը կրնայ յամենալ ո՛րեւէ կէտի վրայ, առանց մասնաւոր յոգնութեան: Ամերիկացի հոգեբան Ռայլընդ Սոմքրի փորձարկութիւններուն համաձայն՝ զէմ-զիմաց նստիլը ամէնէն զէշ մէն է յարարերութիւն ստեղծելու համար երկու անձերու միջև: Երբ մարդիկ սեղանի մը շուրջ բոլորուին, յարարերութիւնները շատ աւելի յաճախակի են ո՛չ թէ զէմ-զիմաց նստողներուն՝ այլ քով-քովի կամ ալ երկու ոչ-ակազդի անկիւններ նստողներուն միջև: Այդպէս կարելի է շնորհիւ խօսակիցին ակնարկէն, շոգ-նիլ գայն դիտելու հարկադրանքով, եւ մանաւանդ կամովին իրարու մայիլ կամ շնայիլ: Եւ ա՛յդ է կարելորը, այսինքն ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԿԱՐԵԼԻՍԻՍԻՍԻՆԸ, որպէսզի հանդիպումն ու յարարերութիւնը անարգել հաստատուին:

ԻՏԵՍԿԱԿ ՍԵՆՆԱԿԸ

Որպէսզի Հնարաւոր ըլլայ ընտրութեան կարելիութիւնը տալ ակնարկին, որ կամ կեդրոնանայ երկուքուկէս մէթրէն աւելի մօտ գտնուող անձի մը (կամ առարկայի մը) վրայ, կամ ալ ուղէ հանդիլ աւելի Հեռաւոր կէտի մը վրայ, անհրաժեշտ է որ աշխատանքի յատկացւած սենեակ մը ունենայ ա՛նձուազն երկու մէթր ութսուն լայնք եւ երկքու-

կէս մեթր երկարութիւն: Այսինքն ոչ շատ մեծ, ոչ ալ շատ պզտիկ սենեակ մը:

Ո՛չ շատ պզտիկ, մտերիմ շրջապատը եւ ակնարկի երկրորդ շրջապատը անանցանելի պահելու կարելիութիւնը ստեղծելու համար:

Ո՛չ ալ շատ մեծ, որովհետեւ լայն միջոցները կրնան «մտահոգիչ» ըլլալ: Մտային հիւանդները շատ զօրաւոր հակազդեցութիւններ կ'ունենան սենեակի մը տարածութիւններուն հանդէպ: Նախ կան լայն տարածութիւններէն վախցողները (ալլաբաֆայ), որոնք լքուած ըլլալու անսխորտ զգացումը կ'ապրին մեծ սենեակներու մէջ եւ մա՛նաւանդ դուրսը: Եւ երկրորդ՝ նեղ տարածութիւններէն վախցողները (գլապրոֆայ), որոնք ուղղակի կը «խեղդուին» պզտիկ սենեակի մը մէջ:

Եթէ մտային հիւանդը այս երկու ծայրայեղութիւններուն կը կապուի արտային մոլուցքով մը, «բնական» ըստած մարդն ալ կը ներկայացնէ միեւնոյն ձգտումները, քանի որ անոնք իր ամբողջ կեանքը ղեկավարող երկու բեւեռներ են: Մէկ կողմէ՝

- Պահանջը ապահով տեղի մը, մտերիմ, պզտիկ տարածութեան մը՝ ուր ինքզինքը պաշտպանուած զգայ արտաքին աշխարհին հանդէպ (անասունին նեղ որջը, եւ իր նախնական ձեւին տակ՝ մայրական արգանդը):

Միւս կողմէ՝
- Պահանջը ազատութեան, անկաշկանդ կեանքի: Այսինքն արտաքին աշխարհը եւ իր լայն տարածութիւններուն զաշողութիւնը:

Թէեւ այս ձգտումները կը թուին հակադիր ըլլալ, բայց բնական մարդը իրապէս երջանիկ է զանոնք փոխելի փոփոխութիւններով: Պզտիկ սենեակի մը առթած ապահովութիւնը ի վերջոյ միօրինակութիւն եւ ձանձրոյթ կը պատճառէ (յիշեցէ՛ք բանտարկեալներու տառապանքը): Իսկ կեանքի պայթարէն, մեծ տարածութիւններէն յոգնած մարդը հաս-

նոյքով կը վերադառնէ իր պզտիկ սենեակին մտերմութիւնը:

Սենեակի մը բարձրութիւնը նուազ կարեւորութիւն ունի, քան լայնքն ու երկարութիւնը, որովհետեւ անձերու եւ առարկաներու հետ մեր ունեցած յարաբերութիւնները կը հաստատուին առաւելապէս հորիզոնական գիծերով: Բայց ցած ձեղունները կրնան «մտահոգիչ» ըլլալ: Մարդու հոգեբանութեան մէջ արմատացած է այն իրողութիւնը, որ ստորագասը կը խոնարհի դերադասին առջեւ: Գերադասը գլուխը բարձր կը բռնէ, ամպիտին վրայ կ'ելլէ... Արձաւոր պատուանդան կ'ունենայ:

Երբ «մտահոգիչ» կ'ըսենք, նկատի ունինք անպիտակից մտահոգութիւն մը, տարտամ, բայց անսխորտ զգացում մը:

Չարփերէն անկախ կայ նաեւ սենեակին ձեւը:

Փորձարկութիւնները կը ցուցնեն, որ ուղղանկիւն քառակուսին (ռէքթանկլը) կամ ալ պարզ քառակուսին կը ներկայացնեն սենեակի բնական ձեւեր, որոնց մէջ մարդ ինքզինքը ամէնէն աւելի պաշտպանուած կը զգայ, որովհետեւ կրնայ այդ երկրաչափական պարզ ձեւերուն մէջ մէկ ակնարկով ճշգիւ առարկաներու եւ անձերու տեղը: Կլոր սենեակը նոյն դիւրութիւնը չ'ընծայիր: Այնպէս կը թուի, որ ամէնէն «մտահոգիչը» մէկ դուռ ունեցող կլոր սենեակն է, որ կը խորհրդանշէ անելը - տեղ մը՝ ուրկէ չիս կրնար փախչիլ, թակարդ մը՝ որ փախուստի երկրորդ ելք չունի: Բոլորս գիտենք, թէ անելը վախի խորհրդանշանն է, եւ իբրեւ այդ՝ չափազանց յաճախակի երազներու եւ մոզմանջներու մէջ:

Մտահոգիչ են նաեւ տրապէզաձեւ եւ լոգանձ սենեակները, որոնց մէջ պատերուն, մեր անձին եւ ներկայ անձերուն կամ առարկաներուն փոխադարձ հեռաւորութիւնները ճշգիւ համար, անհրաժեշտ է մասնաւոր ճիշդ մը:

ՓԱՆՈՒՍՑ

Անասուններուն եւ մտային հիւանդ-
ներուն համար փախուստի կարելիու-
թիւնը կենսական է: Հոն որ փախուստի
կարելիութիւն չկայ, կ'արժնեայ բըռո-
նըւած ըլլալու՝ մտահոգիչ զգացումը:
Ըսինք արդէն, որ բնական մարդն ալ քիչ
թէ շատ միեւնոյն հակազդեցութիւնները
ունի:

Որպէսզի առւնը կամ ամէնօրեայ
սեճեակը զգալու ըլլալու զգացումը
տայ, անհրաժեշտ են երկու դուռեր:
Մէկը մուտքի եւ միւսը փախուստ-
նախ համար: Կամ ալ լայն դուռ մը, որիկէ
երկու անձ կարենան անցնիլ (մէկը կը
մտնէ, միւսը կ'ելլէ): Ա՛ռնուողն դուռ
մը եւ ցած պատուհան մը պատշաճի մը
վրայ (ուրիշ կարելի ըլլայ դուռս ցատ-
կել...): Անհրաժեշտ են նաեւ սեմ մը,
նախասենեակ մը, որոնք միջնորդներ են
ընտանեկան բոյնին եւ արտաքին աշ-
խարհին միջեւ: Թշնամին կամ անախորժ
հարը տակաւին կարելի է կեցնել, երբ
նախասենեակն են, բայց անգամ մը որ
սենեակ մտնեն, շատ դժուար կ'ըլլայ
զանոնք վանելը...

Այս տուեաներէն մեկնելով՝ կը
տեսնենք, թէ հոգեբանական որքա՞ն
սխալներ կը մէկտեղուին ժողովրդային
բնակարաններու շինութեան մէջ: Պիւա-
նէական մտահոգութիւններէ մղուած,
կառավարութիւնները կամ բարեփոխ-
ական պուրժուական ընկերութիւններ կը
չինեն շատ պզտիկ տուններ, որոնք մէկ
պզտիկ դուռով կը բացուին արտաքին
աշխարհին վրայ: Նախասենեակը կը
համարուի աւելորդ պերճանք: Ծած ձե-
ղունները չեն ծառայեր աշխատաւորին
ստորադասական բարձրութիւն փարատե-
լու: Ահա այս մարդկային նախնական
ձգտումները խեղդող մթնոլորտին մէջ է
որ հասակ կը նետեն կառավարութիւն-
ները տապալող ապագայ դժգոհները:
Մութ եւ երկար միջանցքներն ալ
մտահոգիչ են, քանի որ կարելի չէ ճշ-
զել թէ ո՞վ պահուած է քիչ անդին: Ար-

դէն քառասուն մեթրէն աւելի երկար
միջանցքի մը սկիզբը դանդաղը դժուար
կը ճանչնայ միւս ծայրէն եկողը, նոյ-
նիսկ եթէ լոյսը բաւարար ըլլայ: Եթէ
անհրաժեշտ ըլլայ շինել երկար մի-
ջանցքներ, անոնք պէտք է ունենան իւ-
րաքանչիւր տասը կամ քսան մեթրի
վրայ կողմնակի անցքեր, որոնք կը
ստեղծեն փախուստի կարելիութիւնը:
Սինեման լայնօրէն դործածած է մութ,
երկար եւ յաճախ կոր միջանցքը, ուս-
կում ազդող ֆիլմերու մէջ: Փախուստի
անկարելիութեան ենթադրատեղի զգա-
ցումն է, որ կ'արթնցնէ վտիւր անձանո-
թիւն, վտիւր անելին, վտիւր թակարդին:

ԳՈՅՆՆԵՐԸ

Երանօթ է զոյներու ազդեցութիւնը:
Գիտենք որ կարմիրը զբոսիչ է, կանաչը
եւ կապույտը հանդարտեցուցիչ, մոխ-
րագոյնը եւ սրճագոյնը քնարեր, կայլն:
Բայց զոյներու ազդեցութիւնը ժամա-
նակի ընթացքին եւ վարժութեամբ կը
նուազի: Միայն ճերմակը կը մնայ միշտ
յողնեցուցիչ աչքերուն համար: Ա՛յդ է
պատճառը, որ վերաբուժական գործո-
ղութեանց սրահներուն մէջ ճերմակը
փոխարինուած է հիմա կապույտով կամ
մա՛նուանդ կանաչով:

Նախընտրելի է ամէնօրեայ բնակու-
թեան սենեակներուն մէջ ընտրել բազ-
մազոյն համազրուութիւն մը, որ միօրի-
նակութիւն եւ ձանձրոյթ չ'ստաւացներ:

Գոյներէն, չափերէն եւ ձեւերէն ան-
կախ կայ նաեւ գործածուած շինանիւթը:
Աշխարհահռչակ կըզարգանան Մար-
սէլի մէջ բնակութեան հսկայ շէնք մը
չինել տուած էր, որուն տանիքը յատ-
կացուած էր պզտիկներուն: Բայց պզ-
տիկները չէին խաղար պէքով տանի-
քին վրայ: Կացութիւնը հիմնօրէն փոխ-
ւեցաւ, երբ տանիքը ծածկեցին աւազի
խաւով մը: Մանուկները սկսան եռան-
դով խաղալ: Պէքովնը անբնական էր,
մինչ աւազը ծանօթ, խորհրդանշան ծո-
վուն եւ բնութեան: Անշուշտ վարժու-

թեան խնդիր է եւ ժամանակի ընթացքին պէ՛տքովը, պողպատը, ալիւմինիումը եւ աղպակին ալ ա՛յնքան բնական պիտի երևին, որքան այսօր քարը, փայտը կամ աղիւսը: Պէտք է հետեւցնել, որ այժմէական յարկաբաժիններու մէջ կարեւոր է երբեմն մտցնել «նախնական» նիւթեր, ինչպէս բուրդը (գորգ), կաւը (գեղարներ) կամ փայտը, գոհացնելու համար քանակորոշ դարու մարդուն հողին ոչ շատ խորը թաքնուած նախամարդը: Այդ արդէն շատ լաւ հասկցած են տէքսթաթէօրմերը, որոնք լայնօրէն կը գործածեն պանոնք: Զարմանալի է հաստատել նաեւ, որ իրենց արհեստակցական լեզւին մէջ, փայտին եւ ընդհանրապէս նախնական նիւթերուն համար կը գործածեն «առաջ» եւ «կենդանի» անականները...

ԻՋԷ՛Ք, ԻՋԷ՛Ք ԵՐԱՋՆԵՐ...

Հողերանօրէն սխալ է բնակիլ աշխատանքի վայրին շատ մօտ տեղ մը, կամ ալ մա՛նաւանդ ապրիլ եւ աշխատիլ միեւնոյն վայրին մէջ: Ինչպէս ըսինք արդէն, տունը կը խորհրդանշէ բոյնը, ապահովութեան պահանջը: Աշխատավայրն ալ կը խորհրդանշէ որոտողական հողամասը, պայքարը, արտաքին աշխարհը: Անհրաժեշտ է որ այս հակադիր մարդէրը իրարմէ յատկօրէն զատուած ըլլան: Մարդ ամէ՛ն առաւօտ կը ձգէ իր ապահով բոյնը - տունը - եւ կ'ուզզուի պայքարի դաշտը - աշխատավայրը: Յոգնած, երբեմն յաղթական, երբեմն պարտեալ, բայց միշտ մեծ գոհունակութեամբ ամէն իրիկուն կը վերադառնէ իր տան մտերմութիւնը:

Միջոցին եւ ժամանակին միօրինակութիւնը փարատող այս բնական կշռութէն զրկուած են տունը կամ տան մօտ աշխատողները: Ամէ՛ն օր, եւ օրը քանի մը անգամ շուկայ իջող տանտիրիկներ զնուժի անհրաժեշտութիւնէն եւ հաճօքէն առաջ՝ կը գոհացնեն դո՛ւրս ելլելու բնական ձգտում մը:

Նոյնիսկ ինքնին, հոկայ չէնքի մը

բարձրագոյն եւ միօրինակ յարկաբաժիններէն մէկուն մէջ բնակիլը երկրորդական է՝ եթէ կտրելութիւն կայ յաճախ միջնորոտ փոխելու (գործի երթալ, կիրակիները գիւղ կամ ծով երթալ, եւ այլն): Գործատան ճի՛շդ դիմաց, ժողովրդային տուներու մէջ բնակող աշխատաւորները անհրաժեշտօրէն պէտք ունին այդ կենարար փոփոխութեան:

Պանութներու, ցուցափեղկերու, հանրային պարտէզներու, շատրուաններու, սինեմաներու դերն ալ շատ կարեւոր է բնակութեան կամ աշխատանքի վայրին շուրջ, կամ երկրէն միացնող ճամբուն ընթացքին, որովհետեւ անոնք մարդը կը մղեն ծրագրիներ մշակելու, երազելու: Եւ երազն ալ միջոց մըն է դուրս ելլելու միօրինակ միջնորդէն, առօրեայ մանձրացուցիչ կենսաճշմարտութեան:

Նախնական բնազդներէն, ակորափոպիլա կամ էլսոսթրոփոպիլա ձգտումներէն անկախ, մարդուս նախասիրութիւնները այս կամ այն շրջապատին հանդէպ կախում ունին նաեւ մանկական յիշատակներէն: Երջանիկ յիշատակներ նախասիրել կուտան անոնց հետ կապուած որոշ շրջապատ մը: Եւ ընդհակառակն, տխուր յիշատակներ կ'արթնցնեն վախի զգացումը անոնց հետ կապուած շրջապատին հանդէպ: Մտորներու հանդէպ Լօտիքեան հակազդեցութիւնը յաճախ պատճառ կ'ըլլայ, որ մարդիկ իրենց երջանիկ յիշատակներուն հետեւցնեն ո՛չ թէ ընտանեկան, այլ մեծ հօր կամ մեծ մօր բնակութեան վայրը:

Այս հողերանական ազդեցութիւններուն հաւատացող ճարտարագէտը, տուն մը շինած ատեն, ստիպուած է նկատի առնել ապագայ բնակողին անհատականութիւնը եւ մասնաշատուկ ձգտումները: Սխալ պիտի ըլլար իր նախասիրութիւնները պարտադրել յանախորդին, որոնք կրնան հիմնովին տարբեր ըլլալ: Ատոր համար ալ անհրաժեշտ է որ պիտեայ, թէ ի՞նչ են իր անձնական ձգտումները: «Մանիք զգեղ», ճարտարագէտ...

Ն. Պ.

ԳԱՐՈՒՆԷԼ ԹԱԳՈՒՈՐԵԱՆ



ՅՐԱՆՑ ԲԱՅԲԱ

Ո՛Վ ԷՐ ԲԱՅԲԱ

Միբազային գրականութեան մէջ նաեւցրած համբաւ մըն է ֆրակացի Յրանց Բայբա: Գեղ-մանքէն գրուած իր երկերը մարդկայնա-կամ չեքմ շունչով եւ առիճեղ շնչով տագոր-ւած են՝ հանգեղ կեանքի սնամուն կենդանութիւն:

Գ. Թ.

Գերլին, Յունիս 1914:
Առջանիւրեւնո՞ք պանդոկի սրահին մէջ, հրաւիրեալները անհամբերութեան մէջ են: Նշանառութի արարողութիւնը տեղի պիտի ունենար մէկ ժամ առաջ: Հրաւիրեալները անհանգիստ են, սպա-սումի տուայտանքին մէջ:

Սրահին մէկ անկիւնը, շրջապա-ւած իր ծնողքով ու ազգականներով, նշանածը, խարտիշաւեր մատաղատի աղջիկ մը, արցունք թափելու վրայ է: Գերլինցի մեծ ճարտարագործի մը աղ-ջիկն է ան, Ֆելիս: Ան ո՛չ գեղեցիկ է եւ ո՛չ ալ տղեղ, բայց հրապոյրով թաթա-խուն դէմք մը ունի, ինչպէս սովորու-

թիւն է ըսել, ուժեղ կամքի մը գիծե-րով: Կորովի աղջիկ մըն է ան, որ հա-մարմակած է իր հօրը գործարաններէն մէկուն պատասխանատուութիւնը ըս-տանձնել: Եւ սակայն, ուրիշներու նման, ինքն ալ անհանգիստ է, ջղայնու-թեան եզերքը հասած գրեթէ:

Յանկարծ, պաշտօնական համադ-գեստով մարդ մը, բամբակին վրայ ճեր-մակ ծաղիկով, սրահ կը մտնէ:

- Ահա՛. վերջապէս եկաւ, - կ'ըսէ մէկը, - բայց ինչո՞ւ ուշանալ ա՛յս-քան...

Առանց պատասխանելու, հրաւիր-եալներու մէջէն ան ճամբայ մը կը բա-

նայ իրեն, Տժգոյն է եւ իր գորշ աչքերը, խիտ յոնջերուն տակ, երանքերու մէջ կորսուած կը թուին: Ուղղակի կ'ուղղուի Ֆէլիսին:

- Քիչ մնաց պիտի չգայի, - կ'ըսէ անոր ջղայնու շնչով, - բայց պարտաւոր եմ բացատրութիւն մը տալ ձեզի: Մեր նշանաւոր տեղի պիտի լուսննայ: Շատ խորհեցայ: Հանգիստ կեանքի մը համար ստեղծուած չեմ ես եւ այս հաւաքոյթը իմաստ չունի այլեւս:

Այս բերտ խղովին իրիկունն իսկ, այս տարօրինակ նշանաձև շողկառք կ'անէր Փրակա երթալու համար: Հոն, ուսանողի մը սենեակին մէջ տեղաւորուած, իր ծրագիրին մէջ կ'արձանագրէր - «Պերլինի այդ պանդոկը կը նմանէր դատարանի մը: Դատու վարեցի ա՛յնպէս, կարծես կախաղանի պիտի դատապարտուէի»: Այս ժարդը, որ կը խօսի իր նշանաւոր հրատարակչերուն մասին, իբրեւ դատաւարներու, հաւաքուած կարծես մահուան դատապարտելու համար գինջը, Ֆրանց Քաֆքան է: Յետարեկան է ան: Երկու տարի առաջ, Փրակայի մէջ, ան կը հանդիպի Ֆէլիսին, բարեկամի մը տան մէջ: Ան ընկերացած էր հօրը, առեւտրական դործի մը կարգադրութեան համար: Առաջին տեսութեամբ սիրահարուած էին իրարու: Եւ յեղակարծօրէն իրենց յարաբերութիւնը կը ստանար վտանգաւոր դարձըւած մը: Ֆրանց կը դէր աղջկան սիրատարի նամակներ: «Կը սիրեմ ձեզ, - եւ միտմամանակ կ'աւելցնէր, - կը վախնամ որ պիտի տառապեցնեմ ձեզ, որովհետեւ ես դատապարտուած եմ միշտ առանձնակեցութեան»: Դատարան, ուստիկանութիւն, ոճիբ, դատապարտութիւն, բոլոր այս բաները, որոնք կ'ոգեկոչէն արդարադատութեան գործառնութիւնները, անդադր կը կրկնուին Քաֆքայի օրագրին մէջ: Իբր թէ, ամէն վայրկեան, խորհրդաւոր դատարանի մը սպաննալիքին տակն էր եւ հանդարտ խղճմտանք մը ունենալու արգելքին կը բախէր: Ձէր կրնար երջանիկ ըլլալ եւ

նոյնիսկ սիրոյ հրապոյրին նուիրուիլ: Այսպէս էր Ֆրանց Քաֆքայի ողբերգութիւնը:

Ան տպաւորուած էր այնպէս, թէ չէր կրնար սիրել եւ ո՛չ ալ սիրուիլ: Կարծես պարիսպ մը գինջը կ'ոնջատէր աշխարհէն եւ կը տառապէր ուրիշներէ չհասկցուելու դժբախտութենէն: Այս հոգեվիճակը ապրեցաւ ան իր մատղաջ տարիքէն, տարիք մը մենակեաց եւ թողլըւած: Մեծցած ըլլալով դարձուրեւի հօր մը շուքին տակ, ինքզինքը անարժան յանցաւոր մը կը նկատէր, խորհրդաւոր յանցապարտութեան մը համար դատապարտելի:

ՅԱՆՑԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՄԱՆՆԱՆՔԸ

Աւելի քան երեք, նշանաւոր այս խղովը սաստկացուց իր հոգեկան առեւանգը: Կը ջանար ազատագրուիլ անկէ, իբրեւ զարթնում մը մղջաւանջէ: Եւ այս ճիգին մէջ յաջողելու համար՝ զրկուսկաւ գիրք մը, ուր պատմեց իր ողբերգութիւնը, իր մենակեացութիւնը եւ իր յանախանքը աշխարհի մը մէջ, զուրկ արդարութեան հասնելու բոլոր միջոցներէն:

Այս գիրքին մէջ հրապարակ կուլայ ան, կարծես հաշիւ մը մաքրելու համար եւ կը նկարագրէ իր յանախանքը մանրամասնօրէն, ճշգրտութեամբ եւ իր սեփական վէրքերը անդամահատող ու զարմանող վիրաբուծի մը պաղարիւնութեամբ: Գիրքին խորագիրն է «Կատը»:

Վէպ մըն է ան, անտվոր, զարհուրելի, անդոհալից, որ կուլայ նշելու մեր ամբողջ դարաշրջանի զգայականութիւնը: Գիրքը ալլաբանութիւն մըն է ամբողջութեամբ: Եւ սակայն, հեղինակը ա՛յնքան ջիւ արտայայտած է իր սեփական մղձաւանջը, որ կը զոնուի իր հերոսին ամէն մէկ քայլին ետեւը: Յովսէփ Բ. մեծ դրամատան մը փոքր պաշտօնեան է, ինչպէս ինքը Քաֆքա, ապահովագրական ընկերութեան մը գործա-

կալը: Օր մը, իր երեսուններորդ տարե-
 դարձի տոնատունն, կը ձերբակալուի,
 երբ դեռ անկողինն էր, երկու խոր-
 չըրզաւոր պահակներէ: Այն տարին,
 որուն անունը սկզբնատառով մը կը ճըշ-
 դուի միայն, սկիզբ կ'առնէ զարհուրելի
 մտմտութիւններու շարան մը, անտեղի մը
 տանջանքից մորմոքը՝ արդարութեան
 միջին, անողոքելի, մեքենական գործի-
 քին պատճառաւ: Ան խոտապահանջ հոշ-
 ւատու մըն է Հիմա: Ինչպէս Քաֆթա
 կ'ապրի խորհրդաւոր յանցանք մը դո-
 ծած ըլլալու յաճախանքով, վէպին 'ե-
 րոսն ալ կ'ապրի դիւակաւ զատաւորիե-
 րով պաշարուած ու անճար մնացած: Եւ
 ինչպէս ինքը հարկադրուած եղաւ խզել
 իր նշանաւքը, Յովսէփ Ք. ալ, սիրո-
 հարած երբեմն իր դրացուհիին, զար-
 պասած անոր ա'յնքան եռանդով, կը
 խուսափի օր մը անոր ձեռքէն, խորունկ
 յուսաբեկութեան մատնելով զինքը: Հե-
 տըզհետէ ընկճուած, յուսաբեկ, ան կը
 կորսնցնէ իր պաշտօնն ու զիրքը: Ամ-
 րաստանութիւնը իր ընթացքը կը շարու-
 նակէ անողոքելի կերպով: Իր ձերբա-
 կալութենէն տարի մը ետքը, իր երե-
 սունքովէկերորդ տարեդարձի նախօրեա-
 կին, հերոսը կ'ընդունի այցելութիւնը
 երկու պարոններու՝ զտփոխն ու զի-
 րուկ: Սնունք կը նմանին զերասաննե-
 րու, իրականութեան մէջ դահիճներ են
 անոնք: Այն պարագային որ անոնք կը
 սպասան զինքը խեղդելու՝ ան կը կարծէ
 աւելի յստակ տեսնել ու հասկնալ: Եւ
 ինչպէս Քաֆթա, 31 տարեկան էր՝ երբ
 վերոյիշեալ պանդոկի սրահին մէջ վեր-
 ջին ակնարկ մը կը նետէր իր նշանածին,
 Յովսէփ Ք. ալ կ'ընդունարէ մանկա-
 մարդ աղջիկ մը, որ փողոցէն կ'անցնէ,
 որ կը նմանի իր սիրած աղջկան եւ
 կ'ըզձայ զայն: Բայց շատ ուշ էր ա'լ:
 Ան իր շունչը կը փչէ, իր դրած յուսա-
 բեկիչ, անձկայրեաց հարցերուն պա-
 տասխան չգտած:

Երեք տարի յարտաւել, Քաֆթա աշ-
 խատած է այս սոսկալի վէպին վրայ, ուր
 կը նկարագրէ, ինչպէս դեռ մինչեւ Հի-

մա չէ կատարուած, թէ ինչպէս կրնալ
 ճնշող ըլլալ ապրելու անձկութիւնը: Եւ
 այն օրը, որ լրացուցած է զայն, անհուն
 ծանրութենէ մը ազատած կը լքայ ինք-
 զինք եւ կարող՝ ճակատակու կեանքին
 դէմ, ինչպէս ուրիշներ: Բայց իր առաջ-
 ջութիւնը խախտած է: Այդպէս կը հաս-
 տատեն Հիւծախտի մասնադէտնելը,
 քարոյական փորձութիւնները, կ'առա-
 ջացնեն թոքային բորբոքում մը եւ
 Քաֆթա լաւ նշմարած է ու փտանչած
 իր փտանքի ծագումը: Ան կը զրէ իր
 օրագրին մէջ. — Իմ թոքերուս վէրքերը
 խորհրդանշան մըն են միայն, որուն
 բորբոքումը կը կոչուի իմ սիրոյ տուար-
 կան եւ անոր խորութիւնն ալ իր արդա-
 րացումն է: Կը մերժէ ինքզինքը դար-
 մանել եւ տենդագիծօրէն կ'աշխատի նոր
 երկերու վրայ: Ինչպէս ուրիշներ զեղեր
 կ'առնեն բուժուելու համար, ինքը կը
 զրէ շարունակ: Ան իր յաճախանքէն
 դեռ ազատագրուած չէ: Նոր փորձու-
 թիւն մը պէտք է դիմագրուէ Հիմա:
 1920-ին, Փրակայի մէջ, կը հանդիպի ա-
 լըստորուհի մը, Մելիսա, որ կը փա-
 փաքի թարգմանել իր զիրքերը: Տա-
 դանդաւոր գրող մըն է ան ալ: Ծուռով
 բարեկամութիւն մը կը հաստատուի ա-
 նոնց մէջ, որ ընդհուպ սիրոյ կը փո-
 տի: Բայց ամուսնացած է ան, ընտանի-
 քի մայր: Ձի կրնար համաձայնիլ իր
 ամուսնոյն հետ, որ զինքը կը խարէ ան-
 խզօրէն:

Փրանց Քաֆթայի մօտ ան կը գտնէ
 մտերիմ մը, զգայուն սիրտ մը, իրին
 հանդէպ ուշադրութիւն մը, որ կրնայ
 զինքը հասկնալ: Ծարուանկ պատրուակ-
 ներ կը հնարէ Վիեննայէն Փրակա եր-
 թալու եւ զայն տեսնելու:

Բայց Քաֆթա նորէն վախ ունի: Հի-
 ւանդ է: Հիւծախտը յառաջացած է տեն-
 դային, յաճախակի նոպաներով: Անգամ
 մը եւս անձկութեամբ ինքզինքը կը հար-
 ցաքննէ: Միլիսա կը մտադրէ լքել իր
 ամուսինն ու իր զաւակները անոր հետ
 ապրելու համար: Մակայն, յեղակարծօ-
 րէն, սազնապէ մը ետքը, Քաֆթա կ'ու-

նենայ արիւնափսխում մը և անոր կը յղէ խզումի գիրք մը: «Չենք կրնար այլեւս իրար տեսնել: Բարոյապէս հիւանդ եմ: Թոքերուս հիւանդութիւնը, բարոյական ցաւին յորդումն է պարզապէս»:

Այն ինչպէս առաջին նշանաւոր խզումը ներշնչած էր իրեն գրել «Իտալո», այս երկրորդն ալ՝ կը մղէ զինք գրել նոր գլուխ-գործոց մը՝ «Իդիալը»: Անգամ մը եւս, գրական այս փոխադրութեան ետեւը կը գտնուին իր սղբերգութիւնը, երջանկութեան ձգտումը, անկարելիութիւնը, որ սպասման վիճակի մէջ է: Դրեակի հերոսը, անանուն է, ինչպէս էր նաեւ «Իտալո»ին հերոսը: Իր անունն ալ ծանօթ է, միայն սկզբնատառով մը միշտ միեւնոյնը՝ Բ.: Որմնադիր մըն է, որ իրիկունը կը հասնի անծանօթ վիճակ մը: Ան կը պնդէ որ կանչուած է ինքը, բայց մէկը չի գիտեր, ինչու... - Հոս մնալու համար, կ'ըսուի, պէտք է ունենալ դրեակի տիրոջ արտօնութիւնը:

Անհրեքի զգացումը.- Այն ատեն Բ. ին համար կը սկսի խելակորոյս խռարկութիւնը. կ'ուզէ շփման մէջ մտնել դրեակատիրոջ հետ: Կը հանդիպի պատւիրակներու, միջնորդներու, քարտուղարներու: Բայց զուր բն ըստ որ այս պրպտումները: Ձի կրնար երբեք հանդիպիլ դրեակի խորհրդաւոր տիրոջ: Ամէն ինչ տեղի կ'ունենայ, ինչպէս հսկայական կազմակերպութեան մը մէջ, ուր մարդ գործ ունի բազմաթիւ թուղթերու ծանրութեան տակ ընկճուած պաշտօնեաներու հետ, այլ երբեք պատասխանատու հեղինակութեան մը հետ:

Գրասենեակներու մէջ կը թափառի Բ. միշտ միեւնոյն հարցումները կրկնելով չմտած: Կը ստանայ միշտ միեւնոյն պատասխանը.- Այսպէս էր, միշտ ալ այսպէս եղած է:

Այս ցնորհացոյցիլ պատմուածքին հետքերով, մարդ կը հաստատէ անմիջապէս արդի իւրանակալութեան դատը, մեքենական անմարդկային, թղթեղէն անասանական կազմակերպութիւններու դժբախտական, որոնք նպատակ ունին միայն

անհատը նմելու: Այսօր, Քաֆքայի անունը ժողովրդական լեզուին մէջ մտած է իրրեւ որակական: Քաֆքա է, բոլորովին Քաֆքա է այս, կ'ըսուի, երբ անհեթեթ կացութիւն մը կը ներկայանայ, երբ տաղանայի կազմակերպութեան մը կոյր քմահաճոյքին կը բախի մարդը, երբ պէտք է լրացնել ձեւակերպութիւններ, որոնք վերջ չունին, երբ կը տեսնեն անհատնում, անվերջանալի անցքեր ու դէպքեր: Որոշապէս Քաֆքայի հանճարն է, որ գրած է տեսլական երկ մը, ուր խօսած է լուկ իր անձին, իր մենակահացութեան ու իր սղբերգութեան մասին: Ինչ որ ան կը հետապնդէ «Իդիալ»ին մէջ եւ չի կրնար գտնել, երջանկութիւնն է եւ սէրը, հասկցուելու հրճուանքը: Այս զետեանալիք, որ կը փնտռէ դրեակին տէրը, ծրարն է որ չէ համարձակած ապրել իր նշանածին հետ, չէ կրցած իրազործել իր երազը, ազատիլ անոր յաճախանքէն:

1923 Յուլիսին, Տրանց լրացուցած է իր այդ վէպը, եւ կը հանգչի Միւրիցի մէջ, Պալիսիկի վրայ փոքր շերտակային կայան մը: Հոն է որ իր ամբողջ կեանքին մէջ իր մղձաւանջին հետ ճակատել է աք, վերջապէս շահած է ճակատամարտը:

Պանդուկին մէջ, կը ծանօթանայ 19 տարեկան աղջկան մը հետ: Տոբա զգայուն ու զարգացման ծարաւի հոգի մը ունի:

Ան կը հանդիպի դժուարութիւններու, որ ինքն ալ կրած է ժամանակին: Անոր ծնողքը թոյլ չի տար իրեն երթալ Պերլին, իր ուսումը լրացնելու համար: Ան տառապած է հօրենական բռնակալութեան, պարագայ մը, որ շուտով իրարու կը մօտեցնէ զիրենք: Առաջին անգամ ըլլալով, Քաֆքա կը խելամուծի, որ մինչեւ այն ատեն ապրած էր պէշ երազ մը: Իր օրագրին մէջ, ան կը գրէ.- «Կըրցայ խուսափիլ վերջապէս ուրուականներէս»:

Այն ատեն, երջանկութեան անասակ ճանչցուած անոր հոգին կ'ապրի երջան-

կուժեան խօլ ժարսուժը: Կորսուած ժամանակը վերաշահելու համար, շուտով կը հաստատուի Պերլինի մէջ եւ Տորայի հօրը կը գրէ իր հաւանութիւնը տալ, ամուսնանալու համար անոր հետ: Իբրեւ ապրուստի միջոց, Ֆրանց ունի պաշտօնէի ուժեղ մը, զեղչուած այլեւայլ պատճառներով: Իր հիւժախտը սաստկանալու վրայ է: Ամանորի եւ Մնունդի մէջտեղ, ան կը տառապի տենդի ծանր սպազմապնդումով: Ճակատագիրը կը թուի իսողալ իրեն հետ այն միջոցին, ուր երջանկութիւնը ճանչնալու պահը կը հասնի: «Կը տեսնես, — կ'ըսէ Ֆրանց Տորային, — բաւական է մօտը ըլլալ, հանգիստ ըլլալու համար: Աշխարհիս վրայ միեակ ենք ու սիրենք զիրար»: Միասնաբար կը թարգմանեն դիրքեր: Միշտ իրարու հետ են: Կը պտտին անտառներու մէջ, ձեռք ձեռքի, իբրեւ մտադատի սիրահարներ: Օր մը, վտարանին մօտիկ, Ֆրանց կ'ըսէ Տորային — «Հիմա, ազատագրուած եմ լրիւ իմ անդունդէս, քու շնորհիւ: Մղձաւանջին յաղթելու համար, պարտաւորուած էի զայն յանձնել թուղթին: Այլեւս պէտք չունիմ անոր, քանի որ դուն քովս ես»: Տալու համար ստոր պայտօցը, կ'առաջարկէ անոր կրակին տալ իր բոլոր գրուածքները: Կինը կ'աւարեկի նախ, Բաֆֆա կը պնդէ — «Կը կարծէի որ պարտաւոր էի կեանքս

նուիրել գրականութեան: Սակայն, ո՛չ, ինչ որ կարելոր է այտուհետեւ, ա՛յն է՝ որ դուն իմս ես»:

Քանի մը ամիս ալ տակաւին, իբրեւ յետաձգուած երջանկութիւն, հիւժախտը կ'ընկրկի: Սակայն, Ապրիլին, յանկարծ, ան կը տառապի կոկորդի սուր ցոււերով: Գրեթէ չի կրնար ուտել ու խմել: Ապաքինարան մը կը փոխադրուի եւ առաջին անգամ ըլլալով, Ֆրանց կը հաւանի որ խնամք տարուի իրեն: Ապրիլ կ'ուզէ, կը ջանայ ապրիլ մինչեւ վերջին սահմանը, Անդունդի եւ անհետեւութեան մեծագոյն վիպասանը, ինքզինքը կը պաշտպանէ, քաջ առ քաջ, բոճանթիք հերոսի մը կորովով՝ իր անդոջ ախտին դէմ:

Սակայն, բոճանթիղմը թոյլ կուտայ որ ճակատագիրը յաղթէ: 3 Յունիս 1934ին, Տորայի հակողութեան տակ, կը սկսի անոր օրհասը: Կը մեռնի քառասունը մէկ տարեկանին, ազատագրուած իր ուրուականներէն ու մղձաւանջէն, շնորհիւ վերջապէս պսակուած սիրազեղ անմեղութեամբ: Ինչպէս «Իտալոյն հերոսը, որ կրցաւ յստակ տեսնել իր յետին վայրկեանին, Ֆրանց ալ իր վերջին տարին միայն դատաւ երջանկութիւնը, խաղաղութիւնը, յոյսը՝ հազիւ ճշմարտօրէն զատապարտուելէ առաջ:

Գ. Ք.

Ազեխանդրիա, 10 Նայւ. 1968



Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

Վերջին տասնամյակին, գրական աշխարհի ամենին ուշադրաւ նորութիւնը ճոր վէպը անու- նին տակ Ֆրանսայի մէջ ու Ֆրանսայի գրողնե- րու կողմէ սկսած շարժումը եղաւ, որ ունեցաւ եւ ունի՝ շեք պաշտպաններ, բնչպէս եւ թուրք Լակտակորդներ:

Որոշ զազափաբ մը տալու Լամար ուրջ մասին, ստորեւ կը ներկայացնենք Լ. Մկրտչե- անի պատրաստած Թուրքիկ սկիւարէր եւ անոր կողքին՝ Փիէր Պուստոֆրի «Սրճարանը անգու- միս վրայ», կամ ընդդէմ անր վեպին» անուան գոր- ծին Պարակայուցիւ էջերը:



Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ՄԻ ԳԻՐՔՆՆՈՐ ՎԵՊԻՆԵՄ

(ԹՈՒՌԻՑԻԿ ԱՎՆԱՐԿ)

Ֆրանսիական գրականութիւնը այս տարի ամուսն է մի իւրաքանչեւ յորեւ- ան. Ապրիլին լրանում է այսպէս կոչ- ւած «նոր վէպ»ի 15-ամեակը: Ճաստիքնզ տարի առաջ էր, որ երեսայ սակաւին անյայտ Հեղինակ Ալէն Ռոպ-Վրիէի ա- նալիին երկը բուական տարօրինակ՝ «Ռե- տիմներ» վերնագրով, Չափազանցութիւն կը լինէր ասել, թէ այդ վէպը անմիջա- պէս ապաւորութիւն թողնէ: Բայց որոշ քննադատներ այնուամենայնիւ նշեցին, թէ նրանում ուստիկանական խաղը առա- ջին Հայկազքից չափազանց լաւ է նկա- րագրում, բայց Հեղինակը նրանից նա- Հանջում է: Վէպի սկիզբը կարծես թէ լիովին անանդական է:

«Փոքր դահլիճի կիսաուրթում» սըր- մարանի տէրը դաստարում է անդամնե- րը, աքոռները, սելսերեան ջրի սիփոն- ները: Առաւօտեան ծամը վեցն է: Նրան լալսը հարկատր չէ, նա նայնիակ իրեն

հաշիւ չի տալիս, թէ ինչ է անում: Նա դեռ ննջում է:

Սակայն մի քանի էջ յետոյ շարա- գրանքը բոլորովին այլ ձեւ է ընդունում. «Սխալներն ու տատանումների շրգ- քայի մէջ նայնիակ անեմափոք իրադար- ձութիւնները սկսում են մի քանի ակըն- քարքում անել իրենց գործը, յախտել օրուայ իդէալական կարգը, տակից աչ ու ձայն դադարներ, խզումներ, Յանանջ- ներ, շեղումներ մտցնում, որպէսզի ծա- գի նրանց ստեղծումը. վաղ մեծային օր է, առանց ծրագրի, առանց մտադրու- քեան, անեսականալի ու երէշային»:

Այսպէս ասած, շարքային ընթերցո- ղը առանց դժուարութեան այսպիսի մի քանի խօսքեր յողթաւարելով՝ Հաւանա- րար յորանջէր ու դիրքը մի կողմ նետէր: Բայց ամէն տեսակ նորութեան ծարաւի քննադատութիւնը «Ռետիմներ» մէջ դը- տաւ մի աշխարհի քան, որը նրան տալիս

էր աւելի կամ պակաս խոր դատողութիւններ սնունդ ու միտմամանակ զըզըռում նրա հետաքրքրասիրութիւնը: Եւ այսպիսով ծնունց «նոր վէպը» կամ «նալիա-վէպը»:

«Նալիա-վէպ» բանաձեւը պատկանում է Սարթրին: Սարթրը զարմացաւ եւ իր զարմանքը բացէիբաց խոստովանեց, երբ գրականութեան պատմաբանները նրան ցոյց տուին, որ նա ոչ մի յայտնութիւն չի արել: Եւ իսկապէս, աւելի քան 300 տարի արանից տառջ լոյս է տեսել ոմն Շարլ Սորէլիի՝ հենց ճիշդ այդպէս վերնազրուած գիրքը՝ «Նալիա-վէպ»: Սակայն նորագոյն ձեւական որոնումների հետ եւ փորձերի հետ Սորէլիի մօտ ո՛չ մի ընդհանուր բան չկար, ի հարկէ: Նա սահմանափակուել է ծաղրելով միջնադարեան ասպետական վէպերը, որոնք խեղճ Դոն-Քիշոտի գլուխը պտտեցրել էին:

Սարթրի անունը տալիս պէտք է տեւել, որ «նոր վէպը» նրան է պարտական իր մի քանի հիմնական տեսական սկզբունքներով, թէեւ Սարթրը ինքը այդ գրական հոսանքի հետ ուղղակի կապ չի ունեցել: Սակայն ոչ այլ ոք, քան Սարթրն է կարծիք յայտնել, թէ վիպասան ոչ հիմք, ոչ էլ իրաւունք ունի իրեն Տէր Աստուած համարելու, որին լիովին յայտնի է, թէ ինչ է կատարում իր հերոսների հոգում: Նա լաւագոյն դէպքում իրաւունք ունի խօսելու մէկ անձի անունից, որի հետ իրեն նոյնացնում է: Ուրիշների հոգեկիճակի մասին նա կարող է դատել կամ աւելի ճիշդ կռահել միայն նրանց խօսքերից ու արարքներից: Սարթրը Աստուած հետ համեմատեց Մորիաքին եւ համեմատեց, անշուշտ, հեղօրէն: Մորիաքը խիստ նեղացաւ եւ ըստ երեւոյթին վերաւորանքը կրկար յիշեց:

Եթէ քննադատութիւնը միաձայնութեամբ Ռոպ-Կրիէին ճանաչում է այդ դարոցի ղեկավար, ապա գերազանցապէս որպէս տեսարանի եւ հիմնադրի: Դպրոցը միաւորում է չափազանց տարասեռ գրողների մի խումբ, որոնք միմեանց ներքնապէս խորթ են: Նրանք միմեանց

համաձայն են շարադրանքի ոճի ու ձեւի հարցերում, բայց ասարթրում են օ՛րս պնդման մէջ, թէ յատկապէս գրելաձեւը, ձեւն է տաղանակազ գեր խաղում գրականութեան մէջ, որտեղից էլ բխում է ծագած հետաքրքրութիւնը ուսու ձեւապատկերի գործերի, Ռոման Եակոբսոնի, Եկլոփսու, Այիսենբասուի եւ ուրիշների գործերի նկատմամբ: Բայց ըստ հոթեան նրանց ձգտումները տարբեր են, ասենք, շարժման երկրորդ ղեկավար Նատալի Սառտի եւ նոյն Ռոպ-Կրիէի միջեւ ընդհանուր քիչ բան կայ: Եւ հենց «նոր վիպագիրների» տաղանդի չափը տարբեր է: Նրանց շարքում կան գրողներ, որոնց մօտ բնախնդիր ձեւական խորամանկութիւնների յետեւում զգացում է նշանակալից, հոգեպէս իւրայայտուելի մի բան: Այս ձմբանը լոյս տեսած «Պատմութիւն» վէպի հեղինակ Քլոտ Սիմոնը, օրինակ, որի գիրքը թէեւ հեշտ չի կարգացում, բայց ուշագրաւ է: Կամ Միշէլ Պիթօրը: «Նոր վէպի» ներկայացուցիչների ու հետեւորդների շարքում կան երգուեալ մեկնաբաններ ու ջատագովներ: Կան եւ համոզուած, խիստ հակասակորդներ եւ նրանց մէջ հազիւ թէ առաջին տեղը չպատկանի յայտնի քննադատ ու գրականութեան պատմաբան, Փրանսիական ռազիոյի տնօրէններից մէկին՝ Պիէր տը Պուասեֆրին: Վերջերս Պուասեֆրը հրատարակեց մի գիրք, որը զրուած է բացառիկ սրութեամբ, բացառիկ դառնութեամբ: Գիրքը ամենակատաղի գրու է նոր վէպի նկատմամբ, որը երեւացած լինի նրա ծագման օրից մինչեւ հիմա, եւ գլխաւորաբար Ռոպ-Կրիէի վրայ:

Ռոպ-Կրիէին իր առաջին որոնումներն ու տատանումները մասամբ մի կողմ է նետել, քննադատ Ռոյան Պարտի ազդեցութեամբ, որը մասնադիտացել է «Նոր վէպի» ուղիները մեկնաբանելու մէջ: Նրա առաջին երկերում այնուամենայնիւ կար ուրիշ զիջում գրականութեան աւանդական պատկերացման առջեւ: Այժմ Ռոպ-Կրիէն գրողի միակ խնդիրն է համարում նրա չրջապատող իրադրութեան,



Քլաու Միսնց

գերազանցապէս քաղաքայինի, մի տեսակ գոյբացուցակ կազմելը, - խանութների ցուցանակներ, յայտարարութիւնների պատահներ, դրասյուրիների ցանցեր, կամուրջների թեւեր, կարծիք ու կանաչ լոյսեր, քաղաքային շարժումը կարգաւորող երեսոյթներ: Նրա համար ընդունելի է եւ տնային կահկարասին՝ սրճաճան, աղնոց, դրամեքենայ, լամպի կոճակ, բայց ոչ մի կենդանի բան: Նկարադրութիւնները պէտք է մակերեսային մնան: Խորքը թափանցիկ է, խորութիւն չկայ կամ մարդուն անմատչելի է: Մարդը նայում է աշխարհին, - պնդում է Ռուպերիէն, - բայց աշխարհը նրան չի տեսնում եւ նրան չի պատասխանում: «Իրերը այստեղ գտնուում են մեր առջիւ եւ նրանից այլ բան չեն, քան առանձին-առանձին լուսանկարելու առարկաներ»: Միայն նա, ով որ հասկացել է այդ բանը, արժանի է մեր ժամանակ «գրողի» կոչում կրելու: Մնացեալներին ճիշդ կը լինէր կոչել պարզապէս «գիր գրողներ», նրանց գրածներին նանակութիւն չտալով: Ռուլան Գարտի այս պնդումը բոս երեսոյթին լիովին ընդունում է Ռուպերիէն:

Պուատեֆրը տարակուսում է. ինչի՞ հետեանք են նման ինքնասահմանափակումները, որտեղի՞ց են դրանք: Ճիշդ է, մեր դարի շմեկուցիչ գիտական յայտնագործութիւնները խախտել են աշխարհի մասին երբեմնի պատկերացումները, մտքերի մէջ մտցրել շփոթութիւն ու կասկած: Իսլամական է տալ Այնըլտայնի ու Ֆրէյտայի անունները, հասկանալու համար այն շփոթութիւնը, որն այժմ ընդգրկել է որոշ գիտակցութիւններ: Այնչառայից ու Ֆրէյտայից առաջ կար Նիցշէն, որը նոյնպէս քիչ քան չի արել այդ շփոթութիւնը նազելու համար: Իայց ի՞նչ բնգհանուր բան կայ նրա եւ անխոսով հանդարտութեան միջեւ, որը Ռուպերիէին թոյլ է տալիս անխոսով կերպով նկարագրելու իրեն չընկալաւոր իրերը: Նրա անմիջական նախորդները, ինչպէս օրինակ՝ Մալրոն ու Քամիւն, էլք էին որոնում, եւ եթէ երբեմն հակում էին ընդունելու կենսաբ. ու աշխարհաստեղծման անիմատութիւնը, ապա այն ընդունում էին արտուսով, զոդով: Այո, - ասում է Պուատեֆրը, - անվիճելի է, պատերազմ, համակենտրոնացման ճամբարներ, պաղանկեր՝ այս ամէնը եւս անհետ չի անցել արեւմտեան մշակոյթի, ինչ որ նշանակում է գրականութեան համար: Իայց երբ տեսնում ես, որ Ռուպերիէի նման գրողների վրա չեն է մտել, ողբերգականութեան փոխարէն, գոյբացուցակ կազմելու ձրտումը, ապա մնում է միայն ձեռքերը թափ տալ եւ ինքն իրեն ասել, որ նման գրողները գրականութեան մէջ անելիք չունեն: Դա էլ հենց պնդում է Պուատեֆրը, ոչ առանց հեղանաքի նշելով, որ էկրանի ու կինեմատոգրաֆիայի սուպարէզում, - սուպարէզներ, որոնցով Ռուպերիէն ամէնից շատ է հրապուրուել, - նա հասել է մեծ յաջողութիւնների եւ որ նրա այնպիսի ֆիլմեր, ինչպիսին է «Անցեալ տարի» Մարիեմարտում», կառուցուած են տաղանդով, ինքնատիպօրէն ու հնարամտութեամբ: Ռուպերիէին գոյբադրութեամբ հրապուրուելը միանգամից չի եղել եւ զա ընդգծում է Պուատեֆրը:

Պուստեֆըը լիովին համաձայն է, որ զբաղանութեան մէջ Թարմութիւնը անհրաժեշտ եւ օրինական է: Նա յամառօքէն վերադառնում է մօտիկ անցեալին եւ պատրաստ է ընդունելու, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիները, երբ Եւրոպան զարձակ էր մի հսկայական համակենարոնացման ճամբար, եղել են արեւմտեան մշակոյթի ապշուարի տարիներ: «Ապագան պարզ չէր, - ստում է նա, - բայց մեզ մօտ մնացել են յիշատակներ: Հինց այդ տարիներին ես վերստին կարգացի Մարիա Պարէսին, Անտրէ Ժիսին, Տաստայնսկան եւ շատ ուրիշներ: Ընթերցանութիւնը մի տեսակ ապաստան էր: Ընթերցանութիւնը մեր առջեւ բացում էր քերես երեւակայական, բայց աւելի իսկական էութիւններ, քան այն տխուրը, գարշը, կեանք պզտուրը, որը մեր բաժինն էր: Մենք զարմանով եւ աւրախութեամբ համագնացինք, որ իր համար օգտակար ընթերցանութիւնը մրցում է կեանքի հետ, մեզ առաջարկելով ուղեկիցներ աւելի հաւատարիմ, յուսալի, արժանաւոր, քան նրանք, որոնց մենք ամեն օր հանդիպում էինք փողոցում: 19-րդ դարի մեծ վէպերը նորից մեր առջեւ բացցնին մի աշխարհ, որը մեզ համար անհրաժեշտ էր: «Պատերազմ եւ խաղաղութիւն» վէպի հետուար, փառաւոր հերոսները աւելի ուժեղ դուրս եկան, քան պատերազմը, պարտութիւնն ու դժբախտութիւնը: Նրանց կեանքի պատմութիւնը մեզ դրոշմաց յուսալու, որ մեզ եւս կը յաջողուի դիմանալ սարսափի, սովի ու ռումբերի դէմ»:

Ի՞նչ է պէտք ասել Պուստեֆըրի անկեղծ, բուն եւ իր շատ պնդումներով անկասկած արդարացի գրքի մասին: Առաջին՝ այն, որ նա չափազանցում է Ռուս-Կրիէի նշանակութիւնը, որպէս «նոր վէպի» ամէնից ականաւոր ներկայացուցչի, որով, ի դէպ, մեղանշում են երբեմն Փրանսիական ուրիշ քննադատներ: Այն, որ Ռուս-Կրիէն տարեցտարի աւելի հանրաժող է գրաչուում կրնո՞րե՞մադրութիւններով, այն եղբակացու-

թեան է բերում, որ նա ինքը իրեն հաշիւ է տալիս իր զբաղան ընդունակութիւններէ սակաւութեան համար: Ռուս-Կրիէն տեսարան է, ղեկավար՝ շատ աւելի մեծ չափով, քան արուեստագէտ: Երկրորդ՝ նոյնիսկ «նոր վէպի» ծագման կապը Ռուս-Կրիէի առաջին երկի երեւան զայուհեա չափազանց վիճելի է: Նատալի Մարոն գրել, որպէլ տուել եւ իր վրայ՝ մասնաւորապէս Մարթի ուղադրութիւնը, գրաւել է մի քանի տարի աւելի վաղ, իսկ նրա զբաղան վարկը հազուա թէ դիշի Ռուս-Կրիէի վարկին: Ասենք Հինց «նոր վիպապիւրներին» ներքին, ստեղծագործական ձգտումները խորապէս տարբեր են, ինչի մասին որ չի կարելի մոռանալ: Ամբողջովին Ռուս-Կրիէին նուիրուած Պուստեֆըրի պարտաւարքի վրայ խոշոր տառերով գրուած է՝ «նոր վէպի դէմ»: Թէ՛ Քլոս Սիմոնը եւ թէ՛ Միշէլ Պիթօրը ու նոյնիսկ Նատալի Մատոնն այդ գիրքը կարդալով՝ իրաւունք կ'ունենային ասելու, որ այդ գիրքը իրենց չի վերաբերում: Ճիշդ է, նրանք բոլորն էլ վճռական նշանակութիւն են տալիս գրելու տեխնիկային, գրելիւմին, շարադրման «ֆալստուրային», եւ այդ ամէնը անելով՝ նրանք բոլորն էլ ենթարկուած են Հնանաւու, մոռացուելու եւ մի կողմ նետուելու վտանգին աւելի շուտ, քան ենթադրուած է: Հետուստատեսութեամբ ունեցած մի գրոյցում Փրանսուա Մորիաքը ճիշդ կերպով նշեց, որ տեխնիկան, գրելիւմնը փոփոխական բան է եւ ըստ հուժեանքի երկրորդական: Գրականութեան ամբողջ պատմութիւնը հաստատում է դա, այսինքն հաստատում է, որ հեղինակի անձը, Հոգեկան մակարդակը եւ օժտուածութիւնը գերակշռում են գալիք տարուներէի գնահատման մէջ աւելի՛, քան նրանց ընտրած շարադրանքի ձեւը, պատմելիւմնը, գրելիւմնը: Գալիքի դատողութիւնը «նոր վիպապիւրներին» նրկատմաբ, նոյնիսկ նրանցից ամենատաղանդաւորների նկատմամբ, կարող է հինց նրանց մեղքով կամ էլ յամատուրթեան հետեւանքով շատ խիստ լինել:

Լ. Մ.

ՓԻԷՐ ՊՈՒԱՏԵՖՐ

«ԱՅՐԷ ԳԻՐԲԵՐԴ, ՈՈՊ-ԿՐԻԷ»



Փիէր Պուատեֆր

Ճշմարտութիւնը շատ պարզ է, Ռո'պ-Կրիէ. «աւանդական» վէպը մահամերձ է եւ դուռն առիկա շատ լաւ գիտես: Շատ կը չարչարես դուռն քնք սակայն, դատապարտելու համար ա'յն էինք, որ արդէն իսկ գոյութիւն չունին: Բոլոր այն միջոցներուն մէջ, որոնք ցայժմ կիրարկուեցան ազատագրելու համար վէպը - մա-

մակագրական վէպերէն սկսեալ մինչեւ մտերիմ գրոյցներու վրայ հիւսուած վէպը, վաւերագրականէն մինչեւ գիտա-քննարկականը, ներքին մենախօսութեան մինչեւ անմիջական խոստովանութիւնները պայմանադրական նկատող վէպը - այս բոլորէն ազատագրուելու համար՝ առաջարկուած միջոցներուն մէջ կիրարկածդ աւելի՛ արմատական է անկասկած: Գու հեղինակած գիրքերուդ ընթերցումը զորավար Մաքսիմի անհարկած քիֆայիթին կը նմանի, կա՛մ կը մահացնէ, կամ կ'ապուշցնէ:

Խորիկ այս իրողութեան մասին, Ռո'պ-Կրիէ. իրաւանչիւր ընթերցող, որ դուռն կը շահիս, կորսուած ընթերցող մըն է վիպական գրականութեան համար: Կարելի չէ ընդունիլ, որ գրականութիւնը ըստածը այս անգին, այս տիեզիծ եւ անզամայած բանը ըլլայ, որուն դէմ յանդիման կը գտնուինք քու գիրքերուդ մէջ, - եւ ա՛յ միայն քու գիրքերուդ. կամ տակաւին Պէֆթը, Պաթայը, Պլանշոն եւ Բանի մը ուրիշներ - զորս կը խուզարիւնիք պշգոյնով մը, որ յափշտակութեան համը կու տայ: Այս դիպելը կը մըմտայ, կը խօսի տակաւին, վերջնականապէս մեռած չէ, նման Պէֆթի այն անձնատրուութիւններուն, որոնք կը համդիպինք ազատաններուն մէջ թազուած եւ որոնք գլուխը միայն դուրս կը ցցուի՝ գառանցելով անկասկից բառեր: Այս մաշած ձայնին ընթացքով հոգեվարքի մէջ կ'իջնայ հնարանդ խորհուրդը Գրութեան, որով Բանը կ'եռնէ կը դառնար:

Դուռն կարծեցիր փրկել գրականութիւնը, կտրտելով ամբողջութեամբ աշխարհէն: Այսուհետեւ այլեւ ընկիւք ու հասկնալիք չունենալով, ունկնդի'ր չունենալով, գրականութիւնը՝ ծերանոցի

նստարաններում վրայ տխրորէն մտած ու մահուան սպասող ծերունիներում պէս՝ կը սպասէ: Ինչի՞, եթէ ոչ իր իսկ վախճանին: Իրմէ գատ ոչ մէկ ուղիկից ունի: Կը սպասէ իր սեփական ոչնչացումին:

Բայց իր շուրջը կեանքը կը շարունակուի: Վէպը մահամերձ է, գրականութիւնը ծեր է ու հիւանդ, բայց կը մնան գծագրեալ ժապաւէցները, լուսանկար վէպերը, կենդանի գծագրութիւնները, եւ ի՞նչ գիտնամ տակաւին ուրիշ ինչ, այն բառեր քաները վերջապէս, որոնք գիրքին տեղը գրաւելու վրայ են:

Դուք ապուշ մը չես, Ռո՛ւ-կրիւ- եւ դուն ընկերութեանէն դուրս չես ապրիւր- երկրագործական լաւ էնծենիւտը մըն ես, նման ա՛յն սիպարին, զոր կը գտնենք Շայխուվի եւ Ռէյ Պրասպիւրի վէպերում մէջ: Բաներորդ դարու նարտագէտ մը՝ որ մտացած է հոգին մանկապարտեզի մէջ՝ իր եծծիկին եւ ուղեղին միջեւ: Բու վէպերդ կատարեալ էնծենիւտի մը վարժութեան յիշատակաբաններն են, առաջին օրը ապագայ Ելուստական նախարարութեան քննիչին, Արուեստից վարժարանին մէջ քննութեան համար ա՛յնքան բծախնդրորէն խնամուած փորձ մը վերջապէս, որ երբեք պիտի չկիրարկուի կեանքին մէջ: Բու վէպերդ, Ռո՛ւ-կրիւ, գոյութիւն ունին միայն բուզի վրայ: Բու ստեղծած անճանարութիւններդ երբեք չեն պտտած կեանքին մէջ: Անոնք սանցած են միայն գոյութեան այն շնչին լուսանցքը, զոր անոնց կը պարզուես եւ գոր անվերջորէն կը շափես քու գիրքերուդ մէջ:



Փա՛նք Աստուծոյ, դուն իմէ՞ր տեղի իրական ես, քան կրնամ կարծել տալ քու երկրաչափական բոլոր կառուցում-

ներդ: Երկրագործական քու ապարտեզիդ շնորհիւ, դուն ներքաններուդ տակը պահած ես հողին, քառուսներում եւ բաց օդին համը: Կը բաւէ նայիլ յարդառատ մագերուդ, սեւ պիտիդ, հաստ սրունքներուդ, գիտնալու համար, թէ դուն ո՛չ մէկ տարնչութիւն ունիս այն գորշ միջատներում հետ, որոնք կը բափառին Սէն-ժերմէն-Տէ-Փրէի մէջ ու շրջակայքը:

Հուժկու ձեռքերով լաւ էնծենիւտը՝ Ռո՛ւ-կրիւ, իմքի՛նքն Եղիբ: Ինչո՞ւ կը յամենա խորտուրտու ճամբաներու վերայ, ճաննացած չուրերու մօտ եւ ցանցառ պարակներում մէջ գրականութեան մը, որ քեզի համար երբեք արժէք չէ ունեցած: Ժիրտուի եւ երիտասարդ Սարբըրի համար, Ալէն Պարմիէի եւ Ժոննոյի համար գրականութիւնը բարեկամուհի մըն էր, հայրենիք մը, գրեթէ կին մը: Դուք գայն վերածնցիր ընկերաբանական վերլուծումներու յատուկ նիւթի մը, գայն դարձուցիր ապարտեզի մը պատրուակը:

Ուրիշ այնքան շատ միջոցներ կան հարստութիւն գիզելու, աւելի ձեռնուտ, քան վէպեր գրելը, որոնք կը մաշեցնեն քեզ ու կը տապալակեն մե՛զ: Այրէ գիրքերդ, Ռո՛ւ-կրիւ: Ձեռքագտնէ մեզ այս փտութեանէն, որ տարուէ տարի կը տարածուի մեր գրականութեան մէջ: Այսուհետեւ ամէն ուղարկեամբ մի սերմաներ այս պտորանաբեր սունկերը, որոնք չեն մաքառիր անճանարեան դէմ, այլ գայն կը տարածեն աւելի: Խնայէ՛ ժամանակիդ եւ խնայէ՛ մե՛ր ժամանակին: Ուսումնասիրէ մեքքական դրութիւնը, որովհետեւ հոն է քու կոյումդ, քու կիրքդ:

Լուսի՛ն, Ոկարելու վրայ ենք:
Լռեցէ՛ք: Մենք կ'ուզենք լսել տիեզերքի երաժշտութիւնը:



ԱՆԱՀԻՏ ՍԱՀԻՆԵԱՆ

Նրանքի «Գրական թերթի այս տարուամ թիւ-
բն մէկուն մէջ երեցաւ Ոճանիս Ստիմեանի կեանեայ
գրութիւնը, որ, իր կարգին, կը խօսի «նոր վեպ»ի մա-
սին, աւելի շուտ, այդ առիթով խորհրդածութիւններ
կ'ընէ, արձե՞ զուրկ չեն շահեկանութենէ:

Նրիտասարգութիւնը մոլորեցնալ «Քէ՛/ էժանազին,
եւ Քէ՛ մտայնց արդէն զուրս կէտ» գրական «Քմկուր-
աը», ըստ երեւոյթիմ կռ'ն եւ տարակուսիի հոստմնէր
տակգծած է, յազելով կայ գրականութեամ տպագայով
լրջօրէն մտտեալ մարգերը:

Իրապէս, Հայաստանի Նրիտասարգին համար, որ
«կարագացել է ինչ-ինչ նեմագարեով եւ ի՛նչ դժուարու-
քեամք վերանառու լինել» մտայնիմ, վտանգը շատ աւե-
լի մեծ է, եւ Ստիմեան հոսցը զիտելով կազերանակամ
այդ անկիւնէն՝ կ'առաջարկէ պատուհանները լայն բռնալ
եւ առիթ շտայ որ «կամարբանգ» մեւով ներս քափանցած
«իմէից ու հողից» զուրկ բաները շարունակեն յամգա-
րել Նրիտասարգներուն առաջութիւնը:

Արդար առգմապէ մը յլած ճիշդ դիտագութիւններ,
որոնց կ'արծէ ծակօրանալ:

ԲԱԻԱԿԱՆ Է ՊՈՉԻՑ ԳՆԱԼ

Գոնէ այժմ, առաջիկայ պլենումին նախորդող այս շրջանում, երբ
մեր գրական հասարակայնութիւնը պատրաստուում է լայնօրէն քննարկել
հայ արդի պոեզիայի հարցերը եւ «Գրական թերթ»ը իր էջերում մտքերի
փոխանակութիւն է ծաւալել, գոնէ այս առիթով, թւում է, թէ պէտք է
յիշուէր տարիներ ի վեր, սկսած ամենաբարձր ամպիտոններից, որպիսիք
մեր համագումարներն են, արդի հայ գրական մամուլին ուղղուող այն
կշտամբանքը, որ նա իր ընթերցողներին քացարձակապէս անտեղեակ է պա-
հում հանրապետութեան սահմաններից դուրս, մեր Միութեան եւ համաշ-
խարհային գրական կեանքում անդի ունեցող կարեւորագոյն իրադարձու-
թիւններին: Տարօրինակ յամառութեամբ նա զլանում է նոյնիսկ կենտրո-
նական (մոսկովեան) գրական ամսագրերում ու թերթերում հրատարակ-
ւող ուշագրաւ, ընդհանուր հետաքրքրութեան արժանացած գրական երկե-
րը հայ ընթերցողներին ներկայացնել, ամենաշլաստ հաղորդումներն անել
այնտեղ ծաւալուող գրական վիճարանութիւնների մասին, որոնք չեն կա-

բող օգտակար չլինել հենց թէկուզ մեր ընթերցողները մտահորիզոնը ընդարձակելու տեսակէտից: Էլ չենք խօսում արտասահմանեան գրական շարժումներէ, յիտպատերազմեան տասնամեակների ընթացքում այնտեղ իրար յաջորդող գրական նոր ուղղութիւններէ, նրանց ասպարէզ գալու շարժառիթների ու վախճանի վերաբերեալ գիտականօրէն հիմնաւորուած լուրջ ու խոր տեղեկութիւններ ու բացատրութիւններ տալու մասին: Քանի որ այդ չի արւում (գոնէ ռուսական մամուլից թարգմանելու միջոցով), քանի որ այդ նորութիւնները նորմալ ճանապարհ չեն ստանում, ապա թափանցում են մեզ մօտ անուղղակիօրէն, «կոնտրարանդ» ձեւով, հիմքից ու հողից զուրկ, ներկայանալով իրրիւ այն նոր ճանապարհը, որով եւ միայն պէտք է ընթանայ «ստոմային դարաշրջանի» գրողը: Այսօրուայ սկսնակի համար դրանից աւելի ի՞նչը կարող է գայթակղիչ լինել: Ինչպէս որ սպեկուլեանտ տուրիստից զեռուած շեմուի ստոյգ արժէքը չիմանալով, գնորդը վճարում է այնքան, որքան պահանջում են իրենից, եւ այնուհետեւ նրա աչքում իր գնածը հենց այն արժէքն է ստանում, ինչ վճարել էր նրա համար, այնպէս էլ սկսնակի աչքում գրական «իմպրտը», որին կարողացել է ինչ-ինչ ճանապարհներով եւ ի՞նչ գոնաբաւթեամբ վերահասու լինել, աւելի մեծ արժէք ունի, քան մինչ այդ իմացած բոլոր իսկական մեծ արժէքները, որ անարգել մատուցուել են իրեն: Գրական «իմպրտի» գործը լեզուալսելով միայն կարելի է կանխել արտասահմանեան այս ու այն դրողով տարուելու հիւանդազնի բնոյթը: Եւ բացի այդ, ինչպէս որ կան արտասահմանեան դասական, այնպէս էլ կան ժամանակակից բանաստեղծներ եւ գրողներ, որոնցից կարելի է եւ պէտք է գրական վարպետութեան դասեր առնել: Ինչո՞ւ լեզու ճանապարհով շարուի այդ բանը, որպէսզի երիտասարդ գրողը չսխալուի իր համար ուսուցիչներ ընտրելիս, չտեսութիւն չցուցարեի ինքը եւ իր անուղիսակ ընթերցողների առջեւ մեծամտացած գիտունի փուշ կեցուածք չառնի: Սպեկուլեանտ տուրիստի հետ արուած գործարքի հետքերի պէս կորչում են նաեւ գրական «կոնտրարանդի» հետքերը: Գրաքննադատութիւնն ու գրական մամուլը իրենց պարտքը չեն համարում որոնել, գտնել այն աղբիւրները, որոնք մեր երիտասարդական պոեզիայի մէջ տարակուսելի մի հոսանք են ստեղծել, որը շարունակ այսպէսու է, եւ պատասխանը յամա արհամարհանքն է լինում: Մինչդեռ պէտք է տկուներները յայտնաբերել, ցոյց տալ այդ երիտասարդ հեղինակներին, որ իրենց որդեգրածը, ճիշդ է, «իմպրտ է», բայց թէ՛ էժանագին, եւ թէ՛ մողայից արգէն դուրս եկած, տեղը գիջած մողայի նոյնպիսի մի նորութեան, որը մինչեւ քեզ հասնի, դարձեալ դուրս եկած կը լինի մողայից:

Եւ այսպէս, գործը հիմքից բռնելու փոխարէն, «Գրական թիրք»ը մտքերի մի նոր փոխանակութիւն է բացել անհուն, անհասցէ ճնորարարութեան» մասին: Ի՞նչ մտքերի փոխանակութիւն, պարզապէս կամեցողին հնարաւորութիւն է տուել վերացականօրէն դրուած այս հարցի շուրջը իր վերացական դասողութիւններն անել, լաւագոյն դէպքում ասածը հիմնաւորելով անցեալի գրականութեան տուած օրինակներով: Այդ բոլոր դասողութիւնները ճիշդ են, մէկը միւսին չեն հակասում, բայց եւ նորութիւն չեն, տարիներ ի վեր այս հարցը այս ձեւով արծարծուած է մեր թէ՛ մամուլում, թէ՛ ամպլիոններից: Բայց դրանից գործին ի՞նչ օգուտ, ի՞նչ օգուտ սրեր ձօճել անսեսանելի հողմաղացների դէմ, հողմաղացներ, որոնց մասին ոչ մի իրական պատկերացում չունի զո ընթերցողը, հողմաղացներ, որոնց մասին ոչ մի կոնկրետ յիւստակութիւն չես արել զո էջերում: Իր

այս մտքերի փոխանակութեամբ թուում է, թէ թերթը հետապնդել է մի նպատակ. ստեղծելով պլենումում հարցի քննարկման պատշաճ մակարդակ ստեղծել: Սակայն բոլորովին ցանկալի չէ, որ պլենումի աշխատանքներն ընթանան թերթի սահմանած այս մակարդակով:

Շատ հարցեր են հասունացել, կապուած մեր արդի պոզիտիվի հետ (ուչ միայն պոզիտիվի): Մենք ունենք վարպետ բանաստեղծների ճանտչում դատած, սիրուած մի խումբ, որոնցից շատերը, սակայն, վերջին տարիներին խաղում են իրենց վարպետութեան վրայ, նոր վարիացիաներով կըրկնում են իրենց ընդունելութիւն դտած ստեղծագործութիւնները, որ նշանակում է կանգնել, տեղում են անում: Քննել, գտնել սրա պատճառները, եւ առհասարակ խորամուխ լինել մեր արդի պոզիտիվի հարցերի մէջ, կտրուած ողջ Միութեան եւ համաշխարհային պոզիտիվի արդի նուաճումներից, ցանկացած արդիւնքներին չի կարող հասցնել: Իոկ դրանց հետ շաղկապուածը քննելու համար, պէտք է նախապէս կատարուէր մեծ ու լուրջ աշխատանք, որն աւտ՛ղ...

Պոզիտիվի հարցերի քննարկմանը հաւանաբար կը հետեւի արձակի հարցերի քննարկումը: Իսկ պատկերը այստեղ էլ նոյնն է: Գարձեալ տարիներէ վերացական խմբակցութիւններ նորի ու նորարարութեան մասին, սկսեալ արձակագիրները, ի պատիւ իրենց, նոյնպէս չեն ուզում տրորուած ճամբաներով գնալ, դարձեալ զինտարաբանող ճանապարհներով նրանց են հասնում արտասահմանեան գրական հնացած նորութիւնները, երիտասարդներին «իբրազեկ» շրջաններում հոլովում են արասահմանեան գրական այս ու այն արդէն «ծերացած» ուղղութեան, այս ու այն «նորարար» գրողի անունը, որին հետեւելու ջանքեր են անում նրանք, մինչդեռ յիշեալ գրողը ինքն արդէն լքել է իր գիրքերը, իր իսկ «նոր» ճանապարհը նրան «տրորած» ճանապարհներից հեռացնելով բերել նորից յանդերձ է հարորուած» ճանապարհների: Բանն ուր է հասել, որ նման թիւրիմացութեան մէջ է ներթաշուել նաեւ «Գարուսն» ամսագիրը: Իր այս տարուայ Ե-րդ համարում «Գարուսն»ը տպագրել է Յրանսիայում ծնունդ առած այսպէս կոչուած «ճոր վլպ» գրական ուղղութեան աչքի ընկնող ներկայացուցիչներից՝ Ալէն Ռոֆ-Կրիէի յօդուածը, շիշասակելով, թէ երբ է գրուել եւ հեղինակի քանի տարի առաջուայ կարծիքն է արտայայտում այն (ամիսներն անգամ այս դէպքում նշանակութիւն ունեն), խմբագրութեան կողմից կցելով այդ յօդուածին մի փոքրիկ նախարան, որի մէջ առուած է. «Խօսակցութիւնը մինչեւ այսօր էլ շարունակուում է (ճոր վլպ»ի մասին. Ա. Մ.) եւ եթէ մի տասնամեակ առաջ Յրանսիայում ծնունդ առած «ճոր վլպ»ը գրական էքսպերիմենտ էր, ապա այսօր դարձել է հետաքրքիր անհատականութիւններից կազմուած գրական մի դպրոց եւ շահել է ընթերցողների, լայն հասարակայնութեան համակրանքը: Բոլորովին հակառակը, մեզանից ով շատ թէ քիչ հետաքրքրուում է այդ հարցերով եւ հետեւում է թէկուզ «Ինտերտրանսլայ լիտերատուրա»-ի էջերում եղած, շտեմք շատ առատ, նիւթերին, իմացած պէտք է լինի, որ «ճոր վլպ»ի աստղը քանի տարի է, ինչ թեքուել է, մարել է նրա նկատմամբ եղած խանդավառութիւնը, հասարակութիւնը հիասթափուել, սառել, երես է թեքել նրանից, որ «ճոր վլպ»ի առաւել տաղանդաւոր ներկայացուցիչներն իրենք էլ ստիպուած հեռացել են նրանից, բռնել աւանդականի ուղին: Այս բանում համոզուելու համար, Հեռուն չգնանք, բաւական է վերցնել «Նովի միր»-ի այս տարուայ 4-րդ համարը եւ կարգաւ այնտեղ «ճոր վլպ»ի ամենաաչքի ընկնող ներկայացու-



Նատալի Սառառ

ցիւներից մէկի (եթէ ոչ ամենաաչը ընկնող)՝ Նատալի Սառառի «Զուլտիտ պլադի» վէպը, որի հիմքում էլ հենց ընկած է այն, թէ ինչպէս է արուեստի որեւէ գործի, գրական որեւէ երկի, գրողի, գրական որեւէ ուղղութեան շուրջը համբաւ ստեղծւում, փառքն հասցւում մինչև երկինք ու երկնքից նեւում ցած, ոտի տակ տրորւում ու յանձնւում մոռացութեան: Հեղինակը ոչ առանց շարութեան ու մեծ դառնութեամբ պատկերում է այն ճակատագիրը, որ վիճակուէց նաև ճնար վէպին ու նրա ներկայացուցիչներին: Չնայած ձեւի խիստ կաշկանդուածութեանը, հեղինակի բացառիկ տաղանդը, ճաշակը, խելքը զգացնել են տալիս իրենց եւ ասում այն մասին, որ ուր որ է նա նետելու է այդ կապանքները եւ ազատութիւն է տալու իր ներքին առատ հնարաւորութիւններին: Ճրելու համար այն թիւրիմացութիւնը, որի մէջ ընկել է «Գարուն» ինքը եւ գցել իր ընթերցողներին, հարկաւոր է թարգմանել Նատալի Սառառի յիշեալ վէպը եւ նրան կցուած Վ. Լակշինի յօդուածը: Աւելացնենք, որ այդ թիւրիմացութեան մեղքը դարձեալ ընկնում է գրական մամուլի վրայ: «Գարուն»ի հոդուերը շատ են, խնդիրները բազմազան, եւ բնական է, որ եթէ նա փորձի իր վրայ վերցնել նաև գրական մամուլին հասանելիք բեռը, տակից դուրս գալ չի կարողանայ: Իսկ գրական մամուլը, այդ թւում եւ «Գրակալ» ԹԻՒՐՔՅՈՂ, մինչև ե՞րբ պէտք է արդեօք ղեկավարուի ինքնահոսով, շրջանցի հարցերը, հայ արդի գրական շարժումը ղեկավարելու, նրան մղում տալու փոխարէն, գնան նրա պոչից:

Ա. Ս.



ՍԱՍՈՒՆՈՒ ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ, ԿԵՆՍԱԳՐԱՎԷՊԸ

«Համազգային Հայ Մշակութային Հնկե-
բուժան» կողմից այս տարի հեղինակում հրատարակված «Սարբրա Ասլանը» ատուար չքաբ հեղինակ Կարո Սասունին իր երկը տնտեսել է նաև «Գեորգ Զաւուչի կենսագրավէպ»: Ո՛վ է Գեորգ Զաւուչը: Երկար ժամանակ նրա եւ նրա նման գործիչներին մասին Հայաստանում գրեթէ ոչինչ չի գրուել, Հետեւապէս եւ նրանց անունը հիմնականում անտեսութիւն է մնացել լայն հասարակութեանը ու մանաւանդ խորհրդակայ նորահաս սերնդին: Բայց վերջին տարիներու որոշ գրական տեղաշարժեր հղան նաև այդ ասպարէզում ու Գեորգ Զաւուչի էլ ուրիշներին շարքում, այս կամ այն առիթով, սկսեց յիշատակուել պատմութեան չքաբերում:

Այսպէս, օրինակ, «Հայ ժողովրդի պատմութիւն» դասագրքի անցեալ տարի ընդ տեսան երրորդ հատորում՝ փրոֆեսոր Վարդան Պարսամեանը կանչ է առնում նաև 1884-86 թուականներին հայկական կոտորածներին, ինչպէս եւ Սասունին, Զէյթունին, Վանին, Սուէսիոյ, Տիգրանակերտի ու այլ վայրերի հայկական ինքնապաշտպանական կռիւներին վրայ: Վերջիններիս բռնակառութեան հրի ու սրի զէմ ուղղուած հայրերին ինքնապաշտպանական կռիւները, - զբում է Պարսամեանը 338-րդ էջում, - արդարացի, ազատագրական կռիւներ էին: Այդ անհասար, եանք ու դաժան պայքարում նուրիցին ժողովրդական հերոսներ, ազատասէր ու հայրենասէր մարտիկներ Գեորգ Զաւուչը, Սերոբ Աղբիւրը, Մուրադը, Անդրանիկը, Փարսամաղը եւ շատ ուրիշներ: Եւ ա՛հա այժմ, այդ ժողովրդական հերոսներից, ազատասէր ու հայրենասէր մարտիկներից մէկին՝ Գեորգ Զաւուչի կեանքն է ներփայտուած Կարո Սասունու յիշեալ վէպում:

Սասունին իր չքում զոտեղուած հեղինակային բացատրութեան մէջ յայտնում է, որ Գեորգ Զաւուչի մասին կենսագրական վէպ գրելու միտքը իր մէջ յղացել է դեռևս 1825 թուին: Բայց նախ գրել է կենսագրական ուսումնասիրութիւն, որը 1827 թուին ապուել է «Դրօշակ» պարբերականում, իսկ ապա առանձին չքաբով: Բուն վէպի մանրամասն նրագիրը կազմուել է 1932 թուին եւ ամբողջութեամբ աւարտուել 1963 թուին: 1964 թուից ի վեր վէպը մաս-մաս տըլուում էր հեղինակին «Բազմ» գրական ամսագրում եւ հիմա էլ վերջապէս հրատարակ է հանում ամբողջական տեսքով: Նշանակում է, Սասունին արտասովոր շարունակ ապուել է վէպի նիւթով եւ չքուող ասալ երկար ժամանակ վէպի կառուցուածքի, առաջագրանքի ու զորոտութեան շրջանակներին մասին:

Վէպի տեղը որոշուելու համար, ստուշին հերթին, պէտք է նկատի ունենալ նրա ընտրութիւնը, այսինքն կենսագրավէպ լինելը: Սասունին Եւրոպայում է, որ ինքը անձամբ Եւրոպայ է եղել ներկայացուած բոլոր զէպերին ու զէմքերին եւ 1907 թուից սկսած զորոտուել է նրանցից շատերին հետ: Վէպ դարու հոգեկան ապուումներն է որ կը յանձնեմ զարիք սերունդներուն», - այս բառերով է աւարտում իր խոսքը հեղինակը: Ուրեմն, վէպում ներկայացուած է մի ժամանակաշրջան եւ նրա մէջ զորոտում են այնպիսի տնձինք, որոնք իրականում էլ հայոց նարագոյն պատմութեան մաս են կազմում եւ, ուղղակիութեամբ, Եւրոպայ են գրքի հեղինակին: Հետեւապէս, շարադրանքի ընթացքում, վճարան զոր է խաղում մէջ թէ հեղինակի գրական երեսակայութիւնը, այլ նրա յիշողութիւնն ու կենսական ապուարութիւնները պաշարը:

Տասնհինգերորդ դարավերջի և 20-րդ դարակարգի հայ ազգային-ազատագրական պայքարի զանազան զբաղակետերի պատմութիւնը, անլուրտ, այս կամ այն շափով արդէն տրտայտուած է զանազան զբերում՝ քաղաքական-հրատարակարիտական, յուշադրական և զեղարուեստական: Եթէ ամէն ինչ, առայժմ, լինի լուսաբանուած չէ, տնտեսականին, այդ պատմութիւնն իր ամբողջութեամբ վերջրած, այնքան էլ անծանօթ ու մութ չէ: Եստ քան արդէն յայտնի է, իսկ շատ բաներ էլ զեւ պիտի պատշաճ կերպով իմաստաւորեն, իրաքանչիւրն իր հերթին: Եւ ահա, պատմութեան այդ բազմակողմանի իմաստաւորման ընդմէջէն չլքելով զեղարուեստական ողակներէն մէկն է ևս Սասնաւոր վէպը: Վարդան Արմաշու Վսլանը անց Գէորգ Չաւուշի է, որը ժողովրդի կողմից արժանացել է այդ հարգական տեսնելի: Իր ժարտական անունով յայտնի Գէորգ Չաւուշը ծնուել է 1870 թուին Սասնիկի Մաքիթի 28-ին, Տարօնի Սուլուի գիւղում: Թուրքի, ապուել է 81 տարի: Սասնուին իր վէպում ընդգրկում է այդ 87 տարիներէն հիմնականում 23-ը: Սկսում է Գէորգի ծննդն ողակարգի, ընտանեկան մթնոլորտի նկարագրութիւնից, երբ նա արդէն 14 տարեկան էր: Նկարագրում է ժողովրդական ուսուցանացու թիւնը, որին մանակցում է պատանի Գէորգը, բացայտում նրա պատրուկները, զգացական աշխարհն ու կարգը, եւ այլն: Այնուհետեւ Գէորգին տեսնում ենք Առաքելոց վանքի գիւղերովիկ դպրոցում: Մի քանի ասորայ մէջ, ընդարձակում է պատանու մտահորիքները, նա լինում է ազգային-ազատագրական պարտի նորայայտ ուսմիբաների հետ, տեսնում, ոչ զլուս ու վատ աշխարհի մը բարեմը կայ Տարօնի աշխարհին մէջ, և վնասում պայքարի ելնել վատ աշխարհի դէմ՝ յանուն լուսի ազատագրման ու դոյաւտեման: Գէորգ Չաւուշի ժարտական կենքը հիմնականում անցնում է Սասնիկի լեռներում և Տարօնի դաշտում: Եստ կարճատեւ է եղել նրա պատահական ներկայութիւնը այդ մայր լըլաններէն դուրս:

Սասնիկն, անլուրտ, կարող էր ևս սահմանափակուել Գէորգ Չաւուշի մասին ասանում-հակներ առաջ դրան կենսագրական ուսումնասիրութեամբ կամ այն աւելի ընդարձակել: Բայց նախընտրել է հանդէս գալ ծաւալուն վէպով, իսկ ապա բուն մարմնաւորումը, այսինքն զեանգը

բակասութիւնը ներկայացնել վերական լըլանահնում ու մթնոլորտում: Ծանկացել է գիտել շարադրանքի գրական մեծին, որպէսզի անհաս մեծատ աւելի շատ բան ընդգրկի ու պատկերի: Այդուհանդերձ, նա իրականութիւնից զուր ինքնաբու վէպ չի յորիենել, այլ բուն իրականութիւնը պարզապէս ներկայացրել է վերական մեծով: Վէպի անմերը իրական են՝ իրենց իսկական տեսնեցողով ու հանրայայտ գործերով, զէպերը, որպէս կանոն, փաստագրուած են ժամանակագրական յաջորդականութեամբ: Եւ Սասնուս հրկը վէպ լինելուց առաջ՝ վերական-նացում պատմութիւն է, պատկերաւոր իտոզի տնտեսութեամբ հիւսուած վաւերագրութիւն:

Երբ այդպիսի կենսագրութեան է գրուում, սովորաբար հեղինակի հեղինակային ազատութիւնը լըլորին սահմանափակուում է: Քանզի, եթէ ամբողջովին յորիեսուած զեղարուեստական երկերում գործող անմերը երեւան են զայն, այս կամ այն վարժանքը ցուցաբերում ու անհետանում բացառապէս հեղինակի ընտրութեամբ ու նրա գիտութեամբ, յանախ էլ կրում խորհրդանշական իմաստ, կենսագրութեանում սահմանափակ շատ բան արդէն կանխորշուած է ինքնին ևս հեղինակի միջամտութիւնը յանախ չի էլ փորձուում: Այդպէս էլ, սուսուս զէպում, Սասնուս վէպում մարդիկ հանդէս են գալիս ևս որսը գործ կատարում մէջ թէ հեղինակի կամքով, այլ որովհետեւ նրանք իրականում իսկապէս եղել են ևս հիմնականում կատարել իրենց վերագրուող գործերը: Միջոց նոյնպէս էլ այդ մարդիկ անհետանում են մէջ թէ հեղինակի ցանկաւութեամբ, այլ թշնամու զեղակից, ճակատագրի իտոզով կամ անորայ զէպերի ենման ասակ: Թուրքի, հեղինակը լինիին ազատ չէ վերական ինքնուրոյն ընթացք ճշդելու, լըլացուցիչ գրուագրներ ստեղծելու, անխուսափելի կրկնութիւնները կրճատելու, ախպական ընտրութիւններ կերտելու ևս խորացնելու ասպարէզում:

Բայց ևս այնպէս, Սասնուս Վսլանը վէպ է ևս կառուցուած է հանրաճանաչ վերական հիմնաքաներով: Երկը իր բազկացուցիչ մասերով ամբողջութիւն է ևս սկսուում է ճիշդ տեղից ու աւարտում յարմար պահի: Եթէ վէպի ծրագրային կմայիքը ևս ընդհանուր բովանդակութիւնը պատմական որոյակի իրականութեան թողած վաւերական ժամանակութիւնն է, ևս ինքնին զեանգը

ւած դըռնապանները ընտրութիւնն ու դատաւարութիւնը, պատկերումն ու հանգամանակից նկարագրութիւնը ուղղակի հեղինակէ գործն է: Հեղինակի շնորհաւատու շնորհակցութիւնն զգացւում է մտնէ տեղ եւ ժողովրդական բառ ու բանի, զրոյցների օգտագործումը առաւել աշխուժացնում պատուաբար: Մասունի կրկնաւարտութեամբ պատկերում է իր հայրենի եւ սիրելի բնաշխարհը, հայրենի եւ հարազատ մարզկանց, ու զբաղան երեւակայութեան դիմելու շատ կարիք չունի, բայց եւ այնպէս շատ քան է իր կողմից ակնյայտընել, այսինքն ստեղծել: Նա, բացի այդ, նպատակայարժաւոր է դառն նաեւ իր հերոսներին մեծ մասամբ թռեցնել մ'է թէ Մասունի ու Մուշկեանի ստեղծական բարբառով, այլ արդի տրեմատակայ զբաղան լեզուով, ըստ հրեւոյթին մէջը առաւել մասնելի դարձնելու համար: Պարզ ասած՝ պարզութիւնն կատարած չի մնացել երբեմն իրականութեանը:

Մասունու մէջը կենսագրամէտ լինելուց բացի, նաեւ բացայայտ հերոսամէտ է: Այնտեղ գերշնչում է հերոսականութեան անվերապահ պաշտամունքը, շունչն ու պաթոսը: Վէպում անեւում ենք ոչ միայն կենսական զէմք Գէորգ Չաւուշին, այլ ըստ էութեան նոյն կերտըւածն անեցող Արարոյին, Ալբերտ Սերբոյին, Հրայրին, Անդրանիկին եւ բազմաթիւ այլ անունն ու շարքային մարտական հերոսներին: Աւելին՝ անանում ենք մի ամբողջ ինքնամոգի ժողովուրդ, որը առեւի բնութեան հերաններէց զերծ մնալու ճանապարհը որոնում է գերազանցապէս առօրեայ եւ հերոսական դիմագրութեան մէջ: Հեղինակը, թէեւ չի անտեսել կեանքի միւս՝ ոչ պակաս հական կողմերը, այնուամենայնիւ, որսը միտումով շնչող զրի է ժողովրդի բնածին կամ ձեւաւարտող հերոսական ոգու բացայայտման վրայ: Մի հերոսական սղի, որ դարերի անտակարկելի եւ ներսի մասանդութիւնն է, բայց առեւել զէպում վերադառն

արթնանում է հանգամանակների նշման տակ: Այդ պայմաններում, բնականաբար, վէպի գործող անձինք աւելի շատ երեւում են իրենց ընդհանուր, քան անհատական զօնով: Դա անտարակոյս պայմանաւորուած է պատմական ժամանակով ու միջավայրով, ժողովրդի ընդհանուր մտայնութեամբ եւ օրհասական կացութեան հրամայական թելադրանքով: Յիշուելի, երբ մարդիկ անընդատ դառնում են կենաց-մահու պայքարի ոլորտում, նրանք հիմնականում մասնագրւած են լինում ընդհանրական եւ բոլորին պատկանող արժէքներն ու երաշխիքները՝ փրկելու գործով եւ նրանց անհատական իւրաքանչեւ զօնը զբոսւորում են մին շահով, որքան որ առնչւում են եւ նպատակ ընդհանրական իրենցիկների լուծմանը: Այդպիսով ստեղծւում է զբիթէ ճիւղապաղ զհրոսականութեան առօրեան եւ դառնում յափանիլ՝ զէպերն ու զէմքերը զնտատելու, կատարուած գործերի կէտը որոշելու համար: Մասունու մէջը, ակնյայտորէն, չէր կարող խուսափել այդ օրինաչափութիւնից:

Կարօ Մասունու ընտրութեամբ Աւայազն կենսագրամէտ, ժողովրդական ընթերցանութեան զիրք լինելուց բացի, հետազայտ հաւանաբար նիւթ կը տայ նաեւ ուրիշ գրողներին, որպէսզի նրանք էլ իրենց կերթին իրական հիմքի վրայ կերտեն այլուայլ մեծ կամ փոքր երկեր՝ զուտ ստեղծագործական միջամտութեան աւելի լայն իրաւունքներով: Մասունու կերտանքը արտակարգապէս կենդանի վկայութիւնն է, որսը առումով ոտանակար ժայր մատան, կողմորոշիչ Նշանաձող, որն այսօր, համարուած ենք, շատ աւելի կարեւոր է, անփոխարինելի, քան որեւէ զուտ երեւակայական յորինւածք: Դրանով ժողովրդական հերոս Գէորգ Չաւուշը իր գործակիցներով նորից կենք է մտնում, Մասունի եւ Տարանի երբեմնի հայութիւնը երեւում է իր անմասնաւի եւ վաւերական զիմագծով:

Լ. Մ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ ԿԵԱՆՔ



**« ԼԵԻՈՆ ՇԱՆԹ » ԹԱՏԵՐԱԿՈՒՄԲԻ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄՆԵՐԸ**

Նոյեմբեր 1908-ին, Պեյրուֆի Գիւլյենի-
եան Հանդիսարանին մէջ, Համազգայինի Պուրճ
Համուտի Լեւոն Շանթ Թատերախումբը, Վարու-
ժան Խաչիկեանի բեմադրութեամբ ներկայացուց
Անտոն Ձեխովէն չորս պատկերներ՝ «Յարիլեան
մը», «Կարապի երգը», «Ամուսնութեան առա-
ջարկ մը», «Էկրը»:

Անցեալ տարուայ «Սալտիփ Վիուկիները»
Թատերակի բեմադրութեան խիզախ փորձին ետք,
որ կ'աւարտէր որոշ յաջողութիւններ արձանա-
դրելով դերուստաց-դերասան Վարուժան Խաչի-
կեանի անուան դիմաց, հայ բեմը սպասումներ
ուէր, թէ՛ բեմադրիչն եւ թէ սիրող սկսնակ-
ներէ բողբոջած Լեւոն Շանթ Թատերախումբին:
Մէկ արդիւնց չորս տարբեր Թատերակներու
ներկայացումը, շնորհաւ սպասումին զոհացումը,
առանց առաջնորդելու նաեւ հրաժարութեան:
Ձեխովի յատուկ մթնոլորտ մը կայ, որ արտա-
քին զուարթութեան տակ, ներքին արտաքին
մը կը պահէ, եւ մարդկային խորունկ արտա-
յայտութեան մըն է. յայտագրին մէջ տեղ գտած
«Բեմադրութեան մասին» բաժինը այս մասին
կ'արտայայտուի որոշ շափով. իսկ «Էլեղիակի
զորին մասին» վերնադրին տակ զրուած բաժ-
նին մէջ, յայտագիրը կողմորը կը հակասէ թէ
մը անդին արտայայտուած մտանումներուն,
Ձեխովի ու իր տիպարներուն մասին: Այդ հա-
կասութիւնը տեղ գտած էր նաեւ բեմադրութեան
մէջ:

Ձեխով մարդկային տրամութիւնը կը փո-
խանցէ զուարճելի ըլլալու շափ միամտութեամբ,
սակայն առանց խեղդատակութեան, «Ամուսնու-
թեան առաջարկ մը» կտորը, ի զուր փրան-

ած էր խեղդատակութեան մը, սննդիչ եւ ան-
սանելի զոռչտութիւնով, խաղաղութեան շափա-
զանցութիւններով, եամտութիւններով:

Նման խեղդատակութեան մը սահմաննե-
րէն ներս ինչպէս վտանգէն փրկուեցաւ «Յա-
րիլեան մը» կտորը, շնորհիւ Արփի Տատուճեանի
(Խաչիկեան Աշխարհեան) եւ էյո Աւետիսեանի
(Մերչութեան Ճէնտարովնա) խաղաղութեանց,
որոնք խեղդուցիչ ուղտմտախրուած էին, եւ սպա-
րումով, ըմբռնումով արուեստ: Կարապի եր-
գը կտորը, ուր ծերացած դերասան մը, իր
անցեալի մեծութեան կարտով, կ'ողբայ իր ան-
կումը, ներկայացուցուաւ Վարուժան Խաչիկեանի
եւ Միսաք Ապանեանի կողմէ, զրեթէ մութին
մէջ, ինչ որ հանելի չէր հանդիսատեսին համար-
վ. Խաչիկեան ինքը, այլ պարագաներու յատկ
առողջութեան տէր, այս պարագային հասկնա-
լի չէր մինչեւ անգամ մտաբեր նստող հանդիսա-
տեսներուն համար, ուր մնաց սրուի խորքը
նստած, «Ականջը ծանր տարիքոտ կենք», որոնց
եւ յսիկ ըլլալու պարտաւարութիւնը ունի դե-
րասանը, եւ հասկնալի ձեւով անչուլաւ:

Սխալ էր «Կարապի երգը» ըմբռնութիւնը,
միւս, զուարթ արտաքինով կատրերու կողքին.
մէկ արարուածէն միւսը, Նիւթի եւ արտա-
դրութեանց ամողջական փոփոխութիւն մը
պարտադրել հանդիսատեսին, անկարելի չէ, սա-
կայն լատ դժուար է. դժուարութեան լեղի համ
մը կ'առայանայ իրենց մօտ, որ իր սղջնցա-
թիւնը կ'ունենայ յաջորդող արարուածով ներ-
կայացուած կտորին վրայ եւս: Խաղաղութիւնը,
սակայն, յաջող էր, ըլլալով Վարուժան Խաչիկե-
անի ծերացած եւ աշխու անկման մէջ եղող դե-

բառանք խաղարկութիւնը, ըլլա՛յ Միտաք Ան պահանքի քերական, ու նոյնքան լքուած յաշտութարի դերով խաղարկութիւնը:

Յայտարարի վերջին կտորը, «Արքը» կէ ներկայացնէ բազմաթիւ սրբահարուած, ու բազմիցս հիասթափուած, կրկնքէն դառնացած, աքըղի բնաւորութեամբ կալուածատէր մը, որ կը ներկայանայ հազիւ տարիէ մը ի վեր իր ամուսինը կորսնցուցած երիտասարդ այրիի մը, պահակուելու համար ամուսնոյն թողած պարագը: Գոտակցութենէ խօսակցութիւն, մեղադրանք ու ամբաստանութիւն, Արքը կը սիրահարէ այրիին, եւ այրին դուրս կու գայ իր ամուսնոյն յիշատակին յարեանս հաւատարիմ մնալու իր վճարակաւութիւնէն, ինչպէս համար պարտապահանքի թնկերուն մէջ: Արտաբնապէս կարծբացած, սակայն ներքնապէս միշտ դիւրաւ բնկող «Արք» կայտածատրով դերը վարութան հաշտեան մարմնաւորեց սքանչելի բնակչութեամբ մը, ուր սեղանի վրայ երեւան կու պարտաւստաչէս դերասան իր խառնածքը, եւ կարեւորութիւնները: Համեմատաբար տեղի էր անշուշտ, բեմական վարտութենէ զուրկ, Սալփի Տոտոյեանը, էջէնս Իմանովիս Բորովայի դերով, որ սակայն կրցաւ պահել այնպիսի աստիճաններու մէջ, որ Խաղարկութիւնը իր արժէքը պահեց:

Վ. Խաղարկութիւն, իբրեւ բեմադրիչ, Ձեխովեան անձնաւորութեանց ուղիւ էր առկա կրկնութիւն հասկանալու հետ նմանողութիւն մը: Կեանքը համարելով կրկնութիւն մը, ուր մարդիկ կը ներկայանան, իւրաքանչիւրը իր բաժինը կը կատարէ, անձայն, անշուշտ, եւ կը մեկնէ կեանքէն, չըւարձացնելէ կամ տրամեցնելէ ետք հանդիսատեսները, որ միւսներն են, անձեք՝ որոնք կը շարունակեն կրկնութիւնը մեայ: Առայդ, բեմադրարուժը կատարուած էր այնպէս, որ կրկնութիւնը միւսողութիւն մէջ զգար ինքզինք հանդիսատեսը: Բացի այդ, կանաչ, հերմապի, հարեւաբայն եւ զինեզոյն հաղուածներով, հասկանալու Եպտոսով կողմանի անձնաւորութիւններ, սրահը կը լեցնէին իրենց հասկանալին

խաղերով, կատակներով, ալիստեւելով որ բեմ ու սրահը նոյնանան, եւ կրկնութիւնը ապրումը սան հանգիստաններուն: Իւրաքանչիւր կտորի ներկայացումէն առաջ, հասկանալու ներկայացուցիչ կտորին ներքին, զիմախաղով, կամ կողմնակի միջոցներով կը ներկայացնէին հասարակութեան, թէ մը տեղի եւս շեշտելու համար թիմ ու սրահ ու կրկնութիւնը: Գրեթէ յարտաբար, հակառակ մէջ երկու յաջող զիւտերուն, երկուք էին հասկանալու ներկայացման բաժինները, եւ մտքի ճիշտ միայն կարելի էր ուրանել, թէ բեմադրիչին մասնաւոր մէկ նպատակը կը հետպահելին անոնք:

Վերանորոգման, կամ նոր մեծերով արտայայտութեան փորձերը թերեւս զբաւիլ են երիտասարդութեան համար: ու անհրաժեշտ կրնան դառնալ օր մը, երբ մեր հասարակութեանը եւս յազցած ըլլայ թատրոնէն, Եպտոսովով թատերական գրականութեան, արեւեստի արժէքով բոլոր զարմերուն: մինչ այդ, սակայն, պարտաւորել պէտք է համարել բեմադրական վերանորոգումներ, կամ զանազան մեկ բեմական խաղեր, հանգիստանին թատրոնը ուրջնելու համար, անհրաժեշտ է արժէքաւոր թատերակներ ներկայացնել: Ձեխով ինքը, մեծարժէք թատերադրիչ, ունի շատ արժէքաւոր զարմեր, որոնց յաջող ներկայացումը կրնայ փոռագտակ մը ըլլալ թէ՛ դերասանի մը համար, եւ թէ՛ բեմադրիչի մը համար: Ըսել չենք ուղիւ անշուշտ, թէ «Լեւոն Եանթ» թատերախումբը արդէն այնքան փորձառու դարձած է, որ կրնայ Ձեխովի «Երեմի Իոյրեր» կամ «Ձայն» խաղալ յաջողութեամբ: Ըսել կ'ուզենք, սակայն, որ թատերախումբի մը մասնակցող ուրիշները պէտք է առիճանաբար փորձառու դառնան, բեմական թէքնէքն արտաւար կարելութիւնը ունենան, միտմամտակ թատերական գրականութեան աւելի մասէն Եպտոսովի մտքը բերեն, խաղալով ամբողջական թատերակներ, ուր անձնաւորութիւնները իրենք աւելի թանկարժեքալ զոյրութիւն ունեն, կ'ապրին ու կը դիտուին արարուածներու ընթացքին:

Բ. Փ.

ԱՊՐԵՐ ՔԱՄԻՒՒ

ՎԱԼԻԿԻՒԼԱ ԹԱՏԵՐԱԽԱՂԻՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՊԷՏՐՈՒԹԻ ՄԷՋ

(ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ՝ ԺԱԳ ԿՈԱՍԿԵՆԻ ՀԵՏ)

Պէյրութի ֆրեմոսիլի որսի հրահրով, ֆրանսական թատերախումբ մը, լէ Թրէքո սը Տրաւն, յաջորդաբար ներկայացուց Օտիպերթիէ Վարիէը դիս կը վազու, Ալպէր Գամբիէ Վալիկիւառ եւ Թասիէն ՎԵՆԱՐԵ Թատերակները: Մասնաւոր վայելք մըն էր Վալիկիւառի ներկայացումը:

Վալիկիւառ, Գամբիէի երիտասարդ սարիճքն զբաղ թատերակն է, ուր Բրիտանիայի ետք առաջին դարուն սպարոն Հոմէրոսի կայսեր կեանքը օգտագործելով, կը ներկայացնէ կեանքի անհնարանութեան գիտակցութեան դիմաց, անհասի երկնաբանքը, արդիւններով մը ընտրութեան համար: Կամ, զիտակցելով հանգիստ մէն ինչի անհնարանութեան, անհասուն կեանքի անձամաստութեան, անհասուն պիտի համակերպէ մաս կազմել ծիծաղելի, խաժանկարի կուսակցութեան մը: Ինչն ալ զանաւորով արտասովորաբար մէկ մասնակէր անոր, որ կը համակերպէ, Ծուռի կու զայ ուրիշներու զբաղ օրէնքներուն առջև, եւ կ'աշխատի բարեկամութեան, կամ սիրոյ զգացումներու մէջ զանկէ փորձել ազդելու մղող զիմաստ մը կեանքին: Եւ կամ, անզրոգանալէ ետք անհնարանութեանը մէջն ինչ, իրրեւ կեանքի միակ կարեւորութիւն, պէտք է ընտրէ ամբողջական ազատութեան ճամբան, հետեւելով այդ պարագային իր գիտակցութեան արտաբանութեան, մինչև Թայր, Վլաւի ու վատի ըմբռնանքներն այն կողմ, ընկերային օրէնքներու համաձայն ընդունելիքն եւ անընդունելիքն սահմաններէն այն կողմ:

Կայլիկիւառ, ըլլալով կայսր, կ'ընտրէ այս վերջին ճանապարհը: Եւ իր շրջապատին կը նմանէ առանձին, սակայն ամենակարող, ուսիզ մարդու մարտահրաշքը: Կայսր, կը նշանակէ

բարբառ իր կամքին ենթակայ պիտի ըլլան: Ամէն ինչ, որ արտաբանակաւորէն հասկնալի է, ներքին է իրեն: օրինակ, պահանջել մեծամեծներէն, որ իրենց կամէր ընեն ի նպատակ պետութեան, ապա ուղաննել այդ մեծամեծները, պետութեան զանձը լեցնելու համար: կամ՝ շքանշան մը հաստատել, որ պիտի որսի միայն անոնց, որոնք մէկնէն շատ յոճաբան են պետութեան հաստատան պոնկիտանը, եւ այդ մեծով նպատան պետութեան անտեսութեան ստղի մը նայուն:

Այս բարբառ, արտաբանութեան նոր արտաբանութիւն, անհնարանութեան նոր անհնարանութիւն, բնականաբար, կ'առաջնորդէ շարժիչները մ'ի կարծիքին, Բէ կայսր խնկնացն է, եւ ինքզինքին ազատելու համար պէտք է զան մէկնալէն վերջնել: Կայլիկիւառ եւս կը հասնէ այն եզրակացութեան, որ այդպէս շքանշանակէ կարելի չէ, պէտք է որ զայ ինչ որ պիտի գոյ, ինք պէտք է որ սպաննուի: Իր սպանութեանը, մարդոց ընթացիկ օրէնքը կը վերահաստատուի, կարգն ու կանոնը իրենց տեղը կը գտնեն: Կայլիկիւառ սակայն, մնաւ պահուն իսկ կը պահուի՝ ՎՊ կ'ընդամի եմ: Կայլիկիւառները կ'ապրին նաեւ այսօր, կան նաեւ այսօր:

Թատրոնի, արուեստագէտ հնչեանքն ու արուեստագէտ զերտանը իրար զանկելով, իրական թատրոնի վայելք մը եղաւ Վալիկիւառի ներկայացումը: Եթէ երկրորդական անձուարութիւնները, մեծ մասով, չունենին բառական իրական կեանք, եւ բառաբար չափով նիւթ՝ լառ իտալիականութեան մը համար, եթէ երկրորդական գերբարձր բեմ բարձրացող զերտաններէն սմանք իրենց չունենին բառաբար լափով Բէքիէ, ու արուեստ, կեանք տալու համար միջին անգամ կ'ը

սովին զարգացումն անձնագործիներուն, կար սակայն ժաջ կատարելը, հաշիկիւն մարմնաւորող զերասանը, որուն խաղարկութիւնը, զերասանական արուեստի զլուծ-զարծող մը կզուս:

Իւրաքանչիւր շարժում, մարմնական կեց-ւածք, նայուածք, մայրական շնչոյ, նախազատութեան արտաբերում, ուսումնասիրուած եւ լրումին հասած կատարելութիւն մըն էր: Ժաջ հաս-կէն, առանձինն կը լեցնէր բեմը, կը զբուէր սրահը, մոռցնէլ կու սար երիտասարդ Պամիւ Քատիւզարի կառուցումի այլ թերիները: զը-քերու անհոթիկն կեանքի կը կանչէր մարդը, որուն տառապանքը սահման չունէր, երբ կը մասնէր, թէ ՎՄարիկի կը մեանի, սակայն եր-բանիկ չիմ: Թիւղարութեան հանոյ մասհա-ւածանքները, սպասումը, շրջանոյ սպասումը, բանի մը, որ իմաստ պիտի տայ, որ կարելի պիտի զարմնէ կեանքը իրեն համար: Սպասումը մասհան, վերջին արարուածին, վար-զոյրի ինչիւն, որպէսզի ինքն իր հետ արա-մարանական միացած ըլլայ, եւ արամարանական եղբակցութիւնը իրականանայ: այս բաւորը զե-րասանի աչքերուն մէջ էին, մայրն մէջ էին, մարմինն հետ նոյնացած: Պամիւ Վիլիամս կ'աղբէր բեմի վրայ: մեռաւ բեմին վրայ:

Այդ է սանդղագործութիւնը: բեմական ար-ւեստի էութիւնը: Մեծարէք զերասան մըն է ժաջ հասակէն:

Տեսակցութիւն մը խնդրեցինք Վիլիամսի կողմէ, զրուցելու համար իր արուեստի ըմբռ-նողութեանց, Քատրոնի եւ Քատրիական անձնա-ւորութեանց մասին: Ընդատանց սիրով:

ՀԱՐՅՈՒՄ.- Ի՞նչպէս հաստի վերաբերուած յին:

ՊԱՏՄԱՆԱՆ.- Նախ մի բնուեցայ Պամիւի գործերուն մէջ: շարժումը տարի, կարգացի զրե-թէ իր բոլոր գործերը: Ապա, մեծարկեցի երկ-րորդ, աւելի գծուար բաժնին, իր անձնագործ-թիւնը բացատրելու, ներկայացնելու աշխատան-քին: Այդտեղ բաժնի մը ունի անշուշտ բեմագրե-լը, որուն պարտականութիւնն է գրուածքի բա-ցատրութիւնը տալ, ի՞ր բացատրութիւնը, որուն պէտք է հետեւի անշուշտ, աշխատի նման, գե-րասանը:

Հ.- Այ՛ն. սակայն մի խաղարկութեամբ մէջ աւելին կար. մեր անձնական հարստութի-ւնը կար, որ ըրաւ այնպէս, որ ամենամեղի

վերաբերուած մը տարի: Ի՞նչը գրուած է մեզ ամենին աւելի, կայիկիւնյի անձնագործեամ մէջ:

Պ.- Ի՞ր անձնագործութիւնը թերեւ, սեւա-բար չհասկցուած մնալը:

Հ.- Ի՞նչ է մեր կարծիքը, վերաբերուած քատրիկի մասին, իբրեւ քատրիկան գրակա-նութիւն: իբրեւ քատրիկան կառուցում:

Պ.- Իբրեւ գերասան:

Հ.- Ոչ: Ձեր դերը քաղած մէկ կողմ. իբ-րեւ կառույց. իբրեւ արողարկում: Կողմակի անձնագործիները եւս ձկարի տոն, չէ՞ք կարծեր, որ միւս անձնագործիները քաւա-բար չափով կեանք չունին, բացառաւ չափով զարգացում չեն քատրիկին մէջ:

Պ.- Միւս անձնագործիները զուգահե-կը զուին կ'աւելիւլային: Կաւելիւլոյն չէ կրնաք ըլլալ, առանց միւսներուն: անոնց հետ համե-մատուելով է որ յառաջիկայաց մը կայ Կաւելի-կիւլայի անձնագործութեան մէջ: Երեք որ ան-տառներուն մէջ անցընելէ ետք, երբ պատահ կը վերադառնայ, իր առաջին հանգիպումը Հիւրոնի հետ է: Կ'աշխատի բացառաւ ինքզինքը, եւ կ'անզբազանայ, թէ պատի մը կը բախի: Հե-տը կ'ստի կ'անզբազանայ, թէ զինք լըշապտ-տողները, բոլորն ալ, պատի են: իրեն կը մնայ անոնց համար զիք մը թաղալ, եւ աշխատել ինքն իր հետ արամարանական մնալ:

Եթէ միւս անձնագործիները բացառա-ւոր անհատներն աւ զարգացում չունին, պատեա-րը Պամիւի երիտասարդութիւնն է: պէտք չէ մտնալ, թէ քանակիկն տարիական զբան է այս թատերակը, եւ ուզած է մէկ անգամէն ամէն ինչ գնել այնտեղ:

Հ.- Ի՞նչ յարողարկում գտած է վերաբերու-լան այլոք:

Պ.- Հեղաշայտան. ամէն կողմ:

Հ.- Դիտելով մեր խաղը, այն տղաւորու-թեամ տակ էինք, թէ գու՛հ պիտի է սիրէ՞ Փի-քանտլլոն, աւ մտաւանք անք ՎՀանքի Զոր-բորդը:

Պ.- Միայն չէք, զեւ անցնալ տարի, Կոլի ֆետիթիլային ՎՀանքի Զարգորդը կը մարմ-նաւորէին: Փիքանտլլոն կը համարեմ իր մտա-նակի ամէնէն ներկայացուցչական գէժքը:

Հ.- Կ'ըսեն, թէ Փիքանտլլոն իր ՎՀանքի Զորբորդին մէջ գտած է Շեյքսպիրեան շնչոնք, եւ այդ գործով ամենակ պիտի մնայ:

Պ.- Զեմ գիտե՞ր, թէ Շէջըփրեան լեռ-
տեք գտած ըլլալու՞ն էր համար է թէ ոչ, սակայն
այո՛ւ, այդ զործը մեծարժէք զործ է, եւ կրնայ
զինք անմահութեան ասեմը:

Հ.- Նախընտրութիւն մը ունի՞մք քստե-
րական այս կամ այն գաղափարն վերաբերմամբ.
իրազայտ, բնութեամբազայտ, կամ ներկայիս յա-
նազապահ կոչուած քատրանք, իսկուսո, Պէճէք:

Պ.- Ինչէնչոյն շտապք թատերակը խաղ-
ցած եմ: Ինչպէս ինչ եւս կ'ըսէ, իր թատերը
փորձ մըն է, վերջնական ձեւ մը չէ: Մտածուար
նախընտրութիւն մը չունիմ:

Հ.- Իսկ անմահութիւններն ք՞րք, կամ
արս՞նք կը նախընտրէ՞ք ներկայացնել:

Պ.- Մտածուար նախընտրութիւն մը ունիմ
Շէջըփրեան անմահութեանց հանգէպ:

Հ.- Համա՞րք:

Պ.- Համէ՞ք է մտածուարք, որ մարմնա-
ւորելու առիթը ունեցած եմ արդէն: Համէ՞ք
յայտնութիւն մըն է ինչի համար:

Հ.- Ի՞նչը կը գրաւէ ձեզ այս կամ այն գե-
րին մէջ:

Պ.- Ուսուցանութիւնը. անմահութեան
երեսները, միտաւ ըլլալը, մէկէն ասելի մա-
կարդակներու վրայ ըլլալը, խորութիւնը:

Հ.- Ի՞նչ խորհուրդ կաւ տայիք սիրող գե-
րտասաններուն, ծառայելու համար քատրանքին:

Պ.- Մեաւ սիրող: Սիրող բառին մէջ Սէք
բառը կայ. պէտք է մասն թատերը սիրողներ,
ստանց մտանելու արեւասի մասցեալ, միւս բա-
ժիններուն եւ գծուարութեանց մասին:

Հ.- Իսկ գործնական ի՞նչ խորհուրդ կըր-
նայիք տալ իրենց:

Պ.- Եարլ Տիւլէնի ասուած խորհուրդը՝
անխոցելի անողանութիւն մը ունենալ, ձեռք
բերել, ապա՝ կարենալ տեղափոխուել բեմին
վրայ ազատօրէն, անկաշկանջ ու բնականու-
թեամբ, եւ վերջապէս ունենալ բաւարար զգայ-

նութիւն, կարենալ որակին փոխանցելու համար
զբուսեցին զգացումները:

Հ.- Դուք էրք բնմ կը բարձրանա՞ւ, ամէն
անգամուն Յո՛յն խաղը կաւ տա՞ւ, քէ ոչ իւրա-
հանչիւր անգամուն փոքրիկ տարբերութիւններ
կամ, նորաքիւններ կամ:

Պ.- Ամէն ինչ կախում ունի հանգիստ-
տեսներէն: Պաշարկութեան յիստն առ հարկերը
կախում ունի հանգիստեսներէն, որոնց լուս-
թեան որակը, ուշադրութեան որակը, հոգեկան
մասնակցութեան լուրջ իր արժանակաւորը կը
զսնէ բեմին վրայ, զերաստի հոգիին մէջ:

Հ.- Կը կարծէ՞ք, քէ քատրանք մասնաւոր
պարտականութիւն մը ունի, պէտք է ծառայէ
նպատակի մը. ինչպէս, օրինակ, Պրէքք կը
կարծէք:

Պ.- Ամէն ինչ կը հոլովուի, եւ իր ժամա-
նակին հետ կը գալէ. այդպէս ալ արուստի զա-
նազան ճիւղերը՝ նկարչութիւնը, երաժշտութիւ-
նը, թատերը: Տպաւարապաշտ նկարիչներէն
մինչեւ Փիւպիզ ու Փիքսոս, հոլովայթ մը կայ:
Թատերը, կամ թատերի մասին ըմբռնում-
ներն ալ անշուշտ հոլովայթի ենթակայ են. Պը-
րէթթ իր ստանիին, իր ժամանակը կը ներկայա-
ցնէ, Սարթը, Քամիւ նայպէս: Թատերն է
բան մը պահանջող չկայ իրականին մէջ. Թատ-
րանք ինքիբեանն է որ կը պայթի, փոփոխու-
թեան կ'ենթարկուի ինքն իր մէջ:

Հ.- Վերջին հարցում մը. ինչպէ՞ս գտա՞ք
Պէյրուքի հասարակութիւնը, եւ կը մտադրէ՞ք
կրկին Պէյրուք վերադառնալ:

Պ.- Աջանչիի հասարակութիւն մըն է. իր
լուսթեան ու ուշադրութեան ուսուցանութեամբ:
Անկեղծօրէն, խորապէս սպաւորուած եմ, եւ կը
փափաքեմ կրկին վերադառնալ Պէյրուքի. Թե-
րեւս ուղղակի Պէյրուքի մէջ բեմադրութիւն մը
կազմակերպել...

Բ. Փ.





«ՀԱՅԿԱՇԷՆ ՏՈՒՉՈՒՆԵԱՆ»

ՄՐՑԱՆԱԿԻ ՉՈՐՍ ՄՐՑԱՆԱԿԱԻՈՐՆԵՐԸ



ԱՐԱՄ ՀԱՅԿԱՉ

Մնած եմ Շապին Գարահոսար 1900-ին: Հօրս անունը Արսէն էր, մօրս անունը՝ Իւղարբեր: Յաճախեմ եմ ծնրնդավայրիս նախակրթարանը ու ստիպւած եմ զայն լքել չորրորդ դասարանին:

Չորս տարի մնացի Գուշկերի չըջանին մէջ, քիւրս բէկի մը դիւղը, անցընելով ապրումներով ու արկածներով հարուստ կեանք մը: Հետագային գրականութեանս համար առատ ու հետա-

քըրքրական նիւթ հայթայթեցին այդ տարիները:

Չինադադարէն ետք փախայ զիւրտերու քովէն ու ձեւով մը հասայ Իսթանպուլ: Հոն Կեդրոնական վարժարան յաճախեցի մէկուկէս տարի: Չորրորդ դասարանն էի, երբ Ամերիկա գալու համար լքեցի զայն ալ:

Հիմա կ'ապրիմ Նիւ Եորք: Ամուսնացած եմ: Ունիմ երկու զաւակ ու երկու թոռ:

Առաջին անունս Արամ է: Մականունս՝ Չէքէմեան: Հայկազը՝ ինձմէ երկու տարի մեծ եղող եղբորս առաջին անունն էր. իր քաղցր յիշատակը ձեւով մը տեւականացնելու առաջադրութեամբ կցեցի իմ առաջին անունն ու գործածեցի որպէս գրչանուն:

Որպէս գրական վաստակ պատմբուս ընկերու չորս հատորներ ունիմ: «Յնդիմ Չայնը» Ա. եւ Բ. հատոր, «Չորս Աշխարհ» ու «Պանդակ»:

Մրցանակի արժանացած «Պանդակ»-ին մէջ, իր իսկ բացատրութեամբ, «Բագմազգի մարդիկ ու բազում դասակարգերու անհասուներ կ'ապրին խաղաղ ներդաշնակութեամբ»: Արդարեւ, մեկնելով իր հայրենի տունէն, հեղինակը կ'անցնի Բիւրախտանի լեռները, ապա Իսթանպուլ ու Ամերիկա եւ գրադէտի անվիճելի տաղանդով ու հարազատ ապրումով կը ներկայացնէ բոլոր միջավայրները: Իրենց խայտառղէտ մարդերով:



ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Ծնած է 1909-ին, Չժշկածագի Հոգաբարի գիւղը: Հօր անուն Վահան, մօր անուն Սաթենիկ, 6 զաւակներու երրորդը: Ապրած է հասե Իսթանպուլ, 1919-1922: Հայերէն կը սորվի Ետիզուէի ողբանոցը, ապա տարեկանին: 1922-24 Բորժու եւ Աթէնք, ապա Ֆրանսա՝ 1924-28: Նիւ Եորք կ'անցնի 1928-ին, ծնողքին ու միւս հարազատներուն մօտ: Գործարան աշխատիլ սկսած է 14 տարեկանին:

Խմբագրած է «Նոր Գիր» ամսաթերթը (1936), Նիւ Եորք: «Նոր Օր» (1937-58), Ֆրեզո, «Պայքար» օրաթերթը եւ «Պայքար» եռամսեայ հանդէսը, Պոսթըն:

Ցարդ Հրատարակուած երկերն են. «Ապիստակ Արդարութիւն», «Վերջին Կայանք», «Խոսեցր», «Սփիւտքը եւ Հայրենիք», «Տարագիր Երկիմէի Տակ» եւ այլն:

Մրցանակի արժանացաւ իր վերջին գիրքը, «Տարագիր Երկիմէի Տակ», ուր հեղինակը հաղորդական, ջերմ ապրու-

մով ու գրագէտի տաղանդով կը ներկայացնէ Սփիւտքի մէջ ապրող հայերը իրենց գառն վիշտերով, տուախանջներով ու սիրելի յոյսերով:



ԳՈՐԲԻԷԼ Յ. ՍԻՄՈՆԵԱՆ

Ծնած է 1886-ին, Ամասիա: Աւարտելէ ետք Ամասիայի Իրրանոսեան առեւտրական Վարժարանը, պատասխանատու պաշտօններ կը վարէ Իրրանոսեան առեւտրական հաստատութեան մէջ, Ամասիա եւ Սաժսոն:

Համալիարհային Պատերազմի տարիներուն, շնորհիւ թրքերէնի իր հրմտութեան, պետական հաստատութիւններու մէջ կարեւոր պաշտօններու կը կոչուի եւ կը յաջողի օգտակար ըլլալ բազմաթիւ Հայրենակիցներու: Զինադադարէն ետք կը վերադառնայ Սաժսոն, սակայն կը ստիպուի անցնիլ Իսթանպուլ: Այնուհետեւ առեւտրական գործով



կ'այցելէ Եղիպտոս, Յունաստան եւ Իթովիա: 1933-ին վերջնականապէս կը հաստատուի Կիպրոս, ուր կը հիմնէ իր առեւտրական տունը. առեւտրական տուն մը կը հիմնէ նաեւ Մանչեսթըր, 1949-ին:

Ան մտէն հետաքրքրուած է մեր ազգային գործերով եւ ազգային պատասխանատու պաշտօններ վարած է դանական գաղութներու մէջ:

Տարիներու տընայան աշխատանքով եւ իր անձնական միջոցներով լոյս ընծայած է «Յուշատետքի Պոետական Ամսօր» գիրքը, որ արժանացաւ 1967-ի Հ. Ռեզունեան Գրական Մրցանակին:

Այս պատկառելի հատորը, աւելի քան հազար էջերու մէջ, 150-է աւելի նկարներով եւ չֆելդ տպագրութեամբ, համազրումն է երկարամեայ լուրջ պլուրտումներով ձեռք բերուած թանկագին ծանօթութիւններու՝ պատմական լրջանի կարեւոր մէկ ընկալվայրին մասին:



ՀՐԱՆԴ Բ. ԱՐՄԷՆ

Տարիքս 70: Թրքախօս հայ ընտանիքի զաւակ: Կանուխէն որբացած: Պատանի տարիքիս Ամերիկա եկած: Գործաւոր: Ամերիկեան բանակի զինուոր: Իրաւաբանական վարժարան:

Անցեալի մէջ փորձած եմ ինքնակենսագրութիւնս խտացնել ըստ կարելոյն: Հետեւեալ երկու տողը կատարեալ դտած եմ.

Օրապահիկս օրէնսդիտութիւն,
Հողեպահիկս Հայոց Պատմութիւն:



Հրանդ Բ. Արմէնի ցարդ հրատարուած գործերն են.

«Մեծն Տիգրան», «Եսրեմացի», «Սգիշէ եւ Սպարապետը», «Քննադատները եւ Հ. Ներսէս Այինեանց Մարգպանը եւ Սպարապետը», «Քննադատները Ձգայնացած են», «Պատմափիւղը Խորհեացիի Քննադատութեան», «Պապ Արշակունի», «Փառանձմն Թագուհի» եւ «Անկում Արտաշէսեան Հարստութեան»:

Իր վերջին գիրքը, «Անկում Արտաշէսեան Հարստութեան», պատմական լուրջ ուսումնասիրութիւն մըն է, որ կ'ընդգրկէ Արտաշէսեան Հարստութեան վերջին 55 տարիները: Հեղինակը լայն չափով օգտագործած է պատմական քաղմաթիւ, հայ թէ օտար աղբիւրներ ու յաջողած է, խոր վերլուծումներով, յանդիւ ճշգրիտ եզրակացութիւններու: «Անկում Արտաշէսեան Հարստութեան» գիրքը մրցանակի արժանացաւ:

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԵՍ

Պուէնոս-Այրէսի «Մարիանո Աքսոթա» մանկավարժական երկր. վարժարանի մէջ կազմակերպուած է հանդիսութիւն մը, նուիրուած հայ մշակութիւն:

Բացումը կատարած է դպրոցի տընորէն՝ փրոֆ. Մարիո Լուսերո Լոփէս: Ան յայտարարած է, թէ հանդիսութիւնը կազմակերպուած է ի յարգանս հայ մշակութիւն եւ իրենց նպատակն է ծանօթանալ հայ ժողովուրդի հարուստ ժառանգութեան:

Դասախօսած է փրոֆ. Մարգարիտ Տօրէնեան - Տիրատուրեան: Պատմական տեղեկութիւններ տուած է Հայաստանի, հայ ժողովուրդի եւ հայ մշակութի մասին:

Գործադրուած է գեղարուեստական ճոխ յայտագիր մը:

Լապտերներով ցուցադրուած են հայկական ճարտարապետութեան եւ մանրանկարչութեան գեղեցիկ նմոյշներ եւ տեսարաններ՝ Երեւանէն: Ցուցադրուած են նաև ջարտէսներու վրայ գծուած ներկայ Հայաստանը, տարագիր հայերու բնակած վայրերը, ինչպէս նաև հայկական հին դրամներ եւ այլ առարկաներ:

ԿՈՄԻՏԱՍԻ

ՆՆԻՐՈՒՄԻՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Հայ երգի անգուգտկան վարպետ Կամիտասի ծննդեան հարիւրամեակին առիթով, Փարիզի «Սիփամ-Կոմիտաս» երգչախումբը, ղեկավարութեամբ խըմբավար Կարպիս Ափրիկեանի, Գեկտեմբեր 7-ին, մեծ ու փայլուն համերգ չը տուած է «Սալ Կավօ»-ի մէջ, ի ներկայութեան խառնեքամ բազմութեան մը: Համերգը Կոմիտասեան իսկական

փառասուն մը եղած է եւ չերմ գնահատման արժանացած:

ԼԵՒՈՆ ՄՈՒՄՃԵԱՆԻ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Լիբանանահայ նկարիչ Լեւոն Մում-ճեանի ցուցահանդէսը տեղի ունեցաւ Գեկտեմբեր 18-ին, «Կալըրի վանտա»-ի մէջ: Իր երբորդ ցուցահանդէսն էր որ կու տար երիտասարդ նկարիչը: Յուշարարութեան դրուած էին շուրջ 80 նկարներ:

Լեւոն Մումճեանի նկարները արդի նկարչութեան կնիքը ունենալով համընդհանր, դասական ոմ մը ունին: Գծուած են ապրումով եւ գրաւիչ են:

ՄԱՅՔ ՔՐՄՈՅԵԱՆ ՄՈՍԿՈՒԱ ՀՐԱԽԻՐՈՒՄԸ

Ամերիկահայ անուանի երգիչ Մայք (Միքայէլ) Քրմոյեան (պատասփրանօ) Մոսկուա հրաւիրուած է, «Պալլոյ» օփերային մէջ երգելու համար:

Քրմոյեան ամերիկացի առաջին քաղաքացին է, որ կ'արժանանայ այս պատիւին: Միւս արուեստագէտները այցելու երգիչներ եղած են:

Մայք Քրմոյեան խորհրդային արուեստագէտներու ուշադրութիւնը գրաւած է Մոսկովայի 1967-ի համաշխարհային ցուցահանդէսի ընթացքին:

ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԳԱՀԻՐԷԻ ՀԱԶԱՐԱՄԵԱԿԻ ՀԱՆԻՒՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Իրամ Եգիպտոսի չարբորդ մայրաքաղաք՝ Գահիրէի ծնունդին եւ հիմնադրութեան հազարամեակի տօնակատարութիւններուն իր մասնակցութիւնը պիտի բերէ ճաւի եգիպտոս ծնած, ճախկին եգիպտահայ, աշխարհառչակ երգչուհի Գոհար Գասպարեան (սփրանօ):

Հանդիսութիւնները պիտի սկսին Յունուար 3-ին:

Որգչուհին պիտի երգէ օփերայի բեմին վրայ, Քիւնի օփերայի թեմաք Անտրէ Իշէմֆոյի հետ:

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

Տեղի անձկության պատճառով՝ Փետրուարի համարին վերապահեցինք այս թիւին համար պատրաստուած հետեւեալ ձեռքերը՝

- Ա) «Միջազգային Գրական Մրցանակներ» («Բագին»)
- Բ) Հայկ Ղազարեանի «Արեւմտահայերի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կացութիւնը 1800-1870 թթ.» (Լ. Մ.)
- Գ) Արքեան Ալիքեանի «Այբեր»ը (Պ. Ս.)
- Դ) Նշմարներ

« Բ Ա Գ Ի Ն » Ի ՖՈՆՏԻՆ

Արշաւիր Շիրակեան (Նիւ Եորք) 100 տոլար կը նուիրէ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (Պատմական), Ալեքսանգր Խատիսեան, «Համազգային» տրպարան, Պէյրուք, 1968

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆԵՆԳԱՓՈՒՅՈՒՄԸ (Պատմական), Բ. Փափազեան, Պէյրուք, 1968

ԺՈՂՈՎՈՐԴԻ ԹՇՆԱՄԻՆ, Հենրիք Իբսէն, քարգմ. Լեւոն Շանթի, հրատարակութիւն «Համազգայինի Թատերասերներու Միութեան», թիւ 2, Պէյրուք, 1968

ՀԵԼԼԵ, ՀԵԼԼԵ, ՀԵԼԼԵ ՔԵՍԱՊ (Երգիծական), Գեորգ Արէշեան, Պէյրուք, 1968

ՄԻՍՏԻԿ ՃԱՆԱՊԱՐՀԸ (Խորհրդածութիւններ), Բարգէն Վրդ. Թովնեան, Պէյրուք, 1968

ՏԱՐԻԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՐ

ԼԻԲԱՆԱՆ 22 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍՍԱՀՄԱՆ 8 ՏՈՒՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ :-

G. SASSOUNI
Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@